



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

510

ՀԱՅՈՍՏԱՆ Տ.

Բայցու



ԿԵՐԵՒՄ

1877



Վ Դ Հ Հ

Ա Բ 354

# Թ Գ Զ Ե Ա Ր Ա

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Բ Ե Խ Ա Ն Ե Բ Ի Հ Ա Մ Ա Ր

Գ Ր Ծ

Ֆ Ա Ռ Ա Յ Ց - Հ Օ Ֆ Ֆ Մ Ա Ն Ի

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

## Ա Ր Շ Ա Լ Ո Ւ Թ Ի

(Ա)

2004

Տ Փ Ե Ւ Ս

Առաջարանի Յովհաննեսի Պարտիբունից:

33-93  
2-96

1877

83-93

6023

3-96

ԱՐ

# ԹՐԱՎԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

9047 31812

ՏԵՂԻ ԽԱԼ 12 ԺՈՅՆ ԱՌԵՎՈՐ ՕԿՈՅՈՒ  
ՖԻԱ 3 - ՀՕՅԵՎՈՐԻ

Թարգմանութիւն

ԱՐՃՈԼՈՒՄ

(Ա)



ՏՓԽՒՈ

ՅԱՅ ժողովի տպարանի Յովհաննիսի Մարտիրոսյանց:

1877

Ա Գ Ա Ժ Զ Ա Գ

ՎՐԱՆԱ ՇՐԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հօվութեան պահանջման առաջարկ

Հօվութեան պահանջման առաջարկ

ՎՐԱՆԱ ԺՐԱՑԱԾ

(II)



ՎՐԱՆԱ

Տիգրաֆիա Մարգրոսիանց, ու Օրբելյանովսկու պատութեան համար Ն<sup>o</sup> 5.

ՀԱՅԱՍՏԱՆ

Իւր Հայրակնամ

Ուսուցիչ

ԹԱՐԳՈՅ ՄԿՐՏԻՉ ԱՐԱԲՈԶԵԱՆՑԻՆ

ՆՈՒԵՐ

ՆՈՒԱՍ

ԹԱՐԳՈՅ ԱՐԱՅԻՑ

Ի նշան երախտապիտութեան.

ՆԱԽԻԱՂԱՐԴ ՊԱ

ՀԱՅՈՒԹ

ՕԳՅՈՒԹԻՒԹԻՒՆ ԶԵՂԿՈՒՄ ՏԵՐԱՎՈ

ՀԱՅՈՒԹ

ՀԱՅՈՒԹ

ՀԱՅՈՒԹԻՒՆ

Ա ուստինակ ու յառաջաւ ու պահանձ բայ ԱՅ Դար  
քամեց մասն ապա սդանի ։ Ըստ ԱՅ Քիրայն  
և Խոր ցըցըսու գաւութ խանուն մասնաւթեան  
առեր խանունու ցըցըսուն մարդ առ զար ԱՅ  
Դար ցըցըր ոչ ողանակաց լորանոն դանի ։ Ըստ  
Խոր խանուն ծարաւա և զամա՞ այնիւ պահաւ  
բայ օպանց բանի մաժաւանի աշխանց առ մայ ոյ

ԳԼՈՒԽ Ե Ծաղար զի Խոր ոյ

ան ուստի բան անաւ ցըցըսու լորանո ։

Ա մասնաւ ան անաւ ան ուստի բան ան

Ա մասնաւ ան ան ան ան ան ան ան ան

Հարցեան լեռների մի գեղատեսիլ և բնու  
նութեամբ կենդանի հսկառում զտանվումէ մի փոք  
րիկ զիւզ որ գետեզուած է մի այնպիսի առանձ  
նացուած անեկիւնում, որ կարծես բաժանուած է ամ  
բազ աշխարհից։ Այս գիւղը ամենայն կողմից շըր  
ջապատուած է լեռներով, որոնց գագաթները ծած  
կուած են չաճարեայ և եղենեայ ակրեախիա ան  
առառվ, սօրա մէջ շինուած են զանազան ուղղու  
թեամբ շինուղիներ և շատիներ հետեակ անցորդ  
ների համար։ Աարելի է ենթագրել թէ այժմ ևս  
այս զիւղում բնակվում են այնպիսի տնակեաց մար  
դիկ, որոնք երբէք չեն բարձրացել շըջակայ լեռների  
գագաթները, երբէք չեն կուարձացել այն զեղեցիկ  
տեսարանով, որ բացվում է լեռների վերայից միւս  
կողմը նայողի առած ։ և կտրելի է չ'գիտենային ան-

գամ, թէ այդ լեռների միւս ստորոտը ևս բնակվում  
մարդիկ, եթէ լսած չ'լինէին դորա մասին իւրեանց  
մանկութեան ժամանակ եկաւոր ուսուցչեց, կամ ե-  
թէ մինը այս կողմի բնակիչներից ժամանակով զնա-  
ցած չ'լինէր մօտագայ քաղաքները, իւր ցորենը կամ  
ալիւրը ծախելու համար և ստացած արծաթով զնե-  
լու այն անհրաժեշտ կենսական պիտոյքները, որոնց  
գիւղում չէր կարելի ճարել:

Մօտակայ բլուրներից, մանաւանդ ամառ ժա-  
մանակ, կարելի է մեծ բաւականութեամբ զուարձա-  
նալ այս կանոնաւոր շինուած գիւղի տեսքով, որի  
տների միջի տարածութիւնը բաւականին լցն է:  
Տների առաջին մասերը զարդարուած են մաքուր և  
ծաղկափթիթ այդիներով, իսկ յետեւ կողմերը բու-  
տաններով և մարգագետիններով։ Աերջինին միա-  
նում են և այնպիսի գաշտեր, որոնք տարածվում  
են մինչև լեռների ստորոտները, մինչև անգում եթէ  
լեռները շատ զառ ՚ի վեր չեն՝ սփովում են և նոցա  
վերայ։ Ցածր բլուրների մեծ մասը մշակած են, ուր  
վաղուց արդէն անյայտացել են բարձր ծառերը և  
ուր այժմ, նոցա փօխանակ, պարարտ հողի վերայ  
բուսնում է, և հասունանում հեռու Ամերիկայի  
պտուղը—անգին գետնախնձորը։

Անկարծիք ամենից գեղեցիկ շինութիւնը գիւ-  
ղի կեդրոնում շինած եկեղեցին է. նա շըջապատուած  
է ընդարձակ հրապարակով, ուր կանգնած են բարձր  
երկայնաշուր տիլիաներ՝ (ծառի անուն) որոնք տա-

բածվում են մինչև քահանայի տունը։ Այս տունը  
վերևից մինչ՝ ՚ի վայր ծածկուած է վայրենի վարդի  
ծիւղերով և տերևներով. զանազանվում է իւր ար-  
տաքին ձևով և մեծութեամբ, օրովհետեւ միայն սա  
է ամբողջ գիւղում երկհարկեայ. այնու ամենայնիւ-  
երթիկը վնասուած է միքանի տեղ, իսկ հենօրեայ  
ցանկը ցոյց է տալիս, որ քահանան ևս չունի մեծ  
եկամուտա:

Տները, այգիները, մարգագետինները և գաշ-  
տերը, մի խօսքով, բոլոր գիւղը իւր սեփականու-  
թիւններով ներկայացնում է խաղաղութեան պատ-  
կերը. և ահա թէ ինչու սորա հիմնադիրները ա-  
նուանել են գիւղին օֆրինդենսրոդէ» կամ «Պաղապա-  
սեր»։ Այնուեղ ամենայն բան ծլում է և ծաղկում  
առատութեամբ. ահազին զմբուխտի նման տարա-  
ծուող մարգագետինները իւրեանց թարմութեամբ և  
կանաչութեամբ զբաւում են անցորդի հայեացքը,  
որովհետեւ երաշտութիւն հազիւ է պատահում այս  
լեռների վերայ. բացի գորանից թափանցիկ առուակը  
միշտ պարտնակում է իւր մէջ բաւականին առատ  
ջուր, այնպէս որ այս գեղեցկավայրերի լնակիչները  
կարողանում են հեշտութեամբ ոռոգել գաշտերը և  
մարգագետինները։

Գիւղի վերջում իսկ, ուր լեռները համարեայ  
միանում են միմեանց հետ և ուր միայն թողնում  
են մի նեղ անցք մարգականց հաղորդակցութեան  
համար, հարիւր տասն և հինգ տարի սորանից ա-

ռազ կար մի փաքրիկ, մաքուր անակը: Առասն պատշ  
կանում էին մի կտոր վարելահող և մի կտոր մար-  
գարեամին, որոնց արտադրութիւնները բաւական չեն  
անակի բնակիչներին կերակրելու համար: Իր թի-  
երթիկը ծածկուած էր ծղնոսով: Իսկ երբ փառում էր  
ծղնոտը, իսկոյն փառածը փախարինվում էր նորով և  
սորա համար նա երեսում էր զանազանաբոյն: Տնակը  
չունէր ոչ մի զուռն, որովհետեւ նորան հարկաւոր  
էլ չէր: Նորա կարասիքը ու զարդերը չեին կարող  
զբաւել գողերի ու շատրութիւնը, որոնց մասին այս  
տեղերում չէր լսուած անգամ:

Այս անակում իսկ բնակվում էր փայտահատ  
Ցելեստին Վազները իւր ինոց և երկու որդիքրանց  
հետ, որոնցից մինը տասն և երեք տարեկան էր,  
իսկ միւսը տասն և մէկ: Ցելեստինը շատ խեղճ մարդ  
էր, նա աշխատում էր այնքան՝ ինչքան անհրաժեշտ  
է կեանքի առաջի պիտոյքները լրուցանելու համար:  
Բարիքախտաբար նա ունէր մի կով և երկու այծ,  
որոնց պահելը նորան ոչինչ չէր նստում, որովհետեւ  
նորա ազատ թափառում էին անտառի մէջ և զբու-  
նում իւրեանց կերակուրը: այնու ամենայնիւ նոքա  
երեմն իւրեանց կաթնով ազատում էին ամբողջ  
ընասնիքը քաղցից:

Աղքատութիւնը յանցանք չէ: ամենաթշուառ  
խրճիւմ ևս կ'ափիք հանդիսաւ ու խաղաղ երջան-  
կութիւն, եթէ նորա մէջ բնակողները բարեպաշտ,  
իւրեանց վիճակից դոչ և առողջ մարդիկ են: բայց,

դժբախտաբար, Ցելեստինի խրճիւթի բոլոր բնակիչներն  
այսպէս չեին: Աւգիզ է, թէսկէա նորա առաջին կնոջ  
ժամանակ, այսաւել ուրախութեան և բաւականու-  
թեան մէջ էին ապրում նոքա, բայց երբ նա մեռաւ՝  
իւր փոքրիկ Յովհաննէս որդու ծնուելուց յեաց՝ ա-  
մենայն բան կերպարանսփառուեցաւ: Իւր փայտա-  
հատ լինելու պատճառով, Ցելեստինը ամենայօթ կա-  
նախ գնում էր անառառ և չէր կարստանում նայել  
փոքրիկ Յովհաննէսի վերայն որ կարօտ էր անքնդ-  
հատ հայեցողութեան, սորա համար նա վճահց երկ-  
րորդ ամռանանալու: Նորա վեսահան կինը  
նոյնպէս աղքատ էր ինչպէս և ինքը, բայց առ մի  
թշուառութիւն չէր եթէ կինը խաղող և լու բնա-  
ւորութիւն ունենալու: Դժբախտաբար նա սորանից  
զարմէ էր: Թէսկէտ գեղեցկապէմ էր և ունէր փայ-  
լուն աշեր, բայց չէր բարեսփատ: Ցելեստինը շուտով  
համրացաւ, որ իւր ընարութիւնը անյաջող էր: բայց  
բանը եղել վիճացել էր: կինը կօշեկ չէ, որ  
հաներ ոտից և ձգէր հեռու: նա հնազանդուեց իւր  
հակատագրին և աշխատում էր հետացնել այն խո-  
շինգուները, որոնք խանգարում էին իւր տնային  
հանգատութիւնը: Բայց որովհետեւ մարդու և կնոջ  
մէջ չկար ոչ մի հոգեկան համաձայնութիւն՝ Մար-  
թան, ինչպէս հարկն էր, չէր պահպանում Ցելես-  
տինի ամենասիրելի Յովհաննէսին, այս պատճառով  
նոցա մէջ վէճերն անպակաս էին:

Երբ Մարթան ծնաւ որդի, հազիւ երկու տառ-

րեկան դարձած Յովհաննէսի դրութիւնը աւելի ևս  
վատացաւ, որովհետեւ խորթ-մայրը դադարեց նայե-  
լուց նորա վերայ և կեդրոնացրեց բոլոր սէրը իւր  
իսկական որդու վերայ, որ մկրտութեան մէջ անուա-  
նեցաւ Գուբերտ:

Իշարկէ սա բնական է և ամենեին զարմա-  
նալի բան չէ, թէ Մարթան գերազանց էր դասում  
իւր որդին ուրիշե որդուց, այնու ամենայնիւ նա  
չպէտք է բոլորովին մոռանար և վերջինին. մանա-  
ւանդ ամուսնանալով այրու հետեւ լինելով պսակի  
տակ, խոստացել էր հոգս ունալ որբի վերայ և սի-  
րել նորան որպէս իւր իսկական որդուն:

Չ՞նայելով խորթ-մօր անհոգութեանը՝ Յովհան-  
նէսը մեծանում էր ու կազդուրվում, կարծես Աս-  
տուած էր ուղարկել իւր հրեշտակին՝ անմեղ ման-  
կանը պահելու ամեն վտանգներից: Որովհետեւ ոչ ոք  
նորա մասին հոգս չէր քաշում, ուստի նա մանկու-  
թիւնից սկսած ստիպուած էր ինքը հոգալ իւր մա-  
սին, որից նա սովորեցաւ աւելի վազ, քան միւս ե-  
րեխաները, օգտուել իւր սեփական ուժերով: Նորա  
հայրը և մայրը միշտ զբաղմանց մէջ լինելով՝ չէին  
կարող միշտ նայել նորա վերայ, ուստի նա ստացաւ  
այնպիսի ընթացք, որ կարողացաւ գտնել միջոցներ  
իւր երեխայութեան հասակում անդամ՝ ինքն իրան  
օգնելու: Այսպէս օրինակ՝ երբ նա նստած էր լինում  
կամ պատկած յատակի վերայ և կամենում էր ջուր  
խմել՝ աղաղակում էր, բայց ոչ ոք ուշք չէր դարձ-

նումնորա աղաղակների վերայ, այսպիսի գէպքում  
նա ստիպուած էր մտածելու թէ ինչպէս ջուր խմէ  
և ահա նա չոք ՚ի չոք գնում էր ամանի մօա՝ որի  
մէջ միշտ ջուր էր լինում և չկարողանալով բարձ-  
րացնելով այն՝ ձեռքերով լկում էր: Ահա այսպէս  
կարիքը սովորեցնում էր նորան հնարքներ. և այս  
կերպով խմած ջուրը թուում էր նորան այնպէս  
քաղցր, որպէս թէ խմել էր ոսկեզօծ ամանից:

Եթէ նա քիչ մեծացաւ, այնպէս որ կարողա-  
նում էր քայլել դրութիւնը ևս փոքր ինչ լսուա-  
ցաւ, սրովհետեւ միայնակ գնում էր անտառը, գրու-  
նում էր քաղցր մրգեր և ուտում իւր հացի հետ  
մեծ ախորժակով: Թէպէս նա շատ անգամ հեռա-  
նում էր իւրեանց ասնից անտառի խորքերը, այնու  
ամենայնիւ կարողանում էր գանել ճանապարհը և  
վերադառնալ մթնելուց առաջ: Անտառը նորան այն-  
քան հաւանելի էր թուում, որ երբ լինում էր այն-  
տեղ, համարում էր իրան բախտաւոր: Նա, մինչև  
իւր եղայր Գուբերտի մեծանալը, չունէր ոչ մի  
ընկեր, սորա համար նա խաղում էր զշնպղոյն ծաւ-  
ղիկներով և քարերով. միշտ լսում էր թռչունների  
երգը, որոնք անընդհատ՝ գալուն և ամառ՝ հնչեց-  
նում էին ամբողջ անտառի օղը: Նա մտածեց նմա-  
նացնել իւր ձայնը թռչունների երգին, նոցա իւր  
մօտ կանչելու համար. և շատ ուրախանում էր երբ  
այս յաջողում էր իրան: Յովհաննէսը տեսնելով մի  
անգամ մի գիւղացի երեխայի ձեռին կենաց շե-

նած սուլիչ, խնդրեց ցայց տալ իրան դորա շնուրու կերպը. բայց երեխայից բացասական պատասխան ստանալով նա չգագարեց մոռածելու սուլիչի մասին, մինչև այն ժամանակ, եթք, վերջապէս շատ փորձերից յետոյ, յաջողիցաւ նորան շնուր կէտ առ կէտ տեսածի նմանը; Նա թռչկոտում էր ուրախութիւնից երբ առաջին սուլիչը պատրաստ էր. և զեռ չէր անցել միքանի օր, երբ նա արգէն սորանով կարողանում էր նմանացնել իւր ձայնը անտառի փոքրիկ բնուկիչների ձայնին և երգերին, այն է՝ կարժառի, մարմարակատարի, սիրենուի, կամեփուկի և սոխակի. մինչև անդամ կարողանում էր նմանեցնել իւր ձայնը ուգուահի կաղկղանքին և ծառակափուաի աղաղակին, նոյնպէս կկուի զանազանակերպ ձայներին. և 'ի սրտէ ուրախանում էր, երբ պառկելով՝ իւրեան թռչուններից ծածկող թփերի տակ, կարողանում էր վիճել ձարտարութեան մասին: Վերջապէս նա սորանում հասաւ այն աստիճան իմաստութեան, որ կարողանում էր հաւաքել խր չօրս կողմը փեռքագարդ երգիչների ամբողջ խմբեր, որոնք սովորելով նորա յաձախ ներկայութեանը. չէին թռչում մինչև անգամ այն ժամանակ, երբ նա շափազանց մօտենում էր նոցա:

Բայց այս անմեղ զուարձութիւնները վերջացան առժամանակ, որովհետեւ մեծացաւ փոքր եղբայրը և այլ մայրը ստիպուած չէր անընդհատ հայեցողութիւն ունենալ նորա վերայ, ահա այս ժա-

մանակ Յովհաննէսը պարաւոր էր նոյել եղբօրը և չէր կարող հեռանալ նորանից ոչ մի բովէ: Խորթմայրը արգելեց նորան մինչև անգամ փոքր ինչ հեռու գնալը Գուբերափի հետ և տմեն անգամ սպատիկ յանդիմանում էր՝ երբ կանչելիս իսկոյն չէր երեւում: Երկու անգամ փորձեց Յովհաննէսը եղբօր հետ զնալ անտառը, բայց խորթ-մայրը իւրաքանչիւր անզամ էլ այնպէս սասափիկ պատժեց նորան, որ խեղճը այլ ես չմասածեց կրկնել իւր փորձերը առանց մօր թոյլատութեանը նորան զժուար էր սպասել այս երբեմնապատահ թոյլատուութեանը, ուասի նա նաև յում էր կամաչ ծառերի վերայ աննկարագրելի տիրութեամբ և լսում էր թռչունների երգերը, որոնք համառում էին նորան անտառի խորքերից շատ թոյլ և աղաւաղուած: Առաջ՝ երբ նա մեծ ուրախութեամբ փազվում էր բարձր ծառերի ստուերների տակ, երբ նա լսում էր տերեւնների շնորհը, անտառի միջի առուակի կարկաչելը շատ ուրախ և զուարթ էր, բայց, տւաղ այժմ այս տմենը նորան արգելուած էր:

Վ երջապէս ախրութեանը ունեցաւ վատ հետեանքներ նորա առողջութեան վերայ այտերը գունաթափուեցան, նորա պարզ աչքերը սկսան խաւարիլ. և միայն հազուադէպ թեթև ծիծաղը պարզում էր նորա գեղեցկահայաց, առաջ ուրախ, իսկ այժմ ախտոր դէմքը: Սորա հետ միայն և Գուբերափի դուռը պործած շարտութեանները, որոնց փոքրիկ Յով-

Հաննէսը սախպուած էր համբերել։ Գուբերուր երեսայութիւնից արդէն յամառ էր, այնպէս որ ոչ մի փաղաքշանք, ոչ մի քաղցր խօսք չէր անում նորավերայ ոչ մի տպաւորութիւն։ Եթէ Յովհաննէսը ամենայն բան չէր կատարում նորա քմքի համեմատ, որ շտա անգամ անկարելի էր լինում, որովհետեւ միևնոյն ժամանակ պիտի կատարէր և մօր պատուէրը, աղաղակում էր, իսկ մայրը լսելով նորա աղաղակը վազում էր նորա մօտ և չ'կամենալով լսել անգամ փոքրիկ Յովհաննէսի իրաւացի խօսքերը, հայհոյում էր նորան և մինչև անգամ խիստ պատժում։ Մօր այսպիսի անարդար վարուելը Յովհաննէսի հետ պատճառ էր լինում նորա յաճախակի դառն արտասուք թափելուն։ Շնայելով սորան նա միշտ հնաղանդ և խոնարհ էր և չէր լինում վրէժխնդիր փոքրիկ Գուբերատին, թէպէտ այս ինքնահաւան երեխայի աղաղակները պատճառ էին գառնում խեղձ Յովհաննէսի թշուառութեանը։

— «Ինչո՞վ եմ ես մեղաւոր, մտածում էր ինքն իրան, նա աղաղակում է։ Շհասկանալով, որ իւր աղաղակները ինձ համար վատ հետևանքներ կ'ունենան։ Սորանից յետոյ բարի Յովհաննէսը սրբում էր արտասուքը և ամեն կերպով աշխատում էր հաճոյանալ կամապաշտ երեխային։

Բայց, դժբախտաբար, նորա բոլոր աշխատանքը՝ ի գուր անցաւ։ Քանի մեծանում էր Գուբերար, այնքան աւելի հաստատվում էր ինքնահաւանութեան

մէջ և մինչև անգամ ուրախանում էր, որ իւր պատճառով թշուառ Յովհաննէսին պատժում էին կամ յանդիմանում։ Յովհաննէսը քաղում էր նորա համար գեղեցիկ ծաղիկներ, բռնում էր գեղեցիկ թիթեաններ ու փայլուն բգեցներ և բերում էր ամենաքաղցր մրգեր, որ գրավէ նորա սէրը. թէպէտ Գուբերուր մէծարանքով էր ընդունում իւր մեծ եղբօր սիրոյ ցցցերը, այնու ամենայնիւ չէր մտածում նորա սէրը փոխարիննել փոխադարձ սիրով. սորա համար Յովհաննէսը կորցրեց, վերջապէս, իւր փոքր եղբօր սրտի մէջ այս զգացմունքը զարթեցնելու յցսը։ Զմեռը՝ երբ լեռները և հովիտները ծածկուեցան ձեան խիտ ծածկոցով, նորա դրութիւնը անտանելի եղաւ։ Նորան արգելեցին դուրս գալ տանից. նա պարտաւոր էր նստել տիսուր սենեակում և համբերել եղբօր կամասիրութեանը, որի առողջութիւնը, մօր կարծիքով, չէր թոյլ տալիս նորան դուրս ելնել տանից։ Փոքրիկ Յովհաննէսը այժմ չէր կարող բերել ոչ ծաղիկներ և ոչ մրգեր, այնու ամենայնիւ նա պարտական էր մի կերպով զբաղեցնել Գուբերատին։ Եղբ նա տիսուր էր Յովհաննէսին վայ էր լինում, որովհետեւ Գուբերատը աղաղակում էր, խփում էր նորան ոտներով, կմշտում էր, չանգուտում էր և մինչև անգամ ծիծաղում էր նորա վերայ, երբ մայրը խրդառուկ Յովհաննէսին ասում էր անվայել խօսքեր։ Նա յաճախ սոցանից շուարած չ'գիտէր թէ ինչպէս վարուէր եղբօր հետ, ուստի յուսահատուած դուրս էր

զնում, ազատութեամբ թափելու իւր արտասուքի գառն կաթիշները: Յայց սպարաբար այսպիսի հանգամանքներում, մայրը նորա վերայ սուստիկ բարձրաւնում էր և անուանում անպիտանն որ չդիտէ խաղալ մի սիրելի երեխայի հետ, ինչպիսի իւր Գործերան էր: Աթէ Յովհաննէսը փորձում էր արգարանալ այն ժամանակ յանդիմանութեանց հետ լսում էր և հայ հոյսնքներ, որոնց հետ ահապին բռունցքներ. իբրև կարկառ, թափում էին նորա վերաց:

— «Միթէ զու կամմանում ես հաւատացնել ինձ, որ ես չեմ ճանաչում իմ սիրելի որդուն, ասում էր այն ժամանակ խորթ-մայրը, միթէ զու կարծում ես, թէ ևս չեմ ահանում, որ զու նորան կոմաց կիշտում ես ու խսում, և քո մեղքերիդ համար նորան ես ոլո պահում: Նա հաղար անգամ՝ զանցատուել է ինձ, թէ զու նորա հետ լսու ես վարդում միայն այն ժամանակ, երբ ես մօտն եմ, ինչ երբ հեռանում եմ՝ խկոյն նորա հակառակն ես զործում: Գետ, անպիտանն չունի՞ս զու սիրոյ դէթ մի կայծ դէսի եղբայր»:

Յովհաննէսը արտասուելով հաւատացնում էր թէ ինքը միշտ բարի և ցանկանում Գուրեմախն և թէ չէ հասցնում նորան ոչ մի վետո, բայց նորա հաւատացնելով անհետեանք էր մնում, որովհետեւ Գուրեմախը դլուխը շարժելով անամօթաբար պընչ զում էր թէ նու իւր հետ շատ շատ վետ և փարփամն Յովհաննէսը միքանի անգամ՝ զանցատուեց հօշ-

րը, բայց նա երբեմն չէր լսում, երբեմն հաւատում էր կնոջ խօսքերին, որ, մի շատ ուղեղ բանի նման, նկարագրում էր զբարտութած երեխայի վատ վարձունքը, այնպէս որ Յովհաննէսը, փոխանակ օգնութեան և մսիթարութեան, լսում էր հօրից երբեմն յանդիմանութիւններ և երբեմն ուղղուելու խորհուրդ: Այս բանը նորան աւելի էր ցաւեցնում քան այն նեղութիւնները, որ պատճառում էին մայրը և եղբայրը, ուստի նա չէր նորոգում իւր փորձերը, այլ գանգատվում էր թռչող ամպերին և խուլ ծառերին. միայն ինքը և Աստուած էին ահմուսմ նորա արտասուքները: Դժբախտաբար Յովհաննէսը չունէր ոչ մի հասկացողութիւն երիտաւոր հօր մասին:

Ահա այս ժամանակ լրացաւ Յովհաննէսի եօթն տարին, ուստի հայրը մտածեց տալ նորան ուսում նարան: Այդ մտադրութեամբ Յելեսախնը մի առաւտ տարաւ. Յովհաննէսին զիւղական ուսուցչի մօտ և ինդրեց խիստ պահէլ իւր որդուն, ասելով որ նա մի այնպիսի անպիտան է՝ որ անդադար վիճում է իւր փոքր եղբօր հետ:

Ուստին Միլդերը, այս էր ուսուցչի անունը, նայեց Յովհաննէսի վերայ, որի հայացքը ուղղուած էր դէպի ներքեւ և որի այտերը կարմիկ էին ինչպէս ծաղկի թերթերի:

— «Ես չեմ կարծում, ասում էր Պ, Միլդերը ժպտելով և փաղաքշելով նորան, որ սա անպիտան

լինիւ Տուր ձեռդ, Յովհաննէս, և ինձ նայիր: Ասա  
դամի ժամանակ ուշագիր կ'լինին: Ու այս անունը անընին, տէր իմ, պատասխանեց Յովհաննէսը,  
նայելով ուսուցչի վերայ շնորհակալութեան ցոյցով,  
ես կ'աշխատեմ լինիւ ջանասէր և սիրել ձեզ: — Այս, մենք շուտով կ'բարեկամանանք, ասաց  
ուսուցիչը ժպանելով: «Դնա, սիրելի Յելեստին, Աս-  
տուած քեզ հետ, քո որդին կ'մնայ ինձ մօտ և  
ուսումնից յետոյ տուն կ'դառնայք: Յելեստինը գնաց  
իսկ Յովհաննէսը ուրիշ շատ երեխաների հետ սկսեց  
սովորել զրել և կարդալ: Ուսուցիչը բարի և Աս-  
տուածապաշտ մարդ էր, նա իւր բոլոր ուժով աշ-  
խատում էր զարդայնել իրան հաւատացած երեխա-  
ներին և դարձնել նոցա կանոնաւոր և ճշմարիտ  
մարդիկ: Նա առանձին ուշագրութիւն էր զարձնում  
մեր Յովհաննէսի վերայ, որ իւր գեղեցկութեամբ  
զարմացնել էր վարժապետին. վերջներ մի առանձին  
հոգեգայլութեամբ նկատում էր, որ Յովհաննէսը  
աւելի ջանասէր, աւելի հնապանդ, աւելի ուկնդիր  
և աւելի աշխատասէր էր քան միւս աշակերտները:  
Շուտով Յովհաննէսը դարձաւ նորա սիրելին և փո-  
խարինեց ուսուցչի սէրը իւր հաւատարմութեամբ  
և կրկնապատկեց իւր եռանգը դէսի ուսումը:

Եւ յիրաւի անկարելի էր, որ Յովհաննէսը  
չզգար իւր փափուկ սրտի մէջ շնորհակալութիւն  
դէսի իւր ուսուցիչը: Մինչև այժմ նա, համարեա,  
զըկուած էր սէրից, իսկ այժմ՝ նա այդ վայելում էր

առատութեամբ: Նատ հասկանալի է, որ նա կամե-  
նում էր պահպանել այդ սէրը և սորա միակ միջոցը  
համարում էր աշխատասիրութիւնը, ուրեմն զարմա-  
նալի չէ, որ նորա յառաջադիմութիւնը ուսման մէջ  
գերազանցում էր նորանից սպասածից: Ուսուցչի  
բարեկամութիւնը ծառայում էր նորան որպէս միփ-  
թարութիւն իւր չարչարանքի, որին նա համբերում  
էր տանը. իսկ երբ նա աւելի մօտիկ ծանօթացաւ  
Ասութոյ և նորա միածին որդու հետ և լսեց պատ-  
մութիւններ նորա մասին, թէ ինչպէս Յիսուս Քրիս-  
տոս սիրում էր երեխաներին և թէ ամեն դժբախ-  
տութիւնների մէջ պէտք է գիմել նորան՝ այն ժառ-  
մանակ նա էլ չ'զգաց տնային չարչարանքները, զրու-  
նելով միփթարութիւն աղօթքի մէջ: Ինչքան նորա  
հետ տանը իիսա էին վարդում, այնքան աւելի նա  
զանում էր մարդասէր. և եթէ Գուբերալ նորան  
հանգիստ չէր թողնում, նա վշակ գուրս էր գալիս  
և որոնում աղօթքի մէջ միփթարութիւն և ոյժ  
տանելու հալածանգները: Երբէք նա չէր մտածում  
վրէժինդիր լինիլ իւր եղօրը, թէսկա նա աւելի  
մէծ էր և ուժեղ իւր հալածողեց: — Ահա այսպիսի  
տիսուր կեանքի մէջ լրացաւ նորա ԱՅ տարին իսկ  
Գուբերալ: || լ-լ: Այս ժամանակ աշա պատահեց  
այս գէպքը որ մէծ փոփոխութիւն ձգեց Յելեստինի  
տան մէջ:

**Ավ սիրում իւր որդուն՝ պէտք է յա  
պատժէ նորան:**

Վայիս ամսում մի անգամ մայրը պատառիբեց Գուբերտին անտառը տանել հօր համար խոհանոցի վառարանի մօտ գտնուած խառնաթանով ամանը: Ենես չեմ գնալ պատասխանեց Գուբերտը չ'վերկենաւ լով սեղանից, որի վերայ նատել էր և խաղանում էր ոտները: «Այսօր հայրիկը շատ հեռու է գնացել, մինչև այսուել գնալը, ամենաքիչը, մի ժամ կ'աւել: Յովհաննէսը ինձանից ուժեղ է, թող նա գնա իմ փոխանակու: — Բայց հայրը, անկարծիք, աւելի կ'ուրախանայ, եթէ դու գնաս, Գուբերտ» ասաց մայրը: — Ե՞ն, ի՞նձ ինչ հօր ուրախութիւնը. ես չեմ կամենում, աւելացրեց երեխան. Ճանապարհը երկար է, օրն էլ շատ շք:

— Ուրեմն դու գնա, Յովհաննէս, ասաց մայրը գառնալով զէպի նա, որ ջանապարութեամբ արտագրում էր օրինակից:


— Այս բոպէիս, մայրիկ, ասաց Յովհաննէսը, երկու տող է մնացել վերջացնելու տուած գրութիւնը:

— Ի՞նչ, դու կամենում ես զրել և այն ժամանակ, երբ քեզ հրամայում եմ գնալ, աղաղակեց

մայրը, որ արդէն բարկացած էր Գուբերտի բացասութիւնից, դու այս խակ բոպէիս կ'դնաս, եթէ ոչ քեզ վայտով ուի կ'կանգնեցնեմ:

**Սա** բարձրացրեց ձեռքը խփելու, բայց հովհաննէսը ծածկելով խկոյն տետրակը շտապեց խոհանոցը և առնելով ամանը ուրախութեամբ վաղեց իւր սիրելի անտառը, ուր մօր խիստ խօսքերը շուտով մոռացաւ: Խնչպէս նա ուրախանում էր, երբ անցնում էր անտառի միջով և ներշնչում գարնանային թարմ և մաքուր օդը, լի հազարաւոր գեղեցիկ ծաղիկների անուշահոտութեամբ: Ծառերի կանաչ տերենների վերայ երգումէին զուարթ թռչունները, որոնց նա չափազանց սիրում էր և որոնց երգերը լսելու համար յաճախ կանգնում էր: Նա ուրախութեամբ կ'մատենար նոցա, բայց մոտածելով, որ գուցէ հայրը անհամբերութեամբ կերակուրի է սպասում՝ մեծացրեց իւր քայլերը, որ փոխարինէ կորցրած ժամանակը և դեռ չէր տնցել մի ժամ՝ երբ նա հասաւ հօր մօտ, որ պարապում էր իւր գործով: — «Ճա, ի՞նչ լուր, Յովհաննէս, ինչի՞եւ եկել, հաց բերիք. ես շատ քաղցած եմ և յոդնած. Ճաշից յետոյ քիչ օգնիր ինձ: Յելեսահնը կերաւ իւր Ճաշը. խեց տռուակից պարզ ջուր. խօսեց մի քիչ Յովհաննէսի հետ և կրկին սկսեց իւր գործը:

— Երբ ես վայտերը գարսեմ, դու կարող ես հաւաքել այս տաշեղներո, ասաց նա, այսպիսով խասամէս երկու անգամ՝ գըշմացիւ ու անգամ լուրացութեամբ:



Կվերջացնեմ: Մի ժամկց յետոյ այս ամենը կատարած տուն կվերադառնաս:

— Հայրիկ, կարող եմ, գործս վերջացնելուց յետոյ, փոքր ինչ վազվել անառառում:

— Վազիր, վազվիր, ինչքան կամենաս, միայն չմոռանաս պատրաստել ուսուցչի առածած դասերը:

Հայրիկ, ես արդէն դասերս պատրաստել եմ. միայն մնացել է գրելու մի տող, այն ևս շուտով կգրեմ: Ինչպէս ես ուրախ եմ, որ գնմէ մի անգամ կարող եմ կրկին աղաս վազվել անառառում և կանչ չել փոքրիկ թռչուններ:

— Միթէ դու այդքան սիրում ես անստոր, Յովհաննէս, հարցրեց Հայրը:

— Արտանց, Հայրիկ:

— Հապա ինչի՞ միշտ տանն ես նստում:

— Որովհեաւ մայրիկը ինձ մենակ չէ թռողնում գալ անստոր, իսկ Գուրեբախն ինչքան էլ որ երնդրես, նա չի կամենալ:

— Այդ չաւ չէ. չէ որ եղայրները պարտաւոր են սիրել միշտ միմիանց: Բայց դու ասա ինձ, ի՞նչ ես անում անստառում վազվելուդ ժամանակ:

— Ա՛յս, Հայրիկ, ես այն ժամանակ լիապէս բախտաւոր եմ. որսում եմ ինձ համար թիթեռներ, բգեցներ, որտնում եմ մրգեր և, որ գլխաւորնէ, կանչ չում եմ թռչուններ, որոնք այնքան քաղցր են երգում:

— Միթէ դու կարող ես կանչել թռչուններ,

ինչո՞ւ դորա մասին մինչեւ այժմ ինձ ոչինչ չեմ առել. ի՞նչպէս ես կանչում նոցա:

— Իմ շինած կեչենի սուլիչներով, ցոյց տամ քեզ, Հայրիկ:

Ցոյց տուր, միայն առաջ վերջացրու գործդ:

Յովհաննէսը սկսեց աշխատել և այնպէս ջանասիրութեամբ, որ կէս ժամկց յետ ամեն բան պատրաստ էր: Յելեստինը առանձին բաւականութեամբ նայում էր նորա վերայ աշխատանքի ժամանակ և այստեղ նա սկսեց աւելի, քան մի ուրիշ ժամանակ, կասկածել Մարթայի խօսքերի ուղղղ լինելու մասին, թէ Յովհաննէսը բոլորովին անպիտան տղայ է:

— Դու քաջ ես, Յովհաննէս, ասաց նա երեխային, որի գեղեցկահայաց գէմքը վառվռում էր անընդհատ շարժողութիւնից: Մի քանի տարուց յետոյ ես կ'սովորեցնեմ քեզ իմ արհեստը. և կարծում որ դու ժամանակով լաւ փայտահատ կլինիս: Հապա, այժմ ցոյց տուր ճարտարութիւնդ: Յովհաննէսը հանեց գրպանից դանակ. վերցրեց կեչի ծառի մի կտոր և միքանի լուսպէց յետոյ արդէն պատրաստ էր սուլիչը:

— Որի՞ն կանչեմ, Հայրիկ, հարցրեց նա, ասա միայն և խոյն կ'լսես նորա ձայնը:

— Ա՛յս, դու հանաքչե, ասաց Հայրը ծիծաղելով. զու երեխ հաւատացած ես, թէ կ'յաջողի քեզ

այդ: Լաւ է, հապա կանչեր կարժառին, նոքա այս  
անտառում շատ են:

— Այս բոպեխ, հայրիկ, միայն ինդրեմ տե-  
ղեցդ չշարժուիս, եթէ ոչ չե գալ և ոչ մինը:

— Լաւ, որդի, լաւ, ես կամենում եմ իմանալ  
թէ գու, յիրաւի, ասածիդ պէս ճարտար ես:

Յովհաննէսը մօտեցաւ թփերին, ծածկուեց  
նոցա տակ և սուլիչը կպցնելով շրթունքներին այն-  
պէս գողգոզացրեց կարժառի ձայնի նման, որ հայրը  
կարծեց թէ իսկապէս այս թռչունի ձայնն է լսում:

— Յովհաննէս, ասաց նա, այլ մի նեղութիւն  
կրիր, ես արդէն լսեցի կարժառի ձայն:

— Բայց, հայր, չ որ սա իմ ձայնն էր, պա-  
տասխանեց Յովհաննէսը, ես սուլիչով իմ ձայնը նմա-  
նեցրի կարժառի ձայնին:

— Յիմար, ասաց հայրը, միթէ գու կամենում  
ես ինձ սովորեցնել ճանաչելու կարժառի ձայնը. չ  
որ ես քառասուն տարի է, ամենայն օր գալիս իմ  
անտառը և հմտութեամբ կարող եմ զանազանել այս  
անտառում գամնուող բոլոր թռչունների ձայները:

— Հայրիկ, մի բարկանար ինդրեմ, եթէ չես  
հաւատում, կ'գամ քեզ մօտ և քո առաջ կանեմ  
միենյնը:

— Տեղի նստիր, ասաց Յելեստինը, որ չ'նայելով  
որդու հաւատացնելուն, չեր հաւատում, թէ նա  
այսպիսի կատարելութեամբ կարող է նմանայնել իւր  
ձայնը թռչունների ձայնին, կաց, ես կ'գամ և կ'խփեմ

մի լաւ ապտակ, որ գու կամենում ես յիմարեցնել  
ինձ. այս ասելով Յելեստինը եկաւ ու նստեց որ-  
դու մօտ՝ թփի տակ:

Ուժմց ցոյց տուր քո ճարտարութիւնը, ասաց  
նա, բայց վայ է քեզ եթէ երեսի որ գու ստախօս եւս  
Յովհաննէսը ժպտեց և շասելով ոչ մի խօսք  
նորից կպցրեց սուլիչը շրթունքներին: «Ոինկ, պինկ,  
պինկ հնչեցաւ հօր ակտնջի տակ, որ իւր աշքե-  
րով տեսաւ իւր Յովհաննէսի ճարտարութիւնը:

— Աստուած սիրես, Յովհաննէս, ասա՞՞րտեկ  
ես սովորել այդ, հարցրեց նա զարմանքով, իմ  
կեանքումն այսպիսի բան չէի լսել:

— Հայրիկ, երեսի կատակ ես անում, աւելաց-  
րեց Յովհաննէսը, որի սիրտը այս գովասանքից  
թռթռում էր: Ես միքիչ մոռացել եմ, որովհետեւ  
երկար ժամանակ է, որ ինձ չէին թռղնում անտառը  
գալ, եթէ ոչ աւելի լաւը կ'լսէիր: Բայց նստիր,  
հայրիկ, միքսնի բոպէ ես, և կ'լսես ուրիշներ էլ:

Ծերը կրիին անշարժ նստաւ, իսկ Յովհաննէսը  
սկսեց կանչել կրիին կարժառի. երբեմն էլ խառնում  
էր սորա հետ և նորա երգերի ամբողջ խաղերը, որոնք  
շատ զարմացնում էին Յելեստինին: Այնու ամենայ-  
նիւ նա նստած էր հանդիսաւ և լսում ուշադրու-  
թեամբ: Միքանի բոպէից յետոյ մի թռչուն սկսեց  
պատախանել Յովհաննէսի կանչելուն, ապա երկ-  
րորդ, երրորդ և յետոյ ամբողջ խմբեր զանազան  
կողմերից, որոնք թէպէտ հեռու էին, բայց ձայնի

աւելի և աւելի պարզուելուց երեսւմ էր, որ նոքա  
մօտենում էին: Յանկարծ մի բան շարժուեց Յելես-  
տինի գլխի վերել և երբ նա բարձրացրեց գլուխը,  
տեսաւ, յիրաւի, մի կարժառ այն թփի ծայրին,  
որի ստուերումը իրանք էին նատել և նկատեց թէ  
ինչպէս նա բաց էր սնում իւր կտուցը Յովհաննէսի  
աւելի և աւելի բարձր հնչուող ձայնին պատասխա-  
նելու համար: Նուռով եկան և ուրիշ թռչուններ  
ու սկսուեցաւ մի թռչնական նուազածութիւն, որին  
Յովհաննէսը իւր յօժապութեամբ կարող էր վերջաց-  
նել և նորից սկսել: Երբ նա լսում էր, լսում էին  
և թռչունները: Սոքա նայում էին իւրեանց չորս  
կողմը և որոնում թագնուած երգչին: Երբ նա սկը-  
սում էր կրկին սուլել, այն ժամանակ նոքա ևս կրկին  
պատասխանում էին այն հրաւիրող ձայնին, որով  
նոքա այնպէս շուտ խափվում էին:

Յելեսաինը որ նայում էր այս տեսարանի վե-  
րայ և լսում էր Յովհաննէսի սուլելը ու թռչուննե-  
րի պատասխանը աւելի և աւելի հիացմամբ, չ'կա-  
րողացաւ այլ ևս համբերել ոտի կանգնեց և այն-  
պէս բարձր բացազանչեց, որ անտառի բոլոր փետ-  
րազարդ բնակիչները խօսին փախան նորա ձայնից:  
Այ քեզ զարմանք, ես իմ կեսնքում այսպիսի բան  
ոչ լսել էի և ոչ տեսել: Եւ գու, խարեբայ, այսքան  
երկար ժամանակ ինձանից պահում էիր քո ճար-  
տարութիւնը, ինչի՞ էիր այդպէս անում, միթէ գու

չ'զիսէիր, որ դուսանով ինձ չափազանց կուրա-  
խացնես:

— Հայրիկ, ես այդ չ'զիսէիր, աւելացրեց Յով-  
հաննէսը, այն ևս որ ինձ արգելուած էր գալ ան-  
առար և եթէ ես սկսէի խօսել իմ ճարտարութեան  
մասին՝ ոչ ոք պիտի չ'հաւատար:

Սպասիր, ասաց Յելեսաինը այս օրուանից  
ամեն բան կ'փոխուի: Ասառուծոյ գեղեցիկ արարած-  
ները ում որ այսքան ուրախացնում են, նորան չի  
կարելի արգելել մութ սենեակում: Գուրելուից դու  
ապահով եղիր, նա բաւականին մեծացել է և կա-  
րող է մտածել իւր պարապմունքների մասին: Իսկ  
եթէ նա չի կամենար գալ քեզ չետ անտառը խա-  
ղալու և թարմ ու մաքուր օդ ծծելու՝ կարող է  
մնալ իւր բնում: Տուն գնա այժմ, իմ որդի: Այսու-  
հետեւ երբ կամենաս՝ կարող ես գալ անտառը:

Յովհաննէսը լսելով հօր ուրախալի խօսերը,  
քիչ մնաց որ նորա ոսներն ընկնէր: Նա ուրախու-  
թիւնից բացազանչեց, դեպի վեր ձգեց գլխարկը և  
յայտնեց հօրը խորին շնորհակալութիւն:

Յելեսաինին շատ հաճելի թռւեցաւ որդու այս  
պարզ ուրախութիւնը: Նա կրկին մտածեց ինքն ի-  
րան թէ, գուցէ շատ անգամ, անիրաւացի է պատ-  
մել նորան: Նա վճռեց, որ խիստ քննի երկու որդ-  
ւոցն ես և հաւատայ միայն իւր տեսածին:

— Լաւ, որդի, լաւ, ասաց հայրը ընդհատե-  
լով որդու շնորհական խօսքերը, վեր առ ամա-

նը ու գնա տուն։ Մի այնքան շտապիր, եթէ կամենաս խաղցիր փոքր ինչ անտառում։

Յովհաննէսը վերցրեց ամանը ու մնաս բարեատ ասելով հօրը ուղեւորուեցաւ տուն։ Նորա սիրաը լի էր ուրախութեամբ։ Նա օրհնում էր եղբօրը, որ չ'կամեցաւ հօրը հաց տանել։

Եթէ նա չ'մերժէր այս, ասում էր Յովհաննէսը ինքն իրան, ևս չէի տեսնել հայրիկն և նա չէր թոյլ տար ինձ անտառը գալ երբ ևս կամենամ։ Դու, Գուբերտ, որ կամենում էիր բարկացնել ինձ և նեղացնել այժմ քո չ'լսելով ձեռք բերիր ինձ համար այն՝ ինչ որ ևս վաղուց ցանկանում էի։ Երէկուայ ասածը ռւսուցչի, թէ ովդ կ'սիրէ Աստծուն, նորան ամենայն ինչ բախտաւորութեան պատճառ կ'լինին։ այսօր կատարուեցաւ ինձ վերայ, և սա մի այնպիսի ճշմարտութիւն է, որ ուսուցչի ասելու ժամանակ իսկ, ինձ շատ գուրք եկաւ։ Ծնորհակալ եմ քեզանից, Աստուած, որ Դու ծնողիս սիրտը դարձնում ևս դէպի ինձ։ այնպէս արա որ մայրիկն ու Գուբերտն ևս սիրեն ինձ, այն ժամանակ ևս բոլորվին բախտաւոր կ'լինիմ։

Յովհաննէսը ինքն իրան այսպէս խօսելով գանդաղաքայլ շարունակում էր իւր երկար ճանապարհը, երբեմն կանգնելով և լսելով թռչունների ուրախ երգելով, լսելով ճանապարհից զեղեցիկ ծարիկներ քաղելու, երբեմն ընկնելով փայլուն միջաների յետելից։ և չ'դարձնելով ուշադրութիւն

արեգակի վերայ, որի ճառագայթներով լի էր անտառը և որ սկսել էր փոքր առ փոքր մայր մանել։

Յովհաննէսը ծառերի ստուելները բաւականին թէքուել էին դէպի կանանչ մարգագետինները, այնուամենայնիւ Յովհաննէսը զեռ ևս երկու վերատ հեռու էր իւր հայրենական աանից։ Բայց այս բանը նորան չէր անհանգստացնում։ Նա նատեց մի մէծ կաղնու տակ, որ գոնէ միքանի բոպէ զուարձանայ արեգակով լուսաւորուած անտառի տեսքով և լու բնութեան գաղտնի ձայնը, որ պարզ և տնմելինիք քաղցրութեամբ հնջում էր նորա ականջների տակ։ Նորա զլխի վերել երեկոյեան զեփիւոը շարժում էր կաղնու տերենները, մօտակայ թափանցիկ անտառաշին առուակը անդադար խօսոջում էր և կարկաչում։ այստեղ և այնտեղ թփերի մօս թռչկոտում էին նապաստակներ և վայրենի այծեր, որոնցով լի էր անտառը։ Սալամանդրները, որոնց գեղնաւուն բծերը պարզ զանազանվում էին կանաչ մամուսից, մագլցում էին նորա մօտ, իսկ անտառի խորքում սոխակը արդէն սկսում էր իւր քաղցր և անոյշ զայլիկը։

Յովհաննէսը մէծքը ծառին դէմ տուած և հանգիստ նատած լսում էր, նայում և սրտանց ուրախանում տեսնելով բնութեան գեղեցկութիւնը։ Նորա ճախ կողմում զբած էր ամանը իսկ աջ կողմում՝ զլխարկը, որ վեր էր առել իւր ճակատը զավացնելու համար։ Երկար ժամանակ նորա հոգին

պաշում էր իւր գուարթութիւնը. բայց փոքր առ  
փոքր քաղցր քունը պատեց նորան. նա սկսեց կըն-  
քուարտել վերջապէս, խորը քուն մտաւ: Օրուայ  
շքը, անսովոր աշխատանքը, անտառում վազվելը,  
գուցէ և հոգեկան ուրախութիւնը յոգնեցրել էին  
նորան:

Այսպէս անցաւ, համարեա կէս ժամ ու նա  
անվզով խաղաղութեան մէջ էր: Արել արդէն ան-  
յայտացել էր, անցնելով սակերի յետեր, երբ ֆրի-  
դենսրօդէի կողմից գալիս էր մի երեխայ ուղղակի  
դէպի այն տեղը, ուր Յովհաննէսն էր քնիլ: Աա  
Գուբերտն էր՝ որ տեսնելով քնած եղօրը չարաւ  
մտութեամբ ծիծաղեց:

— Ապասիր, ասաց նա փնթինթալով քթի  
տակ, քեզ կ'սովորեցնեմ ծուլանալ. զու շուտ չես  
մոռանալ իմ դասր: Քո պատճառով ես պարաւո-  
րուեցայ անտառը գալ, որ քեզ տուն կանչեմ: իզուր  
չեմ աշխատել:

Նա կամաց մօտեցաւ քնողին և բարձրացնելով  
իւր ձեռքի փայտը կամենում էր խեղջ Յովհաննէսին  
մի ամուր հարուած հասցնել, բայց յանկարծ տես-  
նելով ամանը գետնի վերայ կանգ առաւ:

— Ապասիր, ասաց չար երեխան, կ'կոտրեմ  
ամանը, այն ժամանակ վայ նորա գլխին. մեծ բան  
չէ մի հարուածը: Ես կարսղ եմ նորան միայն մի  
անգամ խիել յետոյ պէտք է փախչեմ, որ նա չհա-  
նի ինձ, բայց եթէ նա առանց ամանի վերադառնայ

տուն, մայրը նորան խստիւ կ'պատժէ, որով և ես  
վրէժս միանգամայն առած կ'լինիմ այն ձանձրոյթի  
համար, որին ես համբերեցի նորա բացակայութեան  
ժամանակ, նոյնպէս և այս երկար ճանապարհին:

Թուելով իւր չարագործութեան հետեանքները,  
նա կրկին բարձրացրեց ձեռքի փայտը և այնպէս  
ուժով խիեց ամանին՝ որ նա իսկոյն կտոր կառը եղաւ:  
Նոյն խի բագէին լսուեցաւ բարկութիւնից յառա-  
ջացած մի ձայն, բայց Դուբերտը չլսեց այն: Նա  
հեգնութեամբ ծիծաղելով փախաւ արագ և պա-  
հուեցաւ մօտակայ թանձր թվերի մէջ:

Աղաղակից Յովհաննէսը զարթնեցաւ և վա-  
խից իսկոյն միեր թռաւ: Վերջալոյսը արդէն դուրս  
էր եկել. նա զգաց, որ տուն գնալու ժամանակ է.  
Պլուարկը զրեց դլխին և կամենում էր վերջնել ա-  
մանը, բայց քանի՛ մեծ եղաւ նորա զարմանքը, երբ  
յանկարծ տեսաւ որ նա կտոր կտոր է եղել:

— Տէր իմ—Աստուած, այս ո՞վ է արել, բացա-  
գունչեց նա, ձեռները երկինք բարձրացնելով և թա-  
փելով դառն արտասուք: Եթէ ես առանց ամանի  
տուն գնամ, մայրիկը սաստիկ կ'պատժէ և գուցէ  
հայրիկն էլ ասէ թէ Յովհաննէսը անշնորհ է և թէ  
ոչ մի բանի պիտանացու չէ:

— Մի լար, իմ որդի, ասաց հայրը յառաջ  
գալով ահագին ծառի յետեից, եւ տեսայ թէ քո  
զինին ով բերեց այս փորձանքը և գիտեմ, որ մե-  
զաւորը դու չես:

Յովհաննէսը, երբ տեսաւ հօրը և լսեց նորա  
միսիթարական խօսքերը, այնպէս կարծեց, թէ այն  
ձայնը լսում է երկնքից և աեսնում է Աստուածային  
հրեշտակին: Ովկ կոտրեց ամանը, հայրիկ, հարցրեց  
Նա:

— Ում վերայ կարծիք ունիս, ովկ կարող եր  
այդ անել, հարցրեց հայրը ախրաժմեամբ:

— Ոչ ոքի վերայ, հայրիկ, պատասխանեց Յովհաննէսը, ես ոչ ոքի չարիք չեմ արել, որ վրէժինդիր լինէին ինձ, ուստի չեմ կարող երեւա-  
կայել թէ ովկ կարող եր լինիլ ինձ հետ այսպէս վատ  
վարուողը:

— Անհոգ եղեր, բաւական է, որ ես ճանա-  
չում եմ սորա անողին, ասաց Ցելեստինը: Մինը կա-  
մենում եր քեզ չարիք անել բայց Աստուած բերեց  
ինձ այստեղ իւր ժամանակին, որ նորա չարագորա-  
ծութիւնը յայտնուի: Ով որ փոս փորեց քեզ հա-  
մար, նա ընկաւ իւր փորածի մէջ Աղատ չի մնալ  
նա պատժից: Կամաց կամաց առն գնանք այժմ,  
որդեակ:

Յովհաննէսը այլ ևս չհամարձակուեց հար-  
ցընելու չարագործի մասին, այլ լուռ գնում էր  
մտածմունքի մէջ ընկդմուած հօր հեա, որ ոչ մի  
խօսքով չէր ընդհատում թագաւորով լուռթիւնը:  
Երբ նոքա տուն հասան՝ արդէն մթնել եր և խրճիթի  
մէջ ծրագ եր վառփում: Գուբերար, որ արդէն վե-  
րադառցել եր, նայում էր Յովհաննէսի վերայ հեգ-

նութեամբ և նենգութեամբ: Մարթան ևս վեր կա-  
ցաւ սեղանից և գէմ եկաւ Յովհաննէսին հարցնելու  
նորա այնքան երկար ժամանակ բացակայութեան  
պատճառը:

— Ելի ուր էիր թափառում, անպիտան տղայ,  
աղաղակից նա: Խեղձ Գուբերտը ամբողջ օր ախուր  
էր՝ չկար ոչ ոք, որ նորա հետ խաղար և ես պար-  
տաւորուած էի ուղարկել նորան անտառը կանչելու  
քեզ: Բայց նա որոնել էր որոնել և չէր գտել թէ-  
թէտ շատ սուր են նորա աչքերը: Ասա, անպիտան,  
ուր էիր մինչև ցայժմ:

— Առիր, Մարթա, ընդհատեց նորա խօսքը  
Ցելեստինը, այո՛, Յովհաննէր այսօր անտառում ա-  
ւելի երկար է մնացել սովորականից, գորանում էս  
եմ մեղաւորը: Խակ գու, Գուբերտ, հապա այստեղ արի:

— Չեմ կամենում, պատասխանեց ելեխան, որ  
հօր անսովոր և խոժոռ զէմքից իմանում էր, որ  
իրան սպառնում է մի սաստիկ պատիժ: Բայցի սորանից  
նորան չարչարում էր իւր խիդձը. նա երբեմն կար-  
մում էր, երբեմն գունաթափիվում և ուղղում իւր  
հայացքը դէպ 'ի մայրը, որի սովորութիւնն էր պահ-  
պանել և արդարացնել իւր Գուբերտին:

— Ի՞նչ, դու չես կամենում, ասաց հայրը ըն-  
դունելով աւելի խիստ և բոցացայտ հայացք: Մի՞թէ  
դու այդքան սովոր չես հնազանդուելու, որ համար-  
ձակվում ես հակաճառել խական հօրդ: Այս իսկ  
ըոպէիս արի ինձ մօտ և կանգնիր առաջս:

— Ակրելի՛ Ցեղստին, ի՞նչ ես ուզում անել  
Գուբերտին, հարցրեց Մարթան, որի սիրու սկսում  
էր թռթռալ իւր սիրելու մասին։ Հաւատացիր, նա  
բարի երեխայ է և ոչ մի չարութիւն չէ արել։ Ճա-  
շեց յետոյ նա ինձ մօտ էր նստած, մինչև իմ ուղարկելը  
նորան անտառը՝ անպիտան Յովհաննէսին որոնելու։

— Կի՞ն, ինդրեմ լոիր և մի մանիր այն գործի  
մէջ, որի մասին չ'զիտես ոչինչ, պատասխանեց Ցե-  
ղստինը այնպիսի խստութեամբ, որ Մարթան այլ  
ևս չ'մարձակուեց հակածառել։ Քո Գուբերտը չ'ար-  
երեխայ է և արժանի է օրինակելի պատճի։ Շտապիր  
ինձ մօտ, չարագործ, ապա թէ ոչ ես կ'զամ քեզ  
մօտ։ Գուբերտը կամաց վերկացաւ տեղից և աներ-  
կիւղ մօտեցաւ հօրը, թէպէտ վախից սիրու թըռ-  
թռում էր։

— Դու պնդում ես, որ չես տեսել Յովհաննէ-  
սին անտառում, հարցրեց Հայրը։

— Ու չեմ տեսել պատասխանեց Գուբերտը ար-  
տասուախառն ձայնով՝ որի մէջ պարզ երեսում էր նո-  
րա ներքին անհանգստութիւնը։

— Դու, երեխ, և չ'զիտես թէ Յովհաննէսի ա-  
մանը ինչպէս ջարգուեց։ Լաւ մտածիր, որովհետեւ  
այսպիսի դէպքերում ես կատակ անել չեմ սիրում։

— Ի՞նչ, աղաղակեց մայրը, որ լսելով այս՝  
յոյս ունէր Ցեղստինի բարկութիւնը թափել տալ  
իրան ատելի Յովհաննէսի վերայ։ Ի՞նչ ամանը կոտ-  
րուել է՞ այդ ի՞նչպէս պատահեց, անպիտան։

— Մայրիկ, ես չեմ կոտրել, հաւատացիր, պա-  
տասխանեց Յովհաննէսը,

— Նա ուղիղ է ասում, Մարթա, ասաց Հայրը  
նախ քան նորա աղաղակելը. միայն կրկին ինդրում  
եմ այս գործի մէջ չ'մօնել իսկ գու, Գուբերտ, պա-  
տասխանիր իմ հարցին։

— Ես ոչինչ չ'զիտեմ ամանի մասին, ասաց  
Գուբերտը կամակորութեամբ, ես ոչ Յովհաննէսին  
եմ տեսել և ոչ ամանը, ի՞նչ կարող եմ զիտենալ  
գորա. մասին։

— Գուբերտ, լաւ մտածիր, զգուշացրեց նորան  
Հայրը, մտածիր, թէ կայ մի աչք, որ աեսանում է  
և խաւարում և բաց է անում ամեն ծածուկ  
գործ ուած չարագործութիւններ։ Նս բարի եմ ցան-  
կանում քեզ և ինդրում եմ, որ գու յայտնի ճառ-  
նաշես քո վատ արարմունքը, ասա՞ ինչ որ զիտես  
այս գործի մասին, միայն ուղեղը։

Գուբերտը չ'կարողացաւ աչքերը վեր բարձ-  
րացնել. նորա սիրու թռթռում էր երկիւղից։ Նա  
կանգնած էր իբր յայտնի յանցաւոր, այնուամենայ-  
նիւ չէր խոստովանում իւր արածը, որովհետեւ նա  
հաստատ համոզուած էր թէ ոչ ոք չէ տեսել։

— Հայրիկ, հաւատացիր, ես ոչինչ չ'զիտեմ։  
Ինչո՞ւն են ինձ մեղադրում, ես ոչ մի բանում յան-  
ցաւոր չեմ։

— Մէթէ մեղքը քո սրտում այդքան խոր  
արմատ է ձգել, որ գու համարձակվում ես այդպէս

կամակորուել հերքմանդ մէջ, ասաց Յելեստինը  
տիսրութեամբ: Ով իւր որդուն խնայումէ պատիմը,  
նա ինքն է պատրաստում իւր ծերութեան մէջ խղճի  
անհանգստութիւն և ի հարկէ ես այդ չեմ անկլ:

Այս ասելով նա մօտեցաւ պահարանին և  
չնայելով Գուբերտի յանկարծական աղաղակներին՝  
վերցրեց այնտեղից ուռենու Ճիւղեր, որոնցով մայրը  
շատ անգամ անիրաւացի պատժել էր խեղճ Յովի  
հաննէսին: Մարթան վագեց Յելեստինին բռնելու,  
բայց նա հրնտելով ասայ թէ՝ պատիմը ոչ մի ժա-  
մանակ այնպէս իրաւացի չէ եղել ինչպէս այժմ:

— Ես քեզ այժմ վերջն անգամ հարցնում եմ,  
ասաց հայրը խստութեամբ՝ դառնալով դէպի երե-  
խան, կամենում ես խոստովանել Ճշմարտութիւնը,  
պատասխանիր:

Գուբերտը նայեց մօրը, որ աչքով էր անում  
կատարելու հօր կամքը. բայց նա կամ չէր հասկա-  
նում, կամ կարծում էր թէ իւր կամակոր մերժո-  
ղութեամբ կ'հեռացնէ սպառնացող պատիմը, ուստի  
պատասխանեց լրբարար թէ սուտ չէ ասում, այլ  
ուղեղ:

Թէպէտ ինձ ցաւալի է, որ ես ստիպուած  
պատժելքեզ, բայց ինձ համար հազար անգամ ա-  
ւելի ցաւալի է քո կամակորութիւնը, ասաց հայրը:  
Տայ Աստուած, որ այս պատիմը լաւ հետեանքներ  
ունենայ:

Այս ժամանակ բռնելով մեղաւորին ձախ ձեռ-

քով՝ այնպէս խիստ պատժեց, որ նորա աղաղակնե-  
րը լսուեցան բոլոր շրջակայքում, և ոչ թէ միայն  
տիսրած մայրը սկսեց թափել կարեկցական արտա-  
սուք այլ և բարի Յովիաննէսը: Երբ Գուբերտը պատ-  
ժից յետոյ լալով պահուեցաւ անկիւնում, հայրը  
պատմեց, թէ ինչպէս ինքը աշխատանքից վերադառ-  
նալիս տեսել էր Գուբերտին և վկայ էր նորա Ճած-  
կաբար փոս փորելուն իւր եղբօր համար:

— Ես լսեցի նորա ինքն իրան խօսելը և տե-  
սայ նորա ալտարքը, բայց այս անպիտանի կամակո-  
րութիւնը ինձ համար աւելի ցաւալի է, աւելացրեց  
Յելեստինը ուղարկելով երկու երեխաներին ևս քնե-  
լու: Նոքա քարի գիշեր» ասելով Ծնողաց՝ բարձրա-  
ցան սանդուղներով տնակի վերնատունը. այսպէս  
հայրը և մայրը մնացին միայնակ և երկար խօսեցին  
երկու որդիկերանց մասին:

— Իու, Գուբերտի խօսքերով՝ խափվում էիր  
և յետոյ խափում և ինձ: Մինչեւ այժմ բոլոր պա-  
տիմները խեղճ Յովիաննէսի վերայ էին փորձվում,  
իսկ այսուհետև այս ամենը պիտի փոխուի յօգուտ  
քո անկարգ որդու:

Թէպէտ մայրը ամենայն միջոցներով աշխա-  
տում էր պաշտպանել Գուբերտին, բայց հայրը միւ-  
անգամ Ճանաչելով Ճշմարտութիւնը՝ այլ ևս չէր  
խափվում: Նա յայտնեց կնոջը թէ Յովիաննէսը  
այսուհետև կարող է իւր աղաւ ժամերը անցնել  
անտառում, փոխանակ Գուբերտին իբրև խաղալեք

**Ճառայելու:** Սորա վերայ աւելացրեց նա և այն թէ.  
ողու պարտաւոր ես այս օրուանից սկսած առանձին  
ուշադրութիւն դարձնել Յովհաննէսի վերայ։ Մարտ  
թան խոստացաւ կատարել այս և այսպիսով բանը  
միանգամից բոլորովին վերջացաւ։

**Միւս առաւոտը** Յելեստինը գնաց ուսուցչի  
մօտ և երկար խօսեց նորա հետ Յովհաննէսի և  
Գուբերտի մասին։ Պ. Միլդերը գովեց Յովհաննէսին  
իսկ Գուբերտից շատ բաներում գանգատուեց։

—**Այնու ամենայնիւ,** աւելացրեց նա, ես չեմ  
կարծում, որ նա չար սիրո ունենայ։ Իմ կարծիքով  
նա անկարգացել է մօր անհոգութիւնից և այս աղ-  
բիւրից իսկ սկիզբն են առնում նորա բոլոր չարու-  
թիւնները։ Նթէ գու աշխատիս, որ նորան խիստ  
պահեն, ես չեմ կարծում, որ նա չ'ուղղուի։ Նորա-  
բոյս ծառը թէպէտ և շատ ծուռն է, այնու ամե-  
նայնիւ կարելի է զանազան զգուշաւոր միջոցներով  
ուղղել նորան, բայց եթէ նա ծերանայ՝ այլ ևս նո-  
րա վերայ չե կարելի ոչ մի կերպով ներգործել։ Խըս-  
տութիւնը դեռ ես ոչ ոքին չէ ֆնասել և սա պարզ  
երեւում է Յովհաննէսի վերայ։ Ո՛չ, այս մանուկը ինձ  
չափազանց ուրախացնում է։ ինչպէս նա աշխատա-  
սէր և ուշադիր է։ ինչպիսի սիրով նա դառնում է  
դէպի Աստուած և ինչպիսի սիրով սովորում է նո-  
րա պատուիրանները։ Յաւալի՛ է, եթէ նա փայտա-  
հատից բարձր չ'լինի։

Յելեստինը շարժեց ուսերը ասելով. Մեզ կ'ընկ-

նի միայն փառաբանել Աստուծուն, որ նա մեզ տալիս  
է հանապազօրեայ հացը. Եթէ երեխան Աստուածա-  
պաշտ և բարի լինի ամենայն արհեստներում ես կարող  
է ծառայել և Աստծուն և մարդկանց։ Բարի  
փայտահատն ես կարող է ծառայել ճշմարտութեան։  
ես յուսով եմ, որ Յովհաննէսը մի ժամանակ աւելի  
բարձր կ'լինի իւր ընկերներից,

**Այս ասելով նա սեղմեց ուսուցչի ձեռքը և**  
գնաց իւր քրտնաթոր օրականին։

**Եթէ գտնիս բարեկամ՝ ուրախացի՛ր.**

Ակսած այն օրից, երբ Յովհաննէսի անմեղու-  
թիւնը յայտնի եղաւ, Յելեստինի տան մէջ շատ  
իրողութիւններ, գէթ արտաքուստ, փոխուեցան։ Այն  
պատիժը՝ որ ստացաւ Գուբերտը և հօր պատուեր-  
ները՝ թէ ինչպէս պէտք է նա իրան պահի, նորա  
վերայ արին մէծ տպաւորութիւն։ այնպէս որ նա  
այլ ևս չէր համարձակվում նեղացնել եղօրը և ոչ  
յայտնի կերպով զրպարտել. թէպէտ նա իւր սրառում  
ատելով ատում էր նորան և միշտ նորա հակառակն  
էր գործում՝ ուր միայն զիտէր, որ իւր արածները  
չեն իմացուիլ։ Յովհատննէսն ես, իւր կողմից, ամեն  
կերպով և ամեն միջոցներով աշխատում էր ապա-

ցուցանել թէ յիրաւի ինքը սիրում է նորան և թէ  
ներել է նորա բոլոր առաջուայ յանցանքները: Թէ-  
պէտ Մարթան պէտք է որ նկատած լինէր այս ա-  
մենը, որովհետեւ նորա աչքերը այժմ բացուած էին,  
այնուամենայնիւ նա դեռ ևս չէր կարողանում հա-  
մոգուել որ Յովհաննէսն է անմեղը: Ընդհակառակը,  
նորա ատելութիւնը գէպ ՚ի անմեղ երեխան աւելի  
և աւելի մեծանում էր, թէպէտ նա այժմ պահում  
էր իւր ատելութիւնը և չէր հալածում նորան,  
ինչպէս առաջ, հայհոյական խօսքերով և ծեծե-  
լով բայց և այնպէս չէր արգելում Գուբերտին ամե-  
նայն քայլում գործելու անբաւականութիւններ: Հօր  
ներկայութեան ժամանակ, Մարթան այնպէս էր  
ցոյց տալիս իրան, իբր թէ հաւասար է սիրում եր-  
կու երեխաներին և սորանով հեշտ կարողանում էր  
խափել պարզապահիրա Յելեստինին, մանաւանդ, որ  
վերջինը Յովհաննէսից այլ ևս գանգատ չէր լսում:  
Յին ժամանակ Յովհաննէսի դրութիւնը փոքր ինչ  
լսացաւ: Ուզեղ է, թէպէտ նորան տուել էին իրա-  
ւոնք խաղալու, նա կարող էր գնալ անտառը  
և մայրն ու եղայրը նորա հետ լսւ էին վար-  
վում: բայց Մարթայի և Գուբերտի այսպէս լաւ  
վարուելը ոչ թէ սիրոյ ձնունդ էր, այլ հօր երկիւ-  
ղեց, թէպէտ Յովհաննէսը այս բանը իւր պարզա-  
պեց, թէպէտ Յովհաննէսը այս բանը իւր պարզա-  
պեց: Նկատում: Նա այժմ բոլորովին  
բաղդաւոր էր և գոհ իւր վիճակից ու ամեն առա-  
ւում երեկոյ շնորհակալութիւն էր մատուցանում

Ասածուն իւր ներկայ դրութեան համար: Նա  
յաճախ, թէպէտ ոչ ամենայն օր, գնում էր անտա-  
ռը և զուարձանում բնութեան գեղեցկութիւնով, որ,  
կարծես, նորա համար էր պահէլ իւր զուարժութիւնը:  
Փոքրիկ երգիւ թռչունները նորա մշտական սիրելի-  
ներն էին, ուստի նա միշտ առանձին ուշադրութիւն  
էր դառնումնոցա վերայ: Նրբ նա թփերի կամ  
ծառերի ծիւղերի վերայ բոյն էր գտնում, որ շատ  
յաճախ էր պատահում, իւրաքանչեւր օր զգոյշ մօ-  
տենում էր նոցա և ուրախանում՝ նայելով էգի վե-  
րայ, որ ամենեին չ'վախենալով՝ Յովհաննէսին էր  
նայում իւր պարզ և փայլուն աչքերով: Կարծես,  
այս քնքոյշ արարածները հասկանում էին թէ նա  
իւրեանց ոչ մի չարիք չե հասցնիլ: Աւ, յիրաւի,  
Յովհաննէսը չէր զիկումնոցա ոչ ձուերից և ոչ սի-  
րելի ձագուկներից, այլ ընդհակառակը, ամբողջ ժա-  
մելով կանգնած սիրենոսի կամ ուրիշ թռչնի բնի  
մօտ նայում էր թէ ինչպէս ծնողները, թռչուտելով  
այս և այն կողմ, կերակուր էին բերում իւրեանց  
քաղցած ձագուկներին: Մի անգամ՝ Հօր, մօր և  
եղանակ բացակայութեան ժամանակ Յովհաննէսը գնաց  
իւր սիրելի անտառը և այնտեղ պարկեց հովանալու  
կանաչ գորգի վերայ, որի բարձր խոտերը, համա-  
րեա, բոլորովին ծածկում էին նորան: Այստեղ նա  
մի առանձին բաւականութեամբ թռչուններ էր կան-  
չում, որոնք չ'անմելով նորան՝ շատ մօտիկ էին  
թռչում և ուստանելով խոտերի վերայ որոնում էին

Հրաւիրող ընկերին, որի ձայնը տարածվում էր ամբողջ անտառում. բայց յետոյ նկատելով մարդկային դէմք՝ վախենում էին և որոնում ապաստանարան ծառերի վերայ:

Այն րոպէին իսկ, երբ Յովհաննէսը հանգիստ պարկած խոտի վերայ սիրենոսներ և գեղձանիկներ էր կանչում՝ անտառի միջի շաւղով գնում էր մի երիտասարդ, որ մի առանձին ուշադրութիւն էր գարձնում այն երգի և ծվծվոցի վերայ, որ լսում էր բարձր խոտերի միջեց: Այս երիտասարդը տասն և ութ տարեկան էր. նորա զուարժ երեսը արտայայտում էր բարութիւն և անկեղծութիւն. թէպէս նորա աշքերը երբեմն, կարծես, վայրենաբար էին փայլում բայց փոքրիկ երեխան անգամ դժուար թէ վախենար նորանից: Երիտասարդ ճանապարհորդը կրում էր իւր մէջքին մի փայտեայ արկղեկ, ծածկուած մոխրագոյն քաթանով, այնպէս որ չէր տեսնը գումար թէ ինչ կար այս արկղեկում: այնու ամենայնիւ կարելի էր այս իմանալ այն անսովոր շարժմունքներից, որ նկատելի էր արկղեկում, մանաւանդ, նորա միջեց արձակուող ծվծվոցներից և թռչնական երգերից: Հեռուից արդէն կարելի էր նկատել որ այս երիտասարդը թռչնորս էր, և որ, իւր թեթև արկղեկն ուախն՝ անցել էր շատ երկրներով:

Թռչնորսը լսելով խոտերի միջեց արձակուող ծվծվոցը՝ շեղուեց ճանապարհից և սկսեց ծածկաբար մօտենալ այն տեղին՝ ուր Յովհաննէսն էր պար-

կել որ ամենեին չ'պիտէր, թէ բացի թռչուններից իւր երգին մարդ ևս լսում է: Թռչնորսը զարմացմամբ շարժեց գրլուխը և վայր գնելով իւր արկղեկը հանեց գրպանից մի սուլիչ ինչափ ունէր և Յովհաննէսը: Նա սկսեց հրաւիրել իւր մօտ խոտերի մէջ պահուած թռչնակին, բայց Յովհաննէսը այս հրաւիրքի վերայ ամենեին ուշադրութիւն չէր դարձնում. և, շատ կարելի է, կարծում էր, թէ սա մի փոքրիկ սիրենոս է, որ գեռ ևս ծերերից չէ սովորել լաւ երգել, որովհետեւ երիտասարդը համեմատելով Յովհաննէսի հետ, շատ վատ էր ծվծվացնում այս թռչնի երգը: Վերջապէս, երիտասարդը, երեկի, կարծելով թէ սա մի վանդակում բռնուած թռչուն է սկսեց որոնել նորան բռնող թռչնորսին և նորա թակարթները. բայց, չ'գտնելով ոչինչ, արտասանեց քթի տակ մի քանչ անհասկանալի խօսքեր, որոնք, երեկի, յայտնում էին նորա զարմանքը: Նա սկսեց աւելի և աւելի մօտենալ Յովհաննէսին, մինչև այնտեղ, ուր արդէն երգը լսում էր, կարծես, իւր ոտի մօտից: Այն ժամանակ իսկ, երբ նա ծռուելով սկըսեց զգուշաբար քրքրել խոտը՝ յանկարծ աղաղակեց բարձր ծիծաղելով:

— Այս, գու, հանաքչի, ասաց նա առանձնապէս շեշտելով սոյն բառը և դառնալով գէպի մեր Յովհաննէսը, որ երիտասարդից աւելի էր շուարած այս թռւս և թարմ գէմքի յանկարծակի յայտնու-

ելուց, որ թէքուած նայում էր նորա վերայ չետաքրքրութեամբ:

— Ա, իս, դու, հանաքչի, կրկնեց թռչնորար, միթէ դու կամենում էիր ծաղրել իմ վերայ, որ կանչեցիր ինձ քեզ մօտ անտառի և ծահիճների միջով:

— Ես քեզ միթէ կանչեցի՞, պատասխանեց Յովհաննէսը կամաց վերկենալով տեղից և թափտալով իւր երկայն փայլուն և գանգուռ մազերից չոր խոտը և մամուռը: Խնչի՞ եկար այստեղ և խանգարեցիր պարապմունքս, մինչեռ ես քեզ չեմէլ ծանառում:

— Մի բարկանար, իմ սիրելի, ասաց թռչնորար պարզամտութեամբ տալով Յովհաննէսին իւր ձեռքը, իմ փախցրած միքանի թռչուններին, եթէ կամենաս, հեշտութեամբ կարող ես կրկն կանչել. ով որ քեզ պէս լաւ կարող է երգել թռչնական երգեր, նորան այդ ոչինչ է: Բայց այժմ առա ինձ ով է, քեզ սովորեցրել այդ:

— Իրանք իսկ թռչունները, նոքա էին իմ ուսուցիչները, պատասխանեց Յովհաննէսը ժպտելով, բայց խնչի՞ես այդ Հարցնում:

— Զէ որ թռչուններ ես էլ եմ սիրում, աւելացրեց երիտասարդը: Մեր երկրում՝ նվարցվալդում, ուր բնութիւնը նշյապէս գեղեցիկ է ինչպէս և այստեղ՝ Հարցում, ես այլ ոչնչով չեմ պարապում, եթէ ոչ թռչուններով: Ամբողջ օրեր ես անցնում:

Եմ անտառում, բռնում եմ ինձ պատահած թըւչուններին և երեկոյները, մանսաւանդ ձմեռը, բըռնածներիս սովորեցնում եմ զանազան կատակներ՝ ինչպէս օրինակ՝ քարշել դէպի ինքը կերակրով լի փոքրիկ սայլակը և այլն: Բացի սորանից սովորեցնում եմ նոցա զանազան երաժշտական կարգաւորուած տաղեր. և գարունը, երբ նոքա այս ամենը սովորած կ'լինին՝ դնում եմ նոցա ահա այս արկղիկում և տանում եմ հեռաւոր մեծ քաղաքներ ու ծախում չափաւոր գնով: Ուղիղ է, թէպէտ երբեմն ցաւալի է ինձ ծախելը աշխատասէր փոքրիկ աշակերտներիս, բայց որովհետև մայրս և փոքրիկ եղբայրներս տանը հիւանդ պարկած են և չեն կարող հաց ձարել ուստի ես պէտք է աշխատիմ, որ կարողանամ կերակրել նոցա. իսկ հայրս վաղուց արդէն մեռել է: Բայց ես այնպիսի բաներ եմ խօսում, որոնք քեզ չեն վերաբերում, աւելի լաւ է, ասա անունդ ինչ է:

— Յովհաննէս է անունս, իսկ հօրս—Ցելեստին Վագներ. նա փայտահատ է, պատասխանեց երեխան ժպտելով որին շատ դուր եկաւ երիտասարդի պարզաբանութիւնը: Իսկ քո՞ անունդ ինչ է:

— Անունս և ազգանունս Տրաուգոտ Նպեցլէ է, արհեստութունն է—ահա և բոլորը—ասաց ծիծաղելով օտարականը: Ասա ինձ դու էլ թռչնուս չես:

— Ու դեռ ես ես ուսումնարան եմ գնում և գեռ թռչուն չեմ պահել տանը, պատասխանեց Յովհեռ դեռ թռչուն չեմ պահել տանը, պատասխանեց Յով-

հաննէսը, բայց ես հաստատ գիտեմ որ մայրիկս եր-  
բէք չի թողնիլ ինձ տանը թռչուններ պահելու:

— Դու կարող ես թռչուններ սովորեցնել Յով-  
հաննէս, և տանել նոցա հետու քաղաքներ ծախե-  
լու, սորանով դու շատ փող ձեռք կ'բերես, ասաց  
Տրաուզոտը, դու այնքան հմուտ ես թռչուն կան-  
չելում, որ հեշտութեամբ կարող ես որսալ նոցա և  
հեշտութեամբ սովորեցնել եթէ համբերութիւն ու-  
նենաս: Համբերութիւնը այս արհեստում շատ հար-  
կաւոր է, իմ սիրելի, որովհետև փոքրիկ երգիչները  
երբեմն շատ կամակորվում են, բայց համբերութեամբ  
կ'յաղթես ամեն արգելներին: Իմ արկղիկում կայ մի  
ածկտիկ, որ գեղեցիկ երգում է ամբողջ վեց երգ:

— Ածկտիկը բոլորովին չէ երգում և եթէ եր-  
գում էլ է շատ քիչ, ասաց Յովհաննէսը տհաճու-  
թեամբ, դու Տրաուզոտ, երեխ, կամենում ես խա-  
բել ինձ, բայց մի անիր այդ, եթէ կամենում ես  
որ մենք միշտ բարեկամ մնանք. ես ստախօներին  
ամենեին չեմ սիրում:

— Ես ուղեղ եմ ասում, աւելացրեց Տրաուզոտը:  
Ես քեզ արգէն այնքան սիրեցի, որ կամեցայ փոքր  
ինչ կատակ անել, այնու ամենայնիւ սա մի լաւ բան  
չէ:

— Բայց լսիր, Տրաուզոտ, ասաց Յովհաննէսը,  
հանելով իւր սուլիչը և երգելով նուրբ բայց միա-  
նման երգը ածկտիկի, ահա ածկտիկի երգածը, ես այս

շատ լաւ գիտեմ, որովհետև դոցանից այստեղ թէ  
գարուն և թէ ձմեռ շատ կան:

— Վո ասածը ուղեղ է, իմ սիրելի, բայց եթէ  
նոցա սովորեցնես զանազան երգեր՝ նոքա կ'սովորեն:

— Զեմ կարծում, Տրաուզոտ, ասաց Յովհան-  
նէսը շարժելով զլուխը, թէպէտ դու այդ այնպէս  
ես ասում, որպէս թէ դա լինէր, յիրաւի, ուղեղ  
բայց ինձ թռուում է թէ դու կատակ ես անում:

— Լ աւ, եթէ այդպէս է, կամենում ես լսել  
նորա երգելը, բայցազանչեց Տրաուզոտը, փոքր ինչ  
սպասիր, կամ աւելի լաւ է արի ինձ հետ:

Յանկանալով աւելի շուտ հաստատել իւր խօսքե-  
րի ճշմարտութիւնը՝ Տրաուզոտը բռնելով Յովհան-  
նէսի ձեռքից տարաւ իւր արկղիկի մօտ, որի վե-  
րայից իսկոյն հանեց քաթանը: Յովհաննէսը մեծ  
զարմանքով նայեց այն գանձի վերայ, որ բացուեց  
իւր առաջը: Նացկոցի տակ կային շատ վանդակներ  
մինը միւսի մօտ. իւրաքանչեւրի մէջ նստած էր մի  
թռչուն, երբեմն և երկու. նոքա ուրախ երգում էին  
և ծվծվում: Յովհաննէսը ուրախութիւնից սկսեց  
ծափահարել և բացագանչել. «ախ, ի՞նչ գեղեցիկ է  
այս, ինչքան թռչուններ կան այստեղ և, ի՞նչպէս  
նոքա ուրախ և զուարթ են:

— Եւ ինչպէս հմուտ են երգելու և զանազան  
կատակներ անելու մէջ, աւելացրեց Տրաուզոտը Ժըպ-  
տելով: Նայիր այս կարժառին, սա ամենալաւն է  
իմ աշակերտներից. նա գիշերով ամբողջ կէս ժամ

երգում է և այնքան ընտել է ինձ՝ որ եթէ կամենամ՝ նա իւր կերակուրը կ'վերցնի իմ բերանից։ Հաւատացիր շատ սիրուն թռչուն է։ Այս կանեփուկն ևս լսւ է։ Նայիր ինչպէս նա իւր կերակուրը կըտցով քարշում է դէպի ինքը. ինչպէս կերակը փոքրիկ սայլակը բռնում է իւր չանգերով և ինչպէս ախորժակով է ուտում նա այժմ Ռւղեղ է, թէպէտ ես նորա վերայ շատ եմ չարչարվել, այնու ամենայնիւ ինձ յաջողուել է սովորեցնել նորան։ Իմ հրամանով նա կարող է այժմ սուտ սատկել և յետոյ վերթունել։ Ահա և, վերջապէս, իմ ածկալիկը, որ շատ լսւ է երգուն նայիր, Յովհաննէս, ևս նորան կ'հանեմ և նա կ'երդի մեզ համար իւր գիտեցած բոլոր երգերը։

Վարցվալդի ուրախ բնակիչը հանեց ածկովին վանդակով, դրեց իւր առաջ կոճղի վերայ և սկսեց ամեն կերպով փայփայել կամրափող թռչնիկին։ Առաջ նա չէր կամենում ցոյց տալ իւր ճարտարութիւնը և շուռ գալով վանդակի մէջ՝ իմացրեց թէ չէ կամենում երգել։

— Կա բարկանում է ինձ վերայ, որովհետեւ ես ընդհատեցի նորա քունը, ասաց Տրառոգօտը Յովհաննէսին, բայց փոքր ինչ ևս սպասիր, նա կ'երգի իւր գիտեցածները։

— Իմ սիրունիկ թռչուն, չնս երգիլ իմացածներից մի կտոր, ասաց Տրառոգօտը փաղաքշելով նորան։ Զե՞ն ցոյց տալ մեզ քո հմտութիւնը, իմ

թռչնիկ։ Զէ որ գու փայլուն փետուրներ ունիս և լսում ես միշտ իմ ասածը։ Երգիր, ինդրեմ, գէթմի երգ միայն։ Կամենում ես։

Եւ յիրաւի թռչնիկը կարծես թէ հասկանալով աիրոջ ասածը՝ կրկին շուռ եկաւ դէպի ին նա, շարժեց միքանի անդամ գլուխը, կարծես, տատանուելով և յետոյ բանալով կտուցը երգեց միքանի ամենանուրը և գուրեկան երգեր, բայց շուտով լռեց, և անշարժ կեցաւ։

— Կատ լսւ է, ասաց Տրառոգօտը ամենանուրը ձայնով, միայն շարունակիր, իմ սիրունիկ, և կ'ստանաս ընծայ այս հիւթալից և գեղեցիկ հատիկը, հապա նայիր։ Նա ցոյց տուեց խոստացած քաղցրաւենին. թռչունը սորանից գրաւուած սկսեց կըրկին երգել և այս անդամին այնպէս գեղեցիկ, այնպէս նուրբ և ախորժելիք երգեց, որ Յովհաննէսը զարմանքից չ'գիտէր ինչ ասէր. նորան սա մի կախարդութիւն էր թռուում։ Քիչ մնաց, որ աղաղակէր նա, բայց Տրառոգօտը զգուշացրեց նորան չխանգարելու. թռչնակին, որ երգելուց յետ իւր գիտեցած բոլոր երգերը ստացաւ խոստացած քաղցրաւենին։ Դնելով վանդակը արկղեկում՝ Տրառոգօտը հարցրեց Յովհաննէսին. «Ի՞նչպէս է, իմ բարեկամ, ևս քեզ խափեցի»։

— Ոչ, ոչ, բոլոր ասածներդ ուղեղ են, բացագանչեց Յովհաննէսը, բայց ասա՞ ինձ, ինդրեմ, ի՞նչ-

պէս կարողացար սովորեցնել այսպիսի գեղեցիկ երգեր:

—Եւ սա բոլորովին դժուար չէ: Տանը ես միշտ փոքրիկ արխիք ունիմ, որով լւրաքանչեւր երգ այնքան եմ երգում, մինչև որ թռչումը սովորի, աւելացրեց Տրաուգօտը: Կարելի՛ է և բերանի սուլելով սովորեցնել միայն սա այնքան յարմար չէ, որով հետեւ շատ ժամանակ է հարկաւոր, որ թռչունը սուլելով սովորի երգը: Սկզբում նոքա ուշագրութեամբ լսում են, յետոյ կրկնում են զանազան ձայներ և այսպէս փոքր առ փոքր սովորում են ամբողջ երգը: Ոյս, ի հարկէ, շուտ չէ լինում, բայց երբ նոքա ամբողջ երգը սովորեն երգել, այն ժամանակ ուսուցիչը չափազանց կ'ուրախանայ:

—Ի՞նչպէս ես կ'ցանկանայի պարագել թռչուններին սովորեցնելով, բացագանչեց Յովհաննէսը ախ քաշելով: Ես դոգա դժուարութեանները յանձս կ'առնէի, ևթէ մայրիկս թոյլ սար:

—Պէտք է նորան խոնահաբար խնդրել, աւելացրեց Տրաուգօտը: Զէ՞ որ դու այժմ տեսար թէ ինչպէս խնդիրքը ներդործեց ածկոտիս վերայ, նրբ դու հետ զշետէ կ'հմտանաս թռչուսոյցութեան մէջ կարող ես գնալ զանազան քաղաքներ և բաւականին փողը հրաշալիքները: Իսկ երբ տուն վերագանաս մի քանի լի ոսկով, կ'ուրախանան ամենքը, անկարծիք, և չորհակալ կ'ինեն քեզանից:

—Տեսնեմ, ինչ անեմ: Ես նորան շատ կ'իրանի լիմ, թէ թողնի, ասաց Յովհաննէսը մտածելով: Ի հարկէ թռչուսոյցութիւնը սկզբում ինձ այնքան չի յաջողիլ մրավինետեւ ամենեին հմուտ չեմ սորանում, և չգիտեմ ինչպէս սկսել գործը, բայց յուսով եմ, որ ժամանակով գործս լաւ գնայ:

—Ո՞նկարծիք, ինչի չպէտք է լաւ գնա, ասաց ուրախութեամբ նվարցվարլցին: Դու սուլելու մէջ հմուտ ես ինձանից, հետեւաբար թռչունների հետ աւելի հմտաբար կ'վարուեն: Դու ոյս ձմեռ պարագնիք թռչուսոյցութեամբ, ես եկող տաշրի կ'զամ այստեղ և երկուսս միասին կ'փնանք զանազան քաղաքներ ծախելու մեր թռչունիկները: Դիտեն ինչքան կ'ուրախանանք, երբ մեծ քաղաքներում միւմեանց հետ տեսնենք բոլոր հրաշալիքները: Իսկ երբ տուն վերագանաս մի քանի լի ոսկով, կ'ուրախանան ամենքը, անկարծիք, և չորհակալ կ'ինեն քեզանից:

—Ի՞նչ, բացագանչեց Յովհաննէսը, դու ինձ էլ կ'առնես քիզ հետ և կ'օգնեն իմ թռչունները ծախելու: Դու, երեխ, միայն կատակ ես անում:

—Ոչ, իմ բարեկամ, ոչ, ես կատակ չեմ աշնում, պատախանեց երիտասարդը: Ահա իմ ձեռքը, ես կ'վերագանամ եկող տարի, եթէ Աստուած առողջ պահէ: Զէ՞ որ ինձ ուրախալի է քո՞ ինձ հետ, ինելը: Երկուսս միասին աւելի ուրախ կ'ճսնագար հորդենք և կ'զուարձանանք տեսնելով զանազան հրա-

շալի բաներ: Այսէպս ուրեմն, իմ բարեկամ, ես կ'վերադառնամ եկող տարի և քեզ ել հետս կ'անեմ:

Յովհաննէսը այնքան ուրախացաւ այս առաջարկութեան վերայ, որ կարծում էր թէ երազի մէջ էր: Նա փաթաթուեցաւ երիտասարդին: Հարիւր ու հազար անգամ շնորհակալ եղաւ նորանից և խընդրեց գալու իւր ճնողաց մօտ և զիշերելու, բայց Տրաուգոտը չհամաձայնեց:

— Ո՞ւ ո՞չ ասաց նա, ես այստեղ արդէն բաւական շատախօսութիւն արի ինձ պէտք է շոապել, որ գիշերուայ հաննելուց առաջ այս լիոնները անցած լինիմ: Ցոյց տուր ինձ ճանապարհը և ես կասեմ քեզ թէ ինչպէս պէտք է վարուել որ թռչունը շուտ սովորի: Կամենում ես:

— Ի հարկ է, այժմ դեռ վաղ է և ես արագուն եմ, այնպէս որ կարող եմ ժամանակին տուն գառնալ, թէպէտ և սարի ծայրը տանեւմ քեզ:

Նա օդնեց նվարդվարդցուն բարձրացնելու արկղեկը նորա մէջքի վերայ և ուրախ առաջ էր գնում նորա հետ. ճանապարհին Տրաուգոտը զանազան հրահանգներ էր տալիս և բաց էր անում փոքրիկ գաղտնիքներ, ուրոնք յետոյ Յովհաննէսին շատ հարկաւորեցան: Նա լսելով ուշադրութեամբ իւր նոր բարեկամի ասածները տարաւ նորան մինչև սարի ծայրը, որտեղից արդէն ճանապարհը իջնելով մըտնում էր հովհար:

— Այստեղ ես քեզանից պէտք է բաժանուիմ,

ասաց նա արտասուքի կաթինսեր թափելով աչքերից. այս ինձ շատ ցաւալի է. ես, թէպէտ, ուրախութեամբ կ'գայի քեզ հետ աւելի հեռու, բայց նայիր արեգակը արդէն մայր է մտնում և ես շատ կարելի է ուշ համնիմ տուն:

— Գնա, Աստուած քեզ հետ, եթէ չես կարող ուղեկցել ինձ աւելի հեռու, աւելացրեց Նվարդվարդցին պարզասրտութեամբ. բայց սպասիր, ես քեզ կ'ընծայեմ մի բան, որ նորանով յիշես ինձ միշտ: Այն բոպէին նա վայր դրեց արկղեկը և նորա միջից հանեց մի վանդակ, որի մէջ թռչուում էր մի գեղեցիկ կարմրակատար:

— Նայիր, ասաց նա, այս թռնիկը ծվծվումէ, արձակելով միշտ «Մեցլէ» ձայնը: Նա մինչեւ այն աստիճան ընտել է ինձ, որ եթէ ես նորա հետ անտառը գնամ, նա չի թռչի: Երբ ես սորան բնից վերցրի՝ հազեւ թէ փետրաւորուած էր և սա այնպէս ընտելացաւ մարդկանց, որ ոչ մի բանի համար չի թռնիլ նոցա: Թող այս քեզ մօտ ֆնայ, Յովհաննէս, և երբ նա իւր ուրախակ երգը սկսի՝ միտէ բեր քո Տրաուգոտին, ես էլ քեզ միշտ կ'յիշեմ. երբէք չեմ մոռանալ:

Յովհաննէսը վերցրեց վանդակը. Նա այնքան սրտաշարժուած էր իւր նոր բարեկամի գործով, որ լաց եղաւ ասելով. Նորհակալ եմ քեզանից Տրաուգոտ. ես պէտք է շատ սիրեմ այս թռնակին և լաւ վարուեմ սորա հետ: Նա սորա համար մի մեծ

վանդակ կշինեմ և այնպէս մաքուլ կպահեմ որ,  
երբ գու եկող տարի մեր տուն գաս, ուրախանաւ:  
Հարիւլ ու հազար անգամ շնորհակալ եմ քեզանից,  
Տրառզօտ:

— Բառական է, իմ բարեկամ, չարժէ սա շնորհակալութեան: Ես քեզ ընծայեցի այս թռչնիկը  
միոյն այն պատճառով, որ գու յանձախ միադ բերես  
ինձ: Մեր բաժանման բովէն է, վերջին անգամ  
համբուլիս ինձ և դնա տուն, Ատուած քեզ հետ:

— Այս ասելով՝ Տրառզօտը փաթաթուեց արդէն լաց լինող Յովհաննէսին և ամուր սեղմեց նորան իւր կրծքին: Յետոյ նա վերցնելով արկղիկը և  
աչքերը սրբելով՝ արտգաբայլ սկսեց իջնել սարից:  
Նելքեռում նա յետ նայեց և աեմնելով Յովհաննէսին  
սարի վերայ վերջին անգամ ձայն արձակեց: «Մնա  
բարեաւ» և վերջապէս անյայտացաւ թփերի յետեր:  
Յովհաննէսը տիսուր տուն ուղեւորուեցաւ ձեռքին  
զգուշութեամբ բռնած վանդակը: Ճանապարհին նա  
ծանօթացաւ թռչնակի հետ և երբ նա, մութն ընկած  
տուն հասաւ, արդէն թռչնիկը բոլորովին ընւ  
տելացել էր նորան:

Իւր բարեկամից զըկուած Յովհաննէսը կամաց  
բարձրացաւ վերնատունը. կախեց վանդակը պատու-  
հանի մօտ. քաշուեց իւր անկիւնը և յիշելով իւր  
բարեկամին կրկին լաց եղաւ և արտասուքն աչքերին  
դեռ ևս՝ քնեց: Այս զրութեան մեջ գտաւ Յելեա-  
տինը Յովհաննէսին, որ որոնելով որդուն՝ եկաւ նո-

րա սենեակը և տեսնելով որ քնած է չ'զարթեցլեց  
նորան ու հանգիստ գնաց ներքեւ: Հայու զանազան  
իւրաքանչ այս առաջն մշտի և յարսին  
Գլուխ IV.

### Չեն կորչել չարչարանքդ և աշխատանքդ:

— Հայրիկ, ասաց միւս օր Յովհաննէսը, Հայ-  
րիկ, ես քեզ կպատմիմ ինչ որ երէկ ինձ պատա-  
հեց:

— Ի՞նչ է պատահել, հարցըրեց Հայրը:  
Յովհաննէսը պատմեց ամենը՝ թէ ինչպէս էր  
իրան գտել նվարցվալոցին, թէ ինչ էր խօսել իրան  
հետ և թէ ինքը մեծ սկը ունի թռչնուսոյցու-  
թեան:

— Դատարկ բաներ են, ասաց Յելիստինը, քեզ  
ինչ է հարկաւոր է այս անբան անասունների յետեկց  
ընկնել: Ես իմ կեանքում չեմ լսել որ կարելի է  
թռչնուներին բան սովորեցնել և գու դորանով  
կ'կորցնես ժամանակդ:

— Ի հարիկ, պնդում էր Մարթան, լաւ կլինի  
եթէ տունը շփոթուած լինի թռչնուներով: Հապա-  
համարձակուիր բերել թէպէտ և մինը, իսկըն կ'ար-  
ձակեմ նորան, և այնպէս մի ապտակ կտամ քեզ, որ  
հեշտ չես մոռանալ:

— Զատկիր քեդյա Մարթա, այդպէս շուտ մի գայլանար. ասաց հայրը, տես ինչպէս խեղճ տղին վախեցել է. մինչև անգամ նորա աչքերը թաց են՝ նա լաց է եղել:

— Ինչի՞ ես այդպէս վախեցել անմիտ, հարց-  
րեց փաղաքշելով խորթ-մայրը, լաց էլ ես եղել. ի՞նչ Հարկաւոր են քեզ թռչուններ, երբ մեզ ես ուտե-  
լիք հազեւ ենք ձարում, ի՞նչով կ'կերակրես նոցա,  
որտեղից պիտի գտնես կերակուր:

— Բայց չէ՞ որ, մայրիկ, այս փոքրիկ կենդա-  
նիները այնքան քիչ են ուտում, որ չարժէ դորա  
մասին խօսել. Հարկանները ինձ հածութեամբ կ'տան  
հատիկներ և սոցա նման կերակուրներ. պէտք է մի-  
այն խնդրել. ասաց Յովհաննէսը իննդրողական ձայ-  
նով: Յետոյ չէ՞ որ ծրառուգոտ նպեցլին, այս է նվարց-  
վարցու անունը և ազգանունը, ասում էր թէ ինքը  
քաղաքներում այս թռչունների համար ստանում է  
բաւականաչափ փողչ այնքան՝ որ կարողանում է պա-  
հել իւր հիւանդ մօրը, եղայրներին և քոյրերին:  
Նա ունի մի ածկոտիկ, որի համար, ինչպէս ինքը  
ասում է, կ'ստանայ հինգ տալերից աւելի: Եւ յի-  
րաւի շատ գեղեցիկ ածկոտիկ էր. նա հիանալի եր-  
գում էր ամբողջ վեց երգ:

— Հինգ տալեր, մի ածկոտիկ՝ համար. չէ՞ որ  
նոքա մեր անտառում շատ են, ասաց զարմացմամբ  
մայրը, որ կարծես զիջանել էր ուղում երեխայի  
իննդրքին: Հինգ տալեր, վաս չէր լինիլ այդ, եթէ

կարելի լինէր մի փոքրիկ թռչունի համար այդպիսի  
գումար ձեռք բերել որ շատ հարկաւոր է մեր ըն-  
տանիքին:

— Ե՛յ, կին, միթէ գու հաւատում ես տորա  
նման գատարի բաների, գլուխը շարժելով ասաց  
հայրը. գու միթէ չ'գիտէ՞ս, որ այս անմիտը, տա-  
րուած է թռչուններով, ուստի և հնարում է զա-  
նազան չեղած բաներ, որ ինչ է թողնենք նորան  
տանը թռչուններ պահէլու: Հինգ տալեր մի թրո-  
չունի համար, եթէ նոքա այդպէս թանգ լինէին,  
ազա մեր անտառում այսքան շատ չէին լինիլ:

— Այդ էլ ճշմարիտ է, ասաց Մարթան, յի-  
մար երեխան քիչ էր մնացել որ խարէր ինձ, հե-  
ռացիր, և եթէ տուն բերես թէպէտ և մի թրո-  
չուն, ես քո ականջները մի լաւ կ'բաշեմ:

'Ի զուր Յովհաննէսը աշխատում էր հաւա-  
տացնել հօրն ու մօրը, թէ իւր խօսքերը ճշմարիտ  
են. իզուր նա ցոյց էր տալիս թէ ինքը երբէք սուտ  
չէ խօսել. ոչ հայրը և ոչ էլ մայրը կամենում էին  
լսել նորան, պնդելով թէ կամ օտարականն է խարել  
նորան կամ ինքն է հնարում:

— Եթէ այս և եմ հնարում, հազար հրաեղից  
է պատուհանիս մօտ վանդակում կախուած կարմրա-  
կատարը, աւելացրեց Յովհաննէսը արտասուելով:  
Տրառուուր նորան ընծայեց ինձ և նա այնքան ըն-  
տել է, որ չե կորչել իմ ձեռքից, եթէ նորան, մին-  
չև անգամ, անտառը տանեմ:

Գողանով մենք կ'իմանանք քո խօսքերի  
ճշութիւնը, ասացին հայրը և մայրը միաձայն:

— Գնա շուտ և բեր նորան ներքեւ, աւելացրեց  
հայրը: Նուտովաբեր և բաց արա վանդակի դուռը,  
կ'տեսնենք այն ժամանակ քեզ մօտ կ'մնայ նա՝ թէ  
կ'թռչի ու կ'կորչի:

Յովհաննէսը վեր վագեց և մի ըոպէից յետոյ  
վերադառցաւ իւր հետ բերելով վանդակը: Նա աւ  
պահով էր իւր կարմրակատարի իրան ընտել լինելու  
մասին, որովհետեւ առաւօտը պարապել էր նորա  
հետ և թռչունը արդէն այնքան սովոր էր Յովհանն  
էսին, որ նորս կանչելուն պէս խիցն թռչում էր  
դէպի նա:

— Ահա հայրիկ, իմ կարմրակատարը, ասաց  
նա: Բայց առաջ քան թէ ես կ'բանամ վանդակի  
դուռը, խնդրեմ, մի բան խօստացիր ինձ:

— Ի՞նչ, ի՞նչ ես ուզում, ասա միայն:

— Ու եթէ կարմրակատարս կորչի, ես այլ ևս  
չեմ բերիլ ուրիշը և չեմ ասիլ քեզ թէ թոյլ տուր  
սովորեցնել նոյա, բայց եթէ նա մնայ ինձ մօտ,  
կամ եթէ կանչելուս պէս գայ, խնդրեմ թոյլ տալ  
ինձ պարապելու նոյա հետ:

— Ի՞նչ ես կարծում դու, Մարթա, այս բանի  
մասին, հարցրեց ծերը կնոջը. ինձ թռչում է թէ  
միայն կտակի համար կարելի է համաձայնել այս  
պայմանին:

— Ես համաձայն եմ, պատասխանեց մայրը,

ոլովհետեւ հաստատ գիտեմ, որ թռչունը կ'թռչի  
ու կ'կորչի՝ հէնց որ վանդակի դուռը բաց անէ:  
— Ուրեմն դու համաձայն ես, հայրիկ, դու  
էլ, մայրիկ հարցրեց երեխան:

— Այո, այո, մենք համաձայն ենք:

Յովհաննէսը ուրախացաւ և ժպտելով բաց աւ  
րաւ պատուհանը, նոյնպէս վանդակի դուռը և աւ  
նահ նայեց կարմրակատարի վերայ, որ շուտով  
թռաւ վանդակից, թևերը բացեց և նստեց տիլիսյի  
վերայ, որ գեղեցկութեամբ զարդարուել էր տան  
առաջ:

— Այ քեզ բան, Յովհաննէս, աղաղակեց  
հայրը ծիծաղելով տարուար:

— Իեռ ևս ոչ, հայրիկ, դու միայն նայիր աւ  
ւելացրեց երեխան վաղելով դուրս և կանչելով նու  
րան:

— «Մեցլէ», ձայնեց նա «Մեցլէ» այսաեղ արի:  
Կարմրակատարը լսելով կանչող ձայնը՝ թռաւ մի  
ձիւղից միւսը և մօտեցաւ Յովհաննէսին այնքան, որ  
սա երբ իւր ձեռքը մեկնեց՝ իսկոյն նա մի ոստիւ  
նով կանցնեց ձեռքի վերայ, իսկ ձեռքից ուստի  
վերայ:

— Ահա տեսնում ես հայրիկ, աղաղակեց ու  
րախութեամբ Յովհաննէսը, ուզիլ չէ՞ի ասում: Այժմ,  
անկարծիք, կ'թողնես ինձ թռչնուսոյցութեամբ պա  
րապել և պահել տանը այս սիրելի կարմրակատարիս:  
— Թողն ասածիդ պէս լինի. ոլովհետեւ դու

տարար գրաւականը, ուրեմն ևս այլաշմ կարող արգելել քեզ ասաց Ցելեստինը ժամուլով և ուրախ դէմքով նայելով գեղեցիկ թռչնակի շփոթուելուն վերայ:

— Բայց ևս չեմ համբերիլ թռչունների աղաղակին, ասաց Խորթ-մայրը բարկացած: Ես դուս կանեմ կարմրակատարին:

Ցելեստինը զարմացած նայեց կնոջ վերայ և արհամարհական կերպով ասաց. «Զի՞ որ դու խոստացար համբերել նոցա տուած նեղութիւններին, իմանալով՝ որ կարելի է օգտուել թռչուններից, ծախելով նոցա զանազան քաղաքներում: Իմ խօսքը սուրբ է և Յովհաննէսին արվում է լիակատար իրաւունք պահելու տան մէջ թռչուններ և պարապելու նոցա հետ, երբ ուսումնարանական դասերը պատրաստած կ'լինին: Թող նա վերնատան մէջ պահէ թռչուններ, ինչքան կամենայ և՛ ոչ ոք չունենայ իրառնք արդելել նորան: Ես այսպէս եմ կամենում:

Վինը բարկացած գուրս եկաւ սենեակից, որով հետեւ չէր կարող այլ ևս ընդգիմանալ իւր մարդու հաստատակամութեանը: Նա իւր մէջ սաստիկ բարկանում էր Ցելեստինի վերայ և հնարքներ էր մտածում թէ ինչպէս շուա վերջացնէ թռչունների աղմուկը: Նորս յետեից գնաց և Գուբերտը, որ խոհանոցում ասաց նորան. «Թող նա բռնէ այնքան՝ ինչքան կամենայ, բայց երբ նա տանը չի լինիլ, երբ

և իցէ բաց կ'անեմ պատուհանը, նոյնպէս վանդակների գուները և կ'արձակեմ այս յիմար արարածներին:

— Առիր, Գուբերտ, ասաց մայրը, եթէ մինը լսէր ասածներդ, քեզ մի լաւ հարուած կ'հասնէր հօրիցդ: Ուղիղ է, ես էլ չեմ կարող տանել այս թռչունների տուած նեղութիւններին և նոյա չլինելը թէպէտ ինձ շատ ուրախութիւն կ'պատճառէր, բայց ի՞նչ պէտք է անել, երբ հայրդ է ցանկանում: Այս ասելով նա դուրս գնաց. իսկ Գուբերտը միտքը դրեց կատարելու անպատճառ իւր դիտաւորութիւնը: Նա արդէն իւր մէջ ուրախանում էր եղբօր ապագայ թշուառութեան վերայ և մտածում էր իւր գործը այնպէս սարքել որ մեղաւորը յայտնի չլինի: Յովհաննէսը, ՚ի հարկէ, իւր եղբօրից այսպիսի բան չէր սպասում, ուստի առաջարկեց նորան մասնակցել այս գործին:

— Եթէ դու սկսէիր ինձ օգնել, ասում էր նա Գուբերտին, մենք միասին, մինչև Տրաուգոտի դարձը կարող էինք բռնել և սովորեցնել շատ թռչուններ: Այժմ ամենալաւ ժամանակն է. բոլոր թռչունները այժմ ձագեր ունին, որոնք, Տրաուգոտի խօսքով, աւելի ընդունակ են սովորելու քան ծերերը: Անտառում ես բռներ կ'գտնեմ, իսկ դու կ'պատրաստես վանդակներ և թռչուններին կերպար կ'տաս. այսպէս մեր գործը յառաջ կ'գնայ և եկող տարի մենք

Հաւասար կբաժանենք ատացած փողերը։ Համաձայն ևս զանգական պահանջանքը կամ առաջանալու համար է առաջանալ առաջանական պահանջանքը։

— Թող այդպէս լինի, համաձայն եմ, ասաց Դուքերաք, որին այս առաջարկութիւնը շատ դուք եկաւ, որովհետեւ յետոյ սորանով նա հեշտ կարող էր կատարել իւր զիտաւորութիւնը։ Յնկանք թէպէտ և վաղը։

Երկու եղբայրները խօսք կապելով իրանց մէջ, թէ ինչքան կարելի է աւելի շուտ և աւելի շատ շնեն վանդակները՝ գնացին ուսումնաբան, ուր Յովհաննէսը ուրախութեամբ պատմեց ուսուցին իւր Տրաուգօտ Նպեցլէին պատահելը և հօր թոյլատու ութիւնը թռչնուսոյցութեամբ պարապելու։

— Ահա տեսնո՞ւմ էք Պ. Միլդեր, ասաց Յովհաննէսը ուսուցչին, և այժմ կսկսեմ սովորեցնել թռչնունների ձագերին ամենալաւ երգեր, բայց թէ ինչ երգ սովորեցնեմ, այդ չ'զիտեմ։ Սովորեցնեմ այն երգելը, որ միշտ երգում են մեր աղերքը և աղջիկները՝ չարժէ, որովհետեւ նոքա, ի հարկէ, հասարակներ են, այն նշանաւոր պարոնների համար, որ այնքան մեծ փող են տալիս սոցա համար։

— Ո՛չ, Յովհաննէս այն մարդոց համար բոլոր

երգերը միևնոյն են, միայն լաւ գիտենան երգել և ընտել լինեն, որ, յիրաւի, ամենից գլխաւորն է։ Բայց ասոն ինձ, ի՞նչ կերպով պիտի սովորեցնես Կացաւ։

— Ես կսովորեցնեմ այն կերպով ինչ կերպով որ ասաց Տրաուգօտը, պատասխանեց Յովհաննէսը, ևս այնքան պէտք է շուացնեմ՝ մինչեւ նոքա սովորեն։

— Բայց այդ կերպով շրմանքներդ կցաւեն շատ անգամ, ասաց Պ. Միլդերը ժպանելով։ Եթէ դու սրնդով երգել գիտենայիր՝ ևս կարող էի քեզ օգնել։ Վերեկ սենեակումն ևս մի փոքրիկ սրինգ ունիմ, որ ուրախութեամբ քեզ կընծայէի, եթէ դու կարողանայիր օգտուիլ նորանու։

— Որնզի՞գ, բայց ազանչեց Յովհաննէսը ուրախութեամբ, ինձ նորհեցէք, ի սէր Աստուծոյ Տրաուգօտը ինձ ասաց թէ ինքը նորանով է սովորեցնում և թէ նորանով շատ շուտ են սովորում։ Եթէ ես իմ սուլիչով սովորեցայ թռչունների երգերը, հապա ինչ չ'չարժէ սովորեմ սրնդով երգել աշխատամիրութեամբ պարապելով։ Պ. Միլդեր, ընծայիցէք ինձ ձեր սրինգը, եթէ ձեզ հարկաւոր չէ։ Պ. Միլդերը շատ էր սիրում երեխային, ուստի նորախնդիրը չ'մերժեց, և ուղիղն առած, որինքը նորան պէտք էլ չէր։ Նա գնաց վերնայարկը, վերջրեց սըրինքը, սարքեց, իւղեց, բերեց ներքեւ և սկսեց երեկը նորանով ուշադիր ուկնդրին ցըց տալու համար

նորանով երգելու կերպը։ Յովհաննէսը սրնգով շամշուա սովորեց երգել նա չափազանց ուրախանում էր, եթի իրան յաջողում էր սրնգահարել այն երգերը, որ հազար անգամ լսել էր գիւղացիներից։ Քիչ չուրախացաւ և Պ. Միլդերը նկատելով Յովհաննէսի չափազանց ընդունակութիւնը երաժշտութեան մէջ։

— Դու քաջ տղայ ես, Յովհաննէս, ասաց նաքսելով իւր ձեռքը երեխայի գլխին։ Եթէ դու կամենայիր ջութակերգութիւն սովորել ես ուրախութեամբ քեզ դասեր կտայի։

— Ո՛չ, ես սրտանց ցանկանում եմ, պատասխանեց իսկոյն Յովհաննէսը, ամենայն բան, ինչ որ դուք կ'կամենաք սովորեցնել ինձ, ես պատրաստ եմ հաճութեամբ սովորելու։

— Եթէ այդպէս է, արի ուրեմն ինձ մօտ երբ ազատ ժամանակ ունենաս։ Բայց, իհարկէ, դու միշտ չես կարող գալ որովհետեւ տանը պարապած կլինիս թռչուններով։

— Այսու ամենայնիւ կ'գտնիմ—կ'գտնիմ ժամանակ, աւելացրեց Յովհաննէսը, ուրեմն կ'գամ և ոչ մի օր չեմ յետանալ։

Պ. Միլդերը գովեց երեխային՝ նորա ամենայն լաւ բանի պատրաստ լինելու համար և արձակեց նորան տուն, որովհետեւ ինքը պիտի այցելէր միքանի գիւղացիների, որոնք միշտ՝ կեանքի ամենայն

պարագաներում, խորհուրդ էին հարցնում այս բարի և խելօք մարդուց։

Յովհաննէսը ուրախութեամբ սուն վազեց և սկսեց որոնել Գուբերտին, որ նորա հետ գնան անտառը և վանդակներ շինելու համար Ճիւղեր կրտսրատեն։ Նա լաւ ծանօթ լինելով իրանց տան ըլրջակայքին՝ ուղղակի գնաց այնտեղ ուր առատ նիւթ կար վանդակների համար։ Նոքա շուտով բաւոկանին հաւաքեցին և շալակած տուն բերին, որ, ինչքան կարելի է, գործը շուտ սկսեն։ Տրատուգոտի տուսած կամրակատարի վանդակը ծառայում էր Յովհաննէսին որպէս օրինակ։ Թէև նա առաջ իւր շենածի մէջ չատ սխաներ արաւ. և չ'կարողացաւ նմանեցնել օրինակին, այնու ամենայնիւ նա իւր մշտական աշխատանքով գտաւ այնպիսի միջոցներ, որոնք հեշտացրին նորա գործը։ Անհամեր Գուբերտը աշխատում էր ոչ թէ այդ պարապմունքը սիրելուց, այլ չար մոտքով։ Թէպէտ նա յաճախ կամենում էր թողնել աշխատանքը, երբ նորան չէր յաջողում կամ մի բան շինել, բայց այն չար միաքը, թէ այս փոքր աշխատանքով յետոյ յարմար դէպքում զգալի վասա կարող է հացնել իւր եղբօրը, զսպում էր նորա նախանձը, այնու ամենայնիւ նա ծուլութիւնից հեռացաւ. պատճառ բերելով իւր անընդունակութիւնը այս գործին։ Այսպէս ուրեմն Յովհաննէսը թողեց նորան և սկսեց ինքը մենակ աշխատել գործը զլուխ բերելու։ Ի հարկէ, թէպէտ

նորա առաջի վանդակները անձունի էին և շատ զա-  
նազանվում էին ծրառքօտի տուած գեղեցիկ վան-  
դակից, այնու ամենայնիւ կարելի էր գործադրել  
Աշխատասէր երեխան յուսով էր, որ հետեւել փոր-  
ձերը աւելի կ'յաջողեն: Եւ, յիրաւի, մի քանի օրից  
յետոյ վանդակները սաացան գեղեցիկ ձեւ, իսկ մի  
քանի շաբաթից յետոյ, արդէն չէր կարելի նկատել  
զանազանութեւն ծրառքօտի տուածի և սոցա մէջ:

Ահա, Գուբերնա, ասաց մի որ Յովհաննէսը  
իւր եղօրը, որ այդ ժամանակ բոլորովին թողել էր  
աշխատանքը, ահա այժմ ես բաւականաչափ վանդակ-  
ներ ունիմ և ինձ պէսք է զնալ անտառը, այս փոք-  
րիկ սենեակները բնակիներով լինելու: Ես ուրախու-  
թեամբ կանեմ այս և յուսով եմ, որ բոլոր սե-  
նեակները ևս կ'լցուին:

Գուբերնարը իրան իր ուրախ էր ցոյց տալիս  
եղօր ասածին: Այնուհետև մեր Յովհաննէսը երբ  
վերջայնում էր իւր դասերը, սկսում էր թափառիլ  
անտառում: Բայց նա երբէք չէր մոռանում պատ-  
րաստել վաղուայ դասերը, որովհետև շատ էր սի-  
րում իւր ուսուցին և միշտ աշխատում էր չ'ստի-  
պել նորան իրան յանդիմանելու: Նա մոռանում  
էր իւր այս զուարծութիւնները, երբ դեռ ևս դա-  
սերը պատրաստած չէին: Գալնան վերջին Յովհ-  
հաննէսի սենեակը ընդունել էր մի տարօրինակ տեսք,  
բոլոր պատերից, ուր միայն բաց տեղ կար, կախ  
էին արած վանդակներ, որոնց մէջ թռչկոտում էին

զանազան թռչուններ: Այնաեղ կարելի էր գտնել  
ածկտիկներ, կարժառակատարներ, կանե-  
փուկներ, գեղձանիկներ, սիրենուններ, տորթիկներ,  
սարեակներ, և այլ անտառային թռչուններ, նոքա  
բոլորը ուրախ էին երեսում իւրեանց բանակուում:  
կարծես մաւացել էին ապատութիւնը: Սորա պատ-  
ճառը այն էր, որ Յովհաննէսը երբէք մեծ թռչուն-  
ներ չէր բանում, այլ հանում էր անտառում դժու-  
նուած հազարաւոր բներից մի մի ճակ, որ սոցա  
մայրերին մեծ ցաւ չպատճառէ: Նա միշտ իւր ժառ-  
մանակին էր կերակրում: Իւր աշակերտներին, թէ-  
պէս Գուբերնարը չէր օգնում նորան: Յովհաննէսը  
միշտ ունինուում էր բաւարարացուցիչ կերակրու-  
չունների համար: Որովհետեւ նա դիտէր թէ իւրա-  
քանչեւր թռչուն առաւելապէս ինչով է կերակրո-  
վում, ուստի միշտ աշխատում էր հաւաքել անտա-  
ռում կերակրի բաւականին պաշար: Յայի սորանից  
նա հարցը էր Պ. Միլիբերին և դիտէր մի ընդհա-  
նուր կերակրու, որով կարող էին կերակրուիլ հա-  
մարեա, իւր բոլոր աշակերտները, միայն նա սօրա-  
նով կերակրում էր այն ժամանակ, երբ պակասում  
էր իւրաքանչեւր կարգի կերակրուը: Յովհաննէսը  
միշտ զանազան հատիկներ էր ստանում հարեաննե-  
րից, որոնք շատ էին սիրում այս բարի երեխային  
և երբէք չէին մերժում նորա խնդիրը: Նորա չար-  
չարանքը թռչունների համար, ոչ թէ իսկապէս չար-  
չարանք էր, այլ պարապմունք և խաղ: Իւրաքան-

իւր առաւօտ նա զնում էր ամեն վանդակի մէջ  
բաւականաշտփ կերակուր և լցնում էր ջրով աման-  
նիրը, որ նա մեծ ճարտարութեամբ շինել էր կա-  
փց. ապա ինքն էր նախաձաշում և պատրաստուած  
գնում ուսումնարան: Դասերից յետոյ նա իւր թրո-  
չունների առաջ սրնդով երգում էր այն երգը, որ  
կամենում էր սովորեցնել նոցա, իսկ երեկոյեան  
գնում էր Պ. Միլլերից ջութակի դաս առնելու:  
Նորա յառաջարդիմութիւնը երաժշութեան մէջ  
շատ մեծ էր, այնպէս որ բարի ուսուցիչը ցաւում  
էր, որ Յովհաննէսի միջոցները չեն ներում, կասու-  
րելագործուելու այս արհեստում: Բայց Յովհաննէսը  
երբէք սորա վերոյ չէր մոտածում: Նա իրան այն-  
քան բախտաւոր էր զգում, որ ամեննեին չէր ցան-  
կանում սորանից աւելի լաւ կեանքի: Երբէք նորա  
միտքը չէր եկել թէ Գուրերուը կարող էր իւր դէմ  
չար գործել. իսկ մօր վատ վարուելուն նա սովորել  
էր արդէն մանկութիւնից:

ԳԼՈՒԽ V.

**Ուր չկայ հանգստութիւն, չկայ այն-**  
**տեղ և երջանկութիւն:**

Հասաւ ձմեռը, նորա հետ երեկցան և ձեան  
հիւսեր, որոնք յաճախ այնպէս ծածկում են հարցի

Հովիսները, որ բնակիչները մի քանի ամիս շաբա-  
նակ չեն կարողանում յարաբերութիւն ունենալ ու-  
րիշների հետ, և ապրում են ինչպէս ովկիանոսի  
միջի մի անապատային կղզում: Որէ թէ, ամենքը  
ցաւում էին, որ վերջացաւ ամառը և տարաւ իւր  
գեղեցիկ և պարզ առաւօտները. ցաւում էին, որ  
անցաւ պաղառատ աշունը, բայց մեր Յովհաննէսը  
երբէք ուշադրութիւն չէր դարձնում ոչ ձմեռնային  
թիֆիների վերայ, ոչ ձեան վերայ և ոչ սատարկ  
ցրտի վերայ, որ սառուց էր դառցրել անտառում  
վազող կարկաչոս առուակը, երբ դուրսը ցրտից  
Ճեղքում էին ծառերը՝ նա հանգիստ նստած իւր  
տաք վերնատան մէջ ծիծաղում էր ցրտի վերայ, ո-  
րովհետեւ ահազին փայտի կտորներ էին վառվում  
նորա վառարանում և առաջանում ամբողջ սենեակը:  
Նա իւր վիճակից շատ գոհ էր. այլ ևս չէր ախտում,  
որովհետեւ թռչունները նորան չափազանց ուրա-  
խացնում էին:

Ինձ շատ ցանկալի է, սիրելի ընթերցող, որ  
դու կամենաս գոնէ մի բոպէ լսել Յովհաննէսի բնա-  
կարանի մասին, որովհետեւ անկարծիք, այնաեղ  
կ'գոնես քեզ համար մի նոր բան:

Նորա սենեակն էր տան և երկու ոտնաշափ  
տարածութիւն, որ լուսաւորուած էր մի պատուհա-  
նով, որի ապակիները փոքրիկ և բոլորակածե էին:  
Դրան մօտ դրած էր մի նեղ մահճակալ որ ձգվում  
էր պատի ամբողջ երկայնութեամբ: Նա շինած էր

եղենայ հասալամկ տախտակներից, որի վերայ փոխանակ անկողնի դցած էր մի խոռիուու և ծածկած բրդեայ վերմակով։ Այս խոռիուուի վերայ իսկ քնում էր բարի Յովհաննէսը, իսկ վերմակը ծառայում էր նորան որպէս պատապարան գիշերուայ ցուրտ եղանակից։ Թէպէտ մահճակալը նեղ էր, բայց բաւական էր փոքրիկ երեխայի համար, որ պատկած այստեղ ձմեռուայ տմենացուրտ ժամանակ, չըլ վախինում ոչ քամու բարձրածայն աղողակից և ոչ ամենայն իր ճայթեցնող ցրախց։

Մահճակալի առաջ, համարեա սենետի մէջ տեղում, զրտած էր մի սեղան և երկու աթոռ, որոնց Յովհաննէսի շինածներն էին։ Նոքա ոչ գեղեցիկ էին և ոչ նուրբ շինուած, այլ ամուր, որովհետեւ Յովհաննէսը դոցա ամենապինդ կաղնուց էր շինել։ Սեղանի վերայ զրտած էին զանազան գործիներ, որոնց գործ էր ածում իւր բանուածքների մէջ։ Սեղանի արկղեկում զրտած էր սրինգը, նորա հետ և շատ սուլիչներ, որոնցով նա, ինչպէս թաշուն, երգում էր շատ տեսակ։ Սեղանի տակ զրտած էր մի մեծ արկղ, որի մէջ շինուած էին բազմաթիւ փոքրիկ արկղեկներ։ Մահճակալի տակ երեւում էին միքանի ամաններ։ Աէկի մէջ գտնվում էին զանազան հատիկներ, որոնցով նա կերակրում էր շատերին թըստներից, իսկ միւներում մասամբ տեղափոխած որթեր և մասամբ մրջենի ձուեր, որ իւր սիրելի սոխակներին և այլ միջատակիր թոշուներին չպա-

կասի թարմ կերակուր և քաղցրեղէն, որովհետեւ Պ. Միլդերը ասել էր Յովհաննէսին թէ եթէ դու առանձնապէս չ'աշխատես կերակուրի համար, քեզ դժուար կ'լինի պահպանել ամբողջ ձմեռը սիրելի ներիդ կեանքը։

Այսպէս ուրեմն բոլոր պատերը, ինչպէս արգէն ասացինք, ծածկուած էին վանդակներով, որոնց մէջ ուրախ թռչկոտում էին զանազան թռչուններ։ Պատուհանի երկու կողքերում՝ Յովհաննէսը զրել էր միքանի փոքրիկ եղեխններ, որ ձմեռն ևս իւր սիրելիները կարողանան զուարժանալ կանաչի տեսքով։ Եղեխնների ճիշերից կախ էր արել նա իւր ամենասիրելի աշակերտներին, որոնք գերազանցում էին մրւաներից իւրեանց յառաջադիմութեամբ։ Այսուղ կային՝ սոխակներ, կարժառներ, որոնք նախագահում էին միւներին իւրեանց գեղեցիկ երգելով։ Կային, կարմիրակատարներ և կանեփուկներ, որոնք մի առանձին ճարտարութեամբ ընդունում էին կերակուրը։ Այս բոլոր թռչունները ուրախ թռչկոտում էին տերեւների մէջ և չկար նոցա մէջ մինը որ չ'ձանաչէր իւր տիրոջը, կամ չհապտակէր նորաձայնին։ Երբ Յովհաննէսը կանչում էր նոցա դուրս էին հսնում իւրեանց զլուխները վանդակներից, թարթափում էին թեւերը և ծվծվում, որովհետեւ զիտէին թէ իւրանց կ'կանչէ միայն այն ժամանակ, երբ կամենայ մի որեւէ քաղցրեղէն տալ նորա սիրելիներից իւրաքանչիւրը ունէր իւր ա-

նումը. միայն մեր հին ծանօթը, որ «Մեցլէ» էր առանձնվում, ամենից լաւ տեղն էր կախած — պատուհանի մօտ, որտեղից կարող էր զուարձանալ և արտաքին տեսարանով։ Յովհաննէսը սորա հետ մի առանձին սիրով էր վարվում։ Խւրաբանչուր առաւտու, ամենից առաջ «Մեցլէն» էր ստանում կերակուր և մաքուր ջուր։ Յովհաննէսը չէր ինսայում ասելու նորան միքանի փաղաքշական խօսքեր. մինչեւ անգամ քաղցրեղէն աւելի յաճախ էր տալիս. այնու ամենայնիւ չէր կարելի նկատել, որ ուրիշ թուզուններ նախանձում էին նորան։ Այս փոքր, բայց կենդանի տարածութեան մէջ, նստում էր Յովհաննէսը։ Նա ուսումնաբանից վերադառնալիս այնքան էր միտում, որ քիթը կարմրում էր և ձեւները կապտում։ Չնայելով սորան նա ուրախ տուն էր մըտնում և դնելով սեղանի վերայ գրեթեր իսկոյն վագուս էր «Մեցլէին» միքանի փաղաքշական խօսքեր ասելու։ Սորանից յետոյ նա շինուալ ձեւները մօտենում էր վառարանին, որ ինչքան կարելի է շուտ տաքանայ։

—Այժմ կարելի է պարապել ուրախ «Հիպֆերլէի» հետ, ասաց նա մի օր ուսումնաբանից դառնալուց յետոյ, շարը չի կամենում սովորել թէպէտ լու ձայն ունի, ցաւալի է եթէ նա այսուհետեւ էլ չսովորի մաքուր և անսխալ երգել։

Այս ասելով Յովհաննէսը պատից վայր առաւ մի վանդակ և դրեց սեղանի վերայ։ Նորա մէջ նըս-

տած էր մի ուրախ և այսու այն կողմը թուշկոսով կարծառ։ Յովհաննէսը նորան մի փոքր ժամանակ հանգիստ թողեց. ապա վերցնելով սուլիչը սկսեց սուլել։ Պարմառը փոքր ինչ լսեց, նայեց Յովհաննէսին, մաքրեց կտցով փետուրները և միքանի անգամ այս ու այն կողմ թուշկոտելուց յետ վերջապէս հանգիստ նստեց։

Գեղեցիկ է, սիրելիս, ասաց Յովհաննէսը փափուկ ձայնով, միայն ուշք դարձրու այժմ ինձ, որ լաւ երգել սովորես. դու լաւ ձայն ունիս, ցաւալի է, եթէ անմշակ մնայ։

Կարժառը, կարծնս, լսում էր ուշագրութեամբ. այս որ տեսաւ Յովհաննէսը, իսկոյն սկսեց արգէն կանոնաւորապէս երգել զանազան երգեր։ Թռչնիկը վլուխը հանեց վանգակի ձաղերից, որ լաւ լի և չթուղնի ոչ մինը իրան ծանօթ ձայներից։ Յովհաննէսի վերջացնելուց յետ, նա մի բոպէ լոեց, ապա բանալով կտուցր սկսեց երգել։ Երգը առաջ յաջու էր գնում, բայց վերջը միշտ անկանոն աղաղակ էր դառնում։ Յովհաննէսը համբերութեամբ աշխատում էր ուղղել իւր աշակերտի սխալները միքանի անգամ կրկնելով։ Երկար ժամանակ իզուր էր անցնում նորա շարշարանքը. բայց վերջապէս կարժառը մոտերելով Յովհաննէսի դայլայլիկը՝ կրկնում էր աւելի և աւելի լաւ։

Այժմ բաւական է, իմ սիրելի, ասաց Յովհաննէսը, դու Ճիշտ կատալեցիլ քո պարտականութիւնը. ուշադրութեանդ համար շուտով ընծայ

կատանասու Հապա ինձ նայիր, բաց արա շուտով  
կտուցդ:

Ապրժառը բացեց կտուցը և Յովհաննէսը զցեց  
դեպի նա մի քաղցրեղէն, որ մի առանձին բռւա-  
կանութեամբ կուլ տուեցւ Սորանից յետոյ Յովհան-  
նէսը կախեց վանդակը իւր առաջօւայ տեղեց. Տաճ-  
կեց նորան պասառով, որ ընկերների երգը չիան-  
գարէ նորա հանգառութիւնը և յետոյ վերցրեց սրին.  
զը ուրիշ գաս սկսելու:

— Հապա գու այստեղ արի, կարմրալանջ, ա-  
սաց նա ածկակին, այստեղ արի և յոյց տուր թէ  
ինչպէս ևս ըմբռնել երգի: Հապա, իմ սիրելի, դասր  
երգիր:

Որովհետեւ թռչունը չեր կամենում կատարել  
նորա ասածը, ուստի նա տուեց խնձորի մի փոքրիկ  
կտոր, իսկ ինքը սկսեց սրնդահարել: Այժմ փետրա-  
զարդ երգիւը պատրաստվում էր կատարելու ուսուց-  
չի կամքը: Նա ցոյց տուեց որ ինքը լաւ կրթուած  
է և աշխատասեր աշակերտ:

Սորա յետեից եկան երրորդ, չորրորդ աշա-  
կերտները, որոնք հերթով երգեցին իւրեանց գասե-  
րը: Ապա Յովհաննէսը պահում էր իւր գործիները  
և գնալով ներքեւ՝ ծնողների մօս՝ փոխում էր իւր  
զերը և ուսուցչից դառնալով աշակերտ՝ կարդում  
էր, զբում, լուծում թռւարտնական խնդիրներ, ան-  
գիր սովորում և յետոյ գնում Պ. Միլդերի մօտ ջռւ-  
թակի գաս առնելու: Տուն դառնալիս սովորաբար

մութն ընկած էր լինում. նոյն ժամանակ գալիս էր  
մնանառից և հայրը, որ չնայելով սաստիկ ցրտին  
գնում էր իւր օրական աշխատանքին կորելու տե-  
րևափաթ ծառեր և կօճղեր: Ուրախ խօսակցելով  
նորա անցնում էին երեկոն, իսկ հետեւ ալ օրը մեր  
Յովհաննէսը լինում էր միւնոյն պարապմանց, միւ-  
նոյն աշխատանկից և միւնոյն սւրախութեղն մէջ:  
Այսպէս ահա անցնում էին օրերը:

Գարունը մօտ էր: Եատ շուտ՝ անսպասելի կեր-  
պով փչեցին հարաւային տաք քտմիները, սոցա զօ-  
րութեամբ հալուեց ձիւնը այսպէս շուտ, որ ամեն  
բլուրներից սկսեցին հեղեղներ հոսել և միքանի  
օրից յետոյ երկրի երեսից վերացաւ նորա սպիտակ  
ծածկոցը, որով նա ծածկուած էր ամբողջ ձմեռը:  
Քամիներին օգնութիւն համան տաք անձրեները,  
այսպէս ահա աղդէն Սարտին կարելի էր զաշտերում  
ձնծաղիկներ տեսնել որոնք յայսնում էին իւրեանց  
ողջոյնը սկսուող գարնանը:

Մարդիկ իւրեանց կողիտ զգացողութիւնից  
չկարողացն լիւն նոցա ձայնը, բայց նոր ծող խուռը  
և ծաղիկները, որոնք ծածկուած էին հողի տուկ, ինչ-  
պէս և թփերի ու ծառերի ձիւղերը, շուտով լսե-  
ցին, զարթեցաւ այն ժամանակ բուսականութիւնն  
իւր խոր քնից և զարդարուեցաւ գեղեցկութիւնով:

Առաջ երկեցան զատկուայ ծաղիկները և մա-  
նուշակները. յետոյ հոտաւէտ անտառային խոտերը,  
կեչի քնքոյշ տերեները, վործավակ սև փշենու սպի-

տակ ծաղեկները և յանկարծ ամբողջ մնտառը լցուա  
եցաւ պոյն զգոյն ծաղիկներով և կանաչ տերեներով։  
Փոքր առ փոքր վերաբացան և հեռու երկիրներ  
թռած թռչունները, ուր նոցա քշել էր հրեսիսա-  
յին քամու ահալի շնչումբ։ Ուրախ ծվծվոցով նոքա  
հասան խրեանց հայրենի անտառը, որ զարդա-  
րուել էր կանաչագեղ ծառերով և քաղցրաբոյր ծառ  
զեկներով։ Նոքա խրեանց թեթև թեթևով սկսեցին  
մի ծառից գէպի միւսը թռչուաել։

— Շուառվիմ ծրառոգօնն էլ կ'զայ, բացագան-  
չեց Յովհաննէսը ուրախութեամբ, շուտով կ'երեայ  
առ սարերի յետելից, կ'հանդիպի ինձ սիրալիր ող-  
ջունով, որպէս մի բարեկամի և կ'տանի ինձ իւր  
հետ հեռու և ընդարձակ աշխարհներ։ Երբ Յով-  
հաննէսը իսրաէ ուրախացած բարձր արտասանուո՞ւ  
էր այս խօսքերը՝ մի առանձին նախազգացութիւն  
յայտնուացաւ նորա մէջ, որ գաղտնի հրաւիրում էր  
նորան յառաջ գնալու և պատահելու իւր սպասած  
բարեկամին։ Նորան թռւում էր թե իւր բարեկամը  
պէտք է հէնց այն օրը գար, նորան կարծես մի բան  
ձգտում էր հեռուից ողջունելու նորան։ Նա սկսեց  
ուրախ առաջ գնալ այն ճանապարհով իսկ՝ որով  
պէտք է գար իւր բարեկամը։ Անտառը, մարգագե-  
տինը, հեղեղի վերայից անցնելու կամուրջը, մնացին  
նորա յետելը, նա արդէն լեռան ստորոտումն էր,  
ուր երբէք չէր եղել։ Այս այստեղ կանգ առաւ և քիչ մոտածեց, թէ

բարձրանամյ արգեօք սարի վերայ։ Եւր բարեկամին  
աւելի շուտ ականելու ցանկաւթիւնը հրաւիրում էր  
նորան յառաջ, բայց այն իսրածիքը, թէ դուցէ ինքը  
սիսալում է, բռնում էր նորան։ Վերջապէս նա  
բարձրանալ վճռեց։ «Երբ ևս սարի վերայ կլինիմ՝  
կ'բացուի առաջս մի ընդարձակ տարածութիւն, ուր,  
եթէ նշմարեմ Տրառոգօնիս յառաջ կ'վագեմ։ Բայց  
եթէ խարուած էլ լինիմ, ոչինչ հեշտ է սարից իջ-  
նելը։ Նա արագ քայլվով սկսեց յառաջ գնալ և  
կէս ժամից յետ հասաւ սարի ծայրը։ Նորա աչքե-  
րի առաջ բացուեց մի գեղեցիկ գաշտ, ծաղկազարդ  
հովիսներ և բլուրներ, զարմանալի միւզաւորուած  
ժայռեր, գեղեցիկ և զուրեկան մարգագետիններ,  
անսոսաններ, զետախներ, առուակներ, ընդարձակ ար-  
տեր և վերջապէս լայնածաւալ տատանուող համա-  
րեայ ծով, այս բոլորը նորա զբաւուած աչքերի ա-  
ռաջն էին, օինչպիսի գեղեցիկ և զսնագանակերպ  
պատկերներ ին բացագանչեց նա։ Մի քանի րոպէ  
հիացման մէջ, նա մոռացաւ իր բարեկամին, բայց  
յետոյ սկսեց ուշադրութեամբ նայել այնու ամենայ-  
նիւ չկարողացաւ նկատել նորա հետքը անզամ։  
Եհարկէ նա ընդարձակ հովաի մէջ նկատում էր  
փոքրիկ շարժուն կետեր, որոնց նա մարգիկ էր են-  
թաղրում, բայց սորանից աւելի նա ուրիշ ոչինչ  
չէր կարողանում նկատել այս բարձրութիւնից։ Նա  
ախ քաշելով թողեց այս գեղեցիկ տեսարանը տուն  
դառնալու։ Բայց տասը քայլ հազիւ էր առաջ զնու-

ցել, կանգնեց կրկին և յետ նայեց, որ գոնէ, մի  
անգամ ևս ձգի իւր հայտքը հրաշալի հովար վե-  
րայ: Նորա սիրալ սաստիկ տրբառմէր. նա դժուա-  
րութեամբ էր շունչ քաշում և նորա աչքերը փայ-  
լում էին:

— Շուտով, աղաղակեց նա, շուտով ևս էլ  
կ' գնամ այս գեղեցիկ արտերի միջով, շուտով մօտի-  
կից կ' տեսնեմ այսպէս բարձր օդի մէջ բարձրացած  
աշտարակները, այդ ընդարձակ դաշտերի միջի քա-  
ղաքները և գիւղերը: Շուտով կ' անհետանայ պա-  
տուարը իմ և այսքան գեղեցիկ, դրաւիւ և հետա-  
քրթքրական աշխարհի մէջ: Երկար ժամանակ երե-  
խան չէր կրողանում իւր աչքերը բարձրացնել այս  
չքնաղ տեսարանից. նա վերջապէս պառկեց փա-  
փուկ խոռի վերայ, զլուխը դրեց ձեռքի ափին, ե-  
րեկայելու զանազան յօյսեր և զուարձանալու իւր  
աչքի առաջ բացուող անման տեսարանով:

Զանազան մտածմննց և երեկայութեանց  
մէջ ժամանակը արագ անցնում էր և Յովհաննէսը  
իւր սուն դառնալը միտքը բերեց միայն այն ժա-  
մանակ, եթի արդէն արեւ մայր մտնելու վերայ էր,  
իսկ ծառերի ստուերները վաղուց արդէն բաւակա-  
նին երկայնացել էին: Այս ժամանակ միոյն նա  
վերկացաւ և իւր վերջին հայտքը ձգելուց յետ  
գեղեցիկ տեսարանի վերայ արագ քայլերով սկսեց  
փայր իջնել իւր հայրենի հովիտը: Հասնելով սարի

ատորոտը նա կմնի առաւ հանգառանալու, առաջ կա-  
մաց կամաց սկսեց քայլել:

Պեղեցիկ երեկոյ էր հօվտում արդէն տարած-  
վում էր վերջապյառ և մարգարեակներից երեկոյեան  
աղջամուղջը բարձրանում էր ինչպէս երևոյթ և մի-  
անալով կապոյտ երկնքի հետ անյայտանում էր:  
Լեռների կատարները վաւվուում էին մայր մտնող  
արեկ լուսով և բարձր ծառերի կտնաշ գագաթ-  
ները փայլում էին ուկեայ ձաճանշով: Այստեղ և  
այնտեղ բաժանուած ճառագայթները գանում էին  
ճանապարհ մինչեւ անգամ ամենացածր աեղերում,  
մանաւանդ այնտեղ, ուր լեռների շղթաները կրտ-  
րուած էին կրծերով, և ցոլանում էին ամենազե-  
ղեցիկ տեսքով հակառակ զառիվայրերի կամ անտա-  
ռի հեղեղ արագայնա աղիքների վերայ: Բայց այս  
բոլորը երկար շարունակուեցաւ, սառւերները շու-  
տով բռնեցին ամբողջ տարածութիւնը և միայն  
թեթև, սպիտակ և գաշտերի վերայից բարձրացրող  
աղջամուղջը խանգարում էր բոլորովին մթնանալուն:

Անընդհատ խաղաղութիւն էր տիրում անտա-  
ռում և Յովհաննէսը կամենալով կատարելապէս  
զուարձանալ գարնանային գեղեցիկ երեկոյով զնում  
էր աւելի գանդաղաքայլ: Յանկարծ նա կանգնեց մի  
փոքր մարգարետնի մօտ, որ շրջապատուած էր  
բարձր ծառերով և թանձր թփերով: Այստեղ ա-  
րածում էին այծեամներ, որոնց Յովհաննէսը իւր  
գալուստով չկամեցաւ վախեցնել: Կարծես, այս խե-

Հօք կենդանիները իմացան նորա մօտենալը, ուստի  
մէկը նոցանից բարձրացրեց դլուխը և նայեց այն  
կողմը, որ կողմից Յովհաննէսն էր եկել, բայց ոչինչ  
վուանդ շատեսնելով շարունակեց արածել, սովորն  
երթեն երթին ցցում էր ականջները, որ ոչ մի  
շնչիւն չ'անցնի առանց իւր լսելուն; Այսպէս ան-  
ցաւ մի քանի բովէ և այծեամները այնպէս մօտե-  
ցան Յովհաննէսին, որ նա կարող էր ձեռքով բռնել  
նոցա: Յանկարծ նոքա վախեցան: Հակառակ կողմից  
լսվաւմ էր նետուող քարերի ձայներ. այծեամները  
մի ոստիւնով ծածկուեցան մօտակայ թփերի տակ:  
Յովհաննէսը բարկութեամբ նոյեց դէպի այն կողմը  
և բարձրաձայն աղաղակեց: Բայց այս ձայնարկու-  
թիւնը ոչ թէ երկիւղեց էր, այլ ամենամեծ ուրա-  
խութիւնից: Թփերի տակից դուրս եկաւ մի գեղե-  
ցիկ երիտասարդ, որին Յովհաննէսը իսկոյն ճանաչեց:  
Սա Տրաուզոսն էր: Նա իսկոյն փաթաթուեց իւր  
բարեկամին. սեղմեց նորան իւր կրծքին և գրաւուած  
նորա ջերմ համբոյներից ինքն ևս պատասխանեց  
նորան համբոյներով:

— Իմ սիրելի Յովհաննէս, ասաց Տրաուզոաը  
մի քանի ուրախական ցոյցերից յետոյ, ինչպէս ես  
տեսնում եմ, զու բոլորովին առողջ ես և բաւակա-  
նին մեծացած մեր բաժանման օրից: Ել ի՞նչ ասել,  
զու քաջերից ել ես անցկացել:

— Ի՞նչպէս ես ուրախ եմ, Տրաուզոտ, վերա-  
դառնալուղ համար, բացագոնչեց Յովհաննէսը, որի

երեսը ուրախութիւնից փայլումէր: Այսօր ես զգա-  
ցի, որ զու անպատճառ կ'գաս, ուստի և դէմ եկայ  
քեզ: Խօս սարը բարձրացայ և ամեն կողմ նայեցի,  
այնու ամենայնիւ քեզ չ'տեսայ: Ի՞նչպէս եղաւ որ  
այստեղ հասար, այն էլ այնպիսի կողմից, ուր չ'կայ  
ոչ մի շատիղ անզամ:

— Այդ բանը պարզելը շատ հեշտ է, իմ բա-  
րեկամ: աւելացրեց Տրաուզոտը ժպտելով, ես կամե-  
նում էի, ինչքան կարելի է, շուտ տեսնել քեզ,  
ուստի աւելի մօտիկ ճանապարհ էի որոնում, բայց Կ  
ես կորցրի իսկական ճանապարհը, ինչպէս շատ ան-  
գամ պատահում է, և համարեա ամրող օր թա-  
փառելով անտառում, վերջապէս, հասայ այս հո-  
վիար, ուր գտնում եմ իմ սիրելի բարեկամին: Ա՝ իս,  
ի՞նչպէս ես ուրախ եմ:

— Եւ ես ոչ պակաս, ասաց Յովհաննէսը, բայց  
ասա, ինդրեմ, ուր են քո թռչունները: Միթէ  
զու այս տարի ոչ մի հատ չունիս:

— Ո աւ, որ միտս գցեցիր, քիչ էր մնացել որ  
մոռանայի, բացագանչեց Տրաուզոտը, ես նոցա վե-  
րեն եմ թռղել սայելու առաջ թէ կայ արդիօք  
ճանապարհ: Գնանք շուտով բերելու, եթէ ոչ խո-  
րամանդ աղուէսը կ'գողանայ նոցանից:

Երկու բարեկամները գնալով և վերջնելով  
արկը ուղկորուեցան Յովհաննէսի հայրենական  
տնակը: ճանապարհին երեխան պատմեց Տրաուզո-  
տին, թէ ինքը քանի թռչուն է, բռնել և սովորեց

րել, իսկ նա լուսմ էր ուշադրութեամբ։ Իւրաքանչ չեւր թռչունին նա իսկութեամբ նկարագրեց, մինչև անգամ երգեց իւր սովորեցրած երգերը թռչուններին։

— Ե՛, իմ բարեկամ, ասաց Տրառւգօտը, եթէ քո թռչունները այնպէս հմուտ են, ինչպէս ասում ես, գործդ ուրեմն շատ յաջող է։ Դու շատ հարուստ կ'զառնաս ծանապարհորդութիւնից յետոյ։ Ես քո մէջ վաղուց նկատել էի ընդունակութիւն այս պարապմունքին, բայց այսքան, ես երբէք չէի երեակայել։ Դու, պէտք է որ, չափազանց աշխատահր եղած լինիս։ Միթէ քեզ այս նեղութիւն չէ՞։

— Ամնեին ո՞չ, պատասխանեց Յովհաննէսը ուրիշութեամբ, աս ինչպէս մի խաղ էր ինձ համար։ Այս պարապմանց ժամանակ ես միշտ քեզ վերայ էի մտածում, թէ ինչպէս դու կ'ուրախանաս, երբ կրկին կ'վերադառնաս. այսպէս գործը յառաջ էր գնում. սորա հետ անցնում էին և օրերը ուրախ ու աննկատելի կերպով։

Տրառւգօտը հարցրեց էլի զանազան բաների մասին. իմացաւ թէ ինչպէս է վարուել Յովհաննէսը իւր թռչնուսոյցութեան մէջ և սրտանց ուրախաւցաւ լսելիվ՝ որ իւր փոքրիկ բարեկամը վարուել է իւր աշակերտների հետ շատ հմտարար։

Այսպէս խօսելով նոքա հասան Յելեստինի խըրացիթը և Յովհաննէսը դուռը բացեց։

Բայց միթէ քո հայրը չէ՞ բարկանալ երբ մի բողոքին անծանօթ մարդ ներս-տանես, հարցրեց Նվարցվալդցին՝ կանգնելով զրան մօտ։

— Ի՞նչ ես անխելք անխելք դուրս տալիս, իմ հայրը ծանաչում է քեզ համարեա, այնպէս ինչպէս ես, և 'ի սրտէ սիրում է քեզ ծուլ ձեռքդ և հետեիր ինձ։

Տրառւգօտը այլ ես չ'երկմտեցաւ։ Նա մտաւ փոքրիկ և ծրագի լուսուվ լուսաւորուած սենեակը, ուր Յովհաննէսի ծնողները ու եղայրը նստած էին սեղանի մօտ։ Հայրը, լսելով օտար ձայն, տեղից վեր թռաւ և բացագանցեց զարմացմամբ. ահա և Տրառւգօտը։

— Այդպէս է, այդպէս, հայրիկ, սա է Տրառւգօտը, ասաց Յովհաննէսը ուրախութեամբ. ես նորան անտառում պատահեցի և ահա բերի ինձ հետ։

Զեր սիրելի որդին այնպէս թախնձեց ինձ, որ ես վճռեցի հետեւել նորան։ Ահա և այսելու եմ, աւելացրեց Տրառւգօտը պարզամտութեամբ։

— Գալուստդ բարի, սիրելի Տրառւգօտ, ասաց նորան Ցելեստինը բռնելով նորա ձեռքը։ Մենք բոլորս էլ սրտանց ուրախ ենք։

Տրառւգօտը սեղմեց ծերի ձեռքը, և ինչպէս երեւում էր, շատ ուրախացաւ իւր բարեկամի հօր՝ իրան այսպէս հիւրասիրելուն համար։ Յովհաննէսը յետոյ նորան ծանօթացրեց մօր և եղօր հետ. թէ պէտ նոքա աշխատում էին ծածկել իւրեանց տհա-

Ճութիւնը և ուրախ երմել բայց Եվարցվալոցին  
չնկատելով այդ՝ ամենեին ջկորցրեց իւր ուրախու-  
թիւնը: Կարելի՛ է նա չնկատեց անգամ, որ ինքը  
Մարթայի և Գուբերնու համար հաճելի հիւր չէր:  
Մայրը իսկոյն դուրս գնաց գետնախնձոր խորովելու  
մարդու ծածուկ պատուէրով, իսկ Գուբերնար հան-  
գիստ նստած վառարանի մօտ՝ ուշադրութեամբ  
լուրմ էր խօսակիցների ամեն մի խօսքը:

— Արկղդ այնանեղ զիր, Տրառուգոտ, ասաց Ցե-  
լեստինը, պատուհանի մօտ բաւականին անեղ կայ և  
աթոռը քեզ մօտ բեր, որ փոքր ինչ խօսակցենք:

Տրառուգոտը իսկոյն կատարեց Ցելեստինի ցան-  
կութիւնը. նոցա մէջ բացուեց մի կենդանի խօսակ-  
ցութիւն և միայն մօր գալրւանը խորոված գետ-  
նախնձորներով ընդհատեց այն: Ամենքն՝ ևս նստան  
սեղանի մօտ և սկսուեցաւ մի հասարակ ընթրիք:

— Երկար կ'մնաս մեղ մօտ, Տրառուգոտ, հարց-  
րեց Ցելեստինը ընթրիքի վերջին: Ես յուսով եմ, որ  
դու՝ քո ներկայութեամբ, կ'ուրախացնես մեղ մի-  
քանի օր:

— Ես ձեղ մօտ երկար մնալ չեմ կարող այլ  
անպատճառ, վաղը չէ միւս օր պէտք է գնամ: Ես  
կամենում էի վաղը գնալ, բայց անկարելի՛ է, որով-  
հետեւ Ցովհաննէսը դեռ ևս պատրաստ չէ:

— Ի՞նչպէս թէ Ցովհաննէսը պատրաստ չէ,  
հարցրեց զարմացմամբ հայրը: Միթէ նա կամենում

է գնալ քեզ հետ: Նոր ինձ այդ մասին ոչ մի խօսք  
չէ ասել:

— Արկիլի՛ հայրիկ, ես չէի համարձակում ա-  
մել քեզ, ասաց Ցովհաննէսը երկիւղով նայելով հօր  
վերայ, բայց եթէ ես չկամենայի այդ, ապա չէի  
պարապիլ այսքան թռչունների հետ: Ի՞նչպէս ես  
փող վաստակեմ նոցանով, երբ չանաեմ ծախելու:  
Քող ինձ խնդրեմ, գնալու ծրանուգոտի հետ:

Հայրը մի րոպէ մնածեց, յետոյ գլուխը շար-  
ժելով ասաց. այդ ինձ դուր չէ գալիս, որովհետեւ  
դու դու շատ փոքր ես, չէ՞ որ զեռ տասն և հինգ  
էլ չկաս: Բայց որովհետեւ քեզ հետ է Տրառուգոտը,  
որ շատ և շատ փորձուած է քեզանից, ուրեմն կա-  
րող ես գնալ մանաւանդ որ չարչարանիքը պսակ-  
վում է միշտ վարձատրութեամբ, իսկ դու քո թռչ-  
ունների հետ քիչ չես չարչարուել: Ցովհաննէսը  
ուրախութեամբ փաթաթուեց հօրը. բայց Մարթան  
տրմեց նոյն րոպէին, որովհետեւ նախանձում էր իւր  
խորթ-որդաւ. ուրախութեանը: Նա զեռ լուսմ էր ու  
սպասում էր մի յարմար րոպէի, որ արգելք լինի  
երեխայի ճանապարհորդութեանը:

— Ո՞չ, հայրիկ, ինչպէս ուրախացրիր դու  
ինձ, բացազանց Ցովհաննէսը հազիւ հազ զսպելով  
իրան: Ի՞նչպէս ես այժմ ուրախ եմ, չեմ կարող  
պատմել: Ի՞նչպէս ես ուրախ եմ, որ պէտք է տես-  
նեմ այն շքեղութիւնները, որ ծածկուած են սարե-  
րի յետելու Բայց ես չէի կարծում, որ այսպէս շուտ

պէտք է տեսնեմ նոցաւ Սակայն դու, հայրիկ, հաւատում ես, որ ես ծանապարհորդութեանս մէջ զգոյշ և հնազանդ կ'լինիմ Տրառուգոտին։ Այժմ ես զգում եմ այն ըովէն, երբ ես պիտի լցնեմ այս իսկ սեղանի վերայ մի բաւականին մեծ քսակ ոսկի։ Եւ այս բոլորը կ'պատկանեն քեզ, իմ սիրելի հայրիկ։

— Ո՞չ, վրայ բերեց խակոյն հայրը ժպտելով. ինչ որ դու կ'աշխատես քո թուզուններով այն քո սեփհականութիւնը կ'լինի և ամենի համար անմերձենալի։

— Այսինքն և իմ, ասաց Գուբերտը, որ մինչեւ այժմ ոչ մի խօսք չէր ասել։ Յովհաննէսը խոստացել է բաժանել ինձ հետ։

— Քեզ հետ, այդպիսի ծոյլ և անպիտանի՞ հետ, ասաց հայրը, դորա մասին դու մի՛ էլ մոտածիր, որովհետեւ ես լաւ գիտեմ, որ դու երբէք չես օգնել Յովհաննէսին։ Է՛, եղբայր, ինչպէս տեսնում եմ, դու դեռ չ'անած կամենում ես հնձել։ Ո՞չ, բարեկամ, այդպէս չի լինիլ երբէք։ Եւ քեզ, Յովհանն էս խոտապէս պատուիրում եմ, որ չ'տաս Գուբերտին ոչ մի կոպէկ աշխատածդ փողերից։ Եթէ դու միայնակ ես աշխատել, օր ու գիշեր քուն չես ունեցել, հասպա ուրեմն ոչ ոք իրաւոնք չունի պակասեցնել, քո վարձատրութիւնը։

Գուբերտը լռեց, բայց նորա աչքերը կատաղաբար փայլատակեցին, սակայն ոչ ոք, բաց'ի Տրառուգոտից, չ'նկատեց այս։ Մի անորոշ երկիւղ պատեց

վերջինի հոգուն, նա մտածում էր թէ, շատ կարելի է, Գուբերտը աշխատի զանտզան միջոցներով արգելել եղբօր ծանապարհորդութիւնը, բայց նա չ'յայտնեց այս ոչքին, այլ վճեց անձամբ հետեւ Գուբերտին։

— Ի հարկէ, շարունակեց հայրը, Յովհաննէսի ունեցածը վերադառնալիս շատ չի լինիլ մինչեւ անգամ և այն ժամանակ, երբ նա ծախած լինի իւր բոլոր թուզունները. նա էլի քիչ կ'ունենայ, որովհետեւ ծանապարհին նա աշխատած փողերով պէտք է կերակրուի։ Այսպէս չէ, Տրառուգոտ, դու միայն հանաք ես արել ասելով Յովհաննէսին՝ թէ դու թուզուններով այնքան փող ես աշխատում, որ կարողանում ես պահել մօրդ և եղբայրներիդ։

— Ո՞չ ո՞չ, Աստուած աւելի տայ, պատասխանեց աշխայժ պարզահոգի երիտասարդը։ Ես, Աստուած վկայ չեմ խարել։ Եթէ Յովհաննէսը ինայող լինի՝ նա կարող է շատ փող աշխատել։ Զէ՞ որ այդ ես գիտեմ, որովհետեւ վաղուց է, որ պարապում եմ այս արհեստով։ Ճանապարհորդութեան ժամանակ նորան փողը շատ քիչ կ'հարկաւորուի։ Անք սովորաբար զիշերում ենք բարի մարդկանց տներում և վարձատրում ենք նոցա ասելով միայն։ Ընորհակալ ենք։ Այս բանը քեզ ձեռնտու է. չէ Յովհաննէս։

— Ի հարկէ, ասաց Յովհաննէսը, միայն թէ Նանապարհին լինինք, այդ բոլորը հեշտ են։

— Վաղը չէ միւս օրը արևածագին կարող էք  
ուղեւորուելը ասաց Յելեստինը, իսկ էգուց առաւօտ  
երեքս միասին կ'զնանք անտառը խօսելու մի որ ևէ  
բանի մասին, Ճաշից յեաց կարող էք ճանապարհի  
պատրաստաւթիւնը տեսնել: Ե՛հ, այնտեղ մեծ գործ  
խօմ ունենալու չ'էք:

— Եւ ինձ այլպէս է թուում, աղաղակեց Մար-  
թան սասանիկ բարիկացած, մի՞թէ դուք պարոններ,  
հայր և որդի ինձ բոլորովին մոռացել էք, որ չ'էք  
հարցնում և իմ համաձայնութիւնը: Ա՛յ քեզ լաւ  
բան: Իսկ ես ասում եմ, որ Յովհաննէսը կ'մնայ այս-  
տեղ և չե գնալ այդ անպիտան և ստախոս Նվարդ-  
վալդցու հետ: Իմ կամքս այս է որ նա չ'գնայ և  
տեսնեք ես կ'տանիմ թէ դուք:

Յելեստինի բերանը բաց մնաց զարմանքից, երբ  
նորա խօսքերը, որպէս մի որոտահան ամս, ցնդուե-  
ցան օդում: Յովհաննէսը գունաթափուեցաւ, իսկ  
Տրաուգոար՝ կարեկցութեամբ շարժեց զլուխը: Նա  
խորամիտ էր և սկզբից իսկ նկատել էր, որ ոչ խորթ-  
մայրը և ոչ եղբայրը սիրում են Յովհաննէսին, և  
այժմ նա համոզուեցաւ, որ նորան մինչև անզամ  
ասում են, որովհետեւ տաելութիւնը միայն կարող  
էր ստիպել Մարթային արգելք դառնալու Յովհան-  
նէսի ճանապարհորդութեանը:

Դու, կին, ասաց վերջապէս Յելեստինը, դու,  
երեխ, չ'կըսալգատեցիր այս բոպէիս ասած խօսքերս:  
Միթէ դու չ'լսեցիր, որ ես համաձայնուեցայ Յով-

Հաննէսի Ճանապարհորդութեանը: Ես գիտեմ, որ  
քեզ արդէն յայտնի պիտի լինի, որ եթէ ես մէկին  
խօսք տամ, անպատճառ կ'կատարեմ այն: Ելի կըրկ-  
նում եմ, թէ Յովհաննէսը վաղը չէ միւս օրը մեր  
սիրելի և յարգելի հիւրի հեա կ'ուղեւորուի ծա-  
խելու իւր թաշունները, ուր և երբ կամենայ և թէ  
այն փոքրիկ գումարը, որ նա կ'աշխատի կ'լինի նո-  
րա անձեռնամսելի սեփականութիւնը: Բանը վեր-  
ջացած է: Այլ ես ոչ մի խօսք, եթէ չ'կամես բար-  
կացնել ինձ, յիմար կին:

— Ելի հազար խօսք կ'ասեմ, ասաց Մարթան  
կատաղելով: Դու ինչ ուզում ես ասա, Յովհաննէսը  
պիտի այսուեղ մնայ: Ես չեմ կամենում, որ նա ինչ-  
պէս մի զարարկաշրջիկ քաղաքից քաղաք թափառէ:

Յեկատինը նայեց նորա վերայ միայն մի ան-  
գամ, բայց նորա հայեացքը այնպէս սարսափելի  
էր, որ Մարթան խկոյն լոեց: Յելեստինը հա-  
զիւ կարողացաւ զստել իրան. նորա շըթունքները  
դողում էին:

— Դու, կին, մատածիր, ասաց նա ներքին ալե-  
կոծութիւնից պատճառուած դողդողիւն ձայնով որ  
մենք մենակ չենք, մեզ մատ մի յարգելի հիւր կայ.  
Նա ի՞նչ կ'մտածի, երբ մենք նորա Գալստեան առա-  
ջին երեկոյեան իսկ՝ կ'վեճենք միմեանց հետ: Յով-  
հաննէսը կ'գնայ, որովհեաւ ես արդէն նորան խոս-  
տացաց թողնել: Ես միշտ ուրիշ բաների մէջ քո ցան-  
կութիւնն եմ կատարում, բաւականացիր դորանով:

Մարթան լաւ տեսնելով՝ որ իրան այլ ևս անկարելի է հակառակել՝ լռեց, բայց նորա հոգին դեռ ևս յուզման մէջ էր:

Ուրախութիւնը անյայտացաւ և բոլորը ուրամի էին երբ, վերջապէս եկաւ քնիլու ժամանակը:

ԱԼՈՒԹ ՎԻ.

**Լ'նգութ մարդիկ միշտ քեզ վնաս են ցանկանում:**

Մարթայի սիրտը լի էր ցանկութեամբ և չարութեամբ, որոնք չարչարում էին նորան, բայց այս կրքերը ևս առաւել տանջում էին Գուբերտին: Նա նախանձուեց եղքօր ճանապարհորդութեան վերայ, որ նորա սիրտը կ'լցնէր ատելութեամբ մինչև անգամ և այն ժամանակ, երբ Յովհաննէսը կամենար բաժանել փողը նորա հետ: Գիշերը նա միջոցներ էր մտածում՝ այս ճանապարհորդութիւնը խանգարելու և միայն քնեց այն ժամանակ, երբ արդէն իւր մէջ հաստատ վճռեց կատարելու մի ամենաանարդ և նուաստ գործ:

— Մայրիկ, ասաց նա Մարթային հետեւեալ օրը ծածկաբար ժամելով, եթէ դու ինձ օգնես՝ կ'կատարուի քո ցանկութիւնը, այսինքն Յովհաննէսը տանը կ'մնայ:

— Ի՞նչպէս կանես այդ, հարցրեց Մարթան:

— Այդ մասին արդէն քեզ ասել եմ, պատասխանեց Գուբերար: Այժմ հայրիկը Եվարքվալոցի խաբեբայի և Յովհաննէսի հետ անտառումն է, եթէ ես գնամ վերնատունը և բաց թողնեմ բոլոր թըռչուններին՝ Յովհաննէսը ստիպուած կ'լինի մնալ: Ի՞նչ պէտք է անէ նա քաղաքներում առանց թըռչունների: Միթէ դու այս չե՞ս յիշում:

— Ի հարկէ յիշում եմ, պատասխանեց Մարթան, բայց եթէ հայրդ իմանայ, ի՞նչ կանես այն ժամանակ:

— Ե՛ուրանամ, ասաց Գուբերար, բայց եթէ չ'հաւատայ էլ մեծ անբախութիւն չէ: Նա ինձ կ'ծեծի, բայց ես նորա միքանի հարուածը ուրախութեամբ կ'տանեմ: Քան այն վեշը, որ պիտի պատճառէ ինձ Յովհաննէսի ճանապարհորդութիւնը, որովհետև այս նորան չափազանց հաճելի է:

Մարթան պարզ տեսնում էր իւր որդու զիտաւորութեան ցածութիւնը և շատ կարելի է, արգելէր նորան կատարելու այն, եթէ ինքն ևս կրքեց կուրացած չ'լինէր: Միայն նորա ատելութիւնը դեպի Յովհաննէսը խոնարհեցրեց նորան համաձայնելու Գուբերսի առաջարկութեանը: Ամենից առաւել անհանգստացնում էր նորան այն՝ թէ իւր մարդը երեկ երեկոյեան ամենեին ուշադրութիւն չ'դարձրեց իւր կարծիքի վերայ. և սորա համար իսկ նա ցանկանում էր, որ Գուբերար իւր մտադրութիւնը ա-

ուաջ տանի, սորանով նա երկու նպատակի հասած կլինէր. առաջին՝ որ վրէժը կ'առնէր իւր մարդուց և երկրորդ՝ կ'պատճառէր Յովհաննէսին գառն լոց:

—Արա, ինչ որ կամենաս, ասաց նա Գուբերտին և դուրս գնաց:

Գուբերտը չ'յապազելով ոչ մի բոպէ գնաց կատարելու իւր մտադրութիւնը: Նա սանդուղներով բարձրացաւ վերնատունը և բացեց վանդակների դռները: Ի հարկէ նորա միրտը այն ժամանակ սաստիկ տրբիում էր և խիղճը քնած չէր, այնու ամենայնիւ նա սիրտ անելով կատարեց սկսածը: Թրոշունները արդէն ապատութեան մեջ էին, նորա աշաղակերով սկսեցին թռչել սենեակում, իսկ երբ Գուբերտը բացեց պատուհանը՝ բոլորն ևս ուրախ ծվծփոցով դուրս թռան: Մեծ մասը իսկոյն հեռացաւ և անյայտացաւ անտառում, միայն միքանի շատ ընտելներ մնացին տան առաջի տիրեցի ձիւղերի վերաց և չէին ուզում թռչել:

—Ապասիցէք ձեզ ցոյց կ'աամ ձանապարհը, բացագանցեց Գուբերտը բարկութեամբ. Եթէ միքանի քար դիմներիդ դիպչէ, ել չէք կամենար մնալ:

—Ախ, դու, դարշելի տղայ, յանկարծ լսուեցաւ Գուբերտի յետելից. մի ուժեղ ձեռք բռնեց նորա օձիքից և միքանի հատ հասցրեց մեջքին: «Ախ, դու, անպիտան, միթէ իիղծ չունին, որ այդպէս ոչնչացնում ես եղորդ յոյսերը: Խռչի բաց թռղիր

այն գեղեցիկ թռչուններին: Նորա քեզ ծանրութիւն էին»:

Աա Տրառւգօտի ձայնն էր, որ յանկարծ վրայ էր հասկել այն ժամանակ, երբ արդէն Գուբերտը քարը ձեռին մնացած թռչուններին էր քշում: Բայց, զժբախտաբար, շատ ուշ էր. գործը եղել վերջացել էր: Նորա մե աչքերը բարկութիւնից վառվում էին, շրմունքները դողում, մազերը գլխի վերայ բիղ բիզ լինում, նա զզուանքով նայում էր շարագործ երեսայի վերայ: Գուբերտը լարով գետնին փռուեց, բայց Տրառւգօտը չխաբուելով սորանից՝ այնպէս շուտ շուտ հասցնում էր իւր ձեռնափայտը նորա մեջքին, որ անպիտանը մի կողքից միւսն էր զառնում, մինչև որ մայրը լսեց Գուբերտի աղաղակը, որ ներքեւ անտեսական գործերով էր զքաղուած: Նա չտապով վազեց, ազատեց իւր որդուն օտարականի ձեռքից և սկսեց հիւրասիրել վերջինին զանազան զզուելի հայնյանքներով:

—Շատ մի՛ հաչեր, ասաց վերջապէս Տրառւգօտը Մարթային, լսիր և խիղճ ունեցիր: Դու կարծում ես թէ ես չ'նկատեցի, չենց իմ գալու բոպէին, որ զու և Գուբերտը ատում էք Յովհաննէսին: Այդ շատ ցածութիւն է, որովհետեւ Յովհաննէսը գեղեցիկ և բարի պատանի է, ի հարկէ, հարիւր և հազար անզամ լաւ այս անպիտան, այս գարշելի երեխայից: Ես անեսնում եմ որ այստեղ իմ խօսքերը ոչինչ են համարվում, աւելի լաւ է գնամ

և կանչեմ Յովհաննէսին ու հօրը: ԱՌիս, խեղջ Յովհաննէս, ի՞նչպէս նա կ'տրտմի, երբ իմանայ որ իւր գեղեցիկ և սիրելի թռչունները բաց են թողնուած: Ի՞նչպէս նա լաց կ'լինի: Եւ դու, գարշէլի, զգուելի և անպիտան տղայ:

Այս ասելով՝ նա նետի նման անտառը սլացաւ և աշխատում էր գտնել իւր բարեկամին և նորա հօրը: Բարի երիտասարդը զգալով՝ թէ ի՞նչպէս դառն է այս համբաւը Յովհաննէսի համար և երեւակայելով նորա արտասուքն ու տիսրութիւնը, ինքն ևս չ'կարողացաւ պահէլ իւր արտասուքը, որի կաթիւները արագ թափվում էին նորա աչքերից:

Բայց դուք կ'հարցնէք, իմ սիրելի մանուկներ, թէ ի՞նչպէս եղաւ, որ Տրաուգոտը եկաւ հենց այն ժամանակ; երբ Գուբերտը բաց էր թողել թռչուններին:

Ահա թէ ի՞նչպէս: Տրաուգոտը նկատել էր Գուբերտի արհամարհանքով լսելը հօր համաձայնութիւնը Յովհաննէսի ծանապարհորդութեան մասին: և վախենում էր, որ չ'լինի թէ նա խանգարի այս բանը: Անտառի ծանապարհին ծագեց նորա մէջ մի անորոշ նախազգացութիւն և, կարծես, մի ծածուկ զօրութիւն նորան յետ էր հրաւիրում: Նա, պատճառ բռնելով իւր թռչուններին կերակուր չ'տալը, վազեց Յելեստինի խրճիթը:

Յելեստինը ու Յովհաննէսը երկար սպասեցին նորան, բայց երբ նա չ'վերադառաւ, վերկացան նո-

քա տուն գնալու և տեսնելու թէ ի՞նչի այսքան յետացաւ նա: Յանկարծ Տրաուգոտը երևաց, նոքա տեսնելով օտարականին խկոյն հասկացան, որ նորան մի բան է պատահէլ:

— Ի՞նչ է եղել քեզ, Աստուածդ կ'սիրես, ասա, Տրաուգոտ, աղաղակեց Յովհաննէսը, իրաւի քեզ մի անբախտութիւն է պատահէլ:

— Այս, ուղեղ է, բայց մասսամբ ինձ անբախտութիւնը, ասաց Տրաուգոտը, աւելի շատ քիչ է պատահէլ իմ բարեկամ: Գնա միայն տուն և կ'տեսնես:

— Ի՞նչ է եղել, հարցրեց Յելեստինը. ասա, Տրաուգոտ:

— Ես չեմ ուզում ասել, պատասխանեց Տրաուգոտը, որովհետեւ սա Յովհաննէսին մի հարուած է: Բայց պէտք է ուղեղն ասել նորա հետ շափազանց վատ են վարուել:

— Ի՞նչպէս են արել այնտեղ, ասա, վերջապէս, աղաղակեց Յելեստինը անհամբերութեամբ, մենք այնու ամենայնիւ պէտք է իմանանք պատահածը, ինչի ես իգուր չարչարում մեզ:

— Ի՞նչ անեմ, հարկադրուած եմ պատմելու, ասաց Տրաուգոտը, բայց շատ մի տիսրիր, իմ սիրելի: Գուբերտը զըկեց քեզ քո բոլոր թռչուններից. Նա բաց արեց վանդակների դռները և պատուհանից արձակեց բոլորին և մինչև անգամ ստիպեց հեռանալու քո ամենընտել աշակերտներին, որոնք նստել էին տեղինայի վերայ:

Յովհաննէսը գունաթափուեց և այնպէս վաշխեցաւ, որ ոչ մի խօսք չ'կարողացաւ արտասանել: Նա նստում էր որպէս անզգայ ծրառդոտի վերայ, որ փաթաթուելով նորան մինիթարում էր ամերովթէ սա իսկապէս թշուառութիւն չէ:

— Մի տիրիր, իմ բարեկամ, ասում էր նա, ի հարկէ, զու նոցա սովորեցնելով համար շատ ես չարքարուել և ի հարկէ այժմ քեզ ցաւալի է, որ նոցա բաց են թողել, բայց այդ զու բանի տեղ մի դնիլ բռնիր ուրիշ թուզուններ՝ աւելի շատ, սովորեցրու. նոցա և միւս տարի էլի կ'դաս ինձ հետ: Կաց այս տարի տանը, մանաւանդ, որ դեռ փոքր ես: Պարապմանց մեջ տարին աննկատելի կերպով կ'անցնի և քո ուրախութիւնը կ'կրկնապատկուի, երբ մենք, վերջապէս, ճանապարհ ընկնենք:

Յովհաննէսը սեղմեց իւր զլուխը ծրառդոտի կրծքին. նորա աչքերից թափուեցին դառն արտասուքի կաթիլներ: Ենձ թուզունները այնքան ցաւ չեն, ինչքան Գուբերտի այդ աստիճանն ինձ ատելը: Իսկ ես, չէ՞ որ նորան ոչ մի չարիք չեմ արել ընդհակառակն ես սրտանց սիրել եմ նորան: Չգիտեմ, ի՞նչ է նորտ ատելութեան պատճառը:

— Թոնդ այդ անողիտանին, ասաց ծրառդոտը, սրբելով իւր արտասուքը: Թոնդ նա ատէ քեզ, իմ բարեկամ: Խոնչ ես դորա համար տիրում: Ես քեզ կ'սիրեմ, որ հարկաւոր չի լինիլ քեզ նորա սէրը և բարեկամութիւնը: Գնանք, գնանք, շուտով տուն

վագենք: Կարելի է յաջողքի մեզ բռնել քո թըռչուններից միքանիսին, այն ժամանակ քո ցաւը այն քան մեծ չի լինիլ, ինչքան այժմ զգում ես դու: Գնանք, իմ բարեկամ, գնանք:

— Այսու ուղեղ ես ասում, ծրառդոտ, աւելացրեց Յովհաննէսը սրբելով աչքերը և աշխատելով կտրել հեծեծանքը: Կաւ սովորող թռչունները՝ լինում են և աւելի ընտել: Կարելի է նոքա շատ հետացած չ'լինեն: Վագենք շուտով, գուցէ բռնենք նոցա: Կարելի է կրկին նոքա ինձ մօտ գան, երբ ես կանչեմ նոցա սուլիչովս: Բայց ո՞ւր է հայրիկը:

— Կա արգէն տուն է գնացել ասաց ծրառդոտը, երբ ես նորան պատմեցի Գուբերտի այսպիսի վատ արարմունքը, նորա երեսի վերայ սաստիկ բարկութիւն երեւցաւ և, կարծեմ, անէծք էլ դուս թռաւ նորա բերանից. յետոյ նա շատապով գնաց: Անկարծիք, նա Գուբերտին այնպէս կ'ծեծէ, որ նա իւր կեանքում երբէք չի մոռանալ:

— Եթէ այդպէս, վագենք ուրեմն ի սէր Աստուծոյ, թէ չէ հայրիկը կ'ծեծէ Գուբերտին այնպէս, որ նա կիսամահ կ'լինի, ասաց Յովհաննէսը ցաւակցութեամբ: Ուզիզ է, հայրիկը բարի է, բայց երբ նորան բարկացնում են, նորա բարութիւնը իսա կոյն անյայտանում է:

— Այդպէս էլ պէտք է, աւելացրեց ծրառդոտը: Այդ անպիտանին հարկաւոր է, այնպիսի ծեծ,

որ նա իւր կեանքում չ' մոռանայ: Միթէ դու, Յովհաննէս, կամենում ես պաշտպանել նորան:

— Ան, ի՞նչ անեմ, չէ՞ որ նա էլի իմ եղբայրն է, ասաց Յովհաննէսը դուզոջուն ձայնով: «Ի՞նչ կ' աւելանայ ինձ երբ նորան հայրը սաստիկ պատմէ: Միթէ այն վկաոր՝ որ նա պատմառելէ ինձ, կ' փոքրանայ սորանով: Խսկ եթէ ես հայրիկն ինդրեմ, որ ներե նորան, գուցէ նա շնորհակալութիւնից փոքր ինչ սիրէ ինձ, այն ժամանակ ես բաւական կ' լինիմ:

— Ո՛հ, ի՞նչպիսի հրեշտակային սիրո ունիս դու, բացագանչեց սրատշարժուած Տրառօտը, սեղմելով սրտին իւր դեռահաս բարեկամին: Դու շատ ե շատ անգամ ինձանից բարեսիրո ես, այս սկզբից նկատեցի և, երեկի, սորա համար խսկ, սէրս քեզ կպաւ: Առաջ վազեր, ես քեզանից յետ չեմ մնալ:

— Եռքա բոլոր ուժով վազեցին և հասան հօրդ հէնց դրան մօտ: Նորա երեսը վառվռում էր սաստիկ բարկութիւնից, աչքերը փայլում էին: Յովհաննէսը նայելով հօր երեսին՝ հսակացաւ, որ մի սաստիկ ծեծ է սպառնում Գուրերտին:

— Հայրիկ, սիրելի՛ հայրիկ, ասաց նա խընդորովական ձայնով՝ բռնելով հօր ձեռքը. խնդրում եմ, ներիր Գուրերտի վառ արարմունքը: Նա կարելի է չէր հասկանում, որ իւր արածով ինձ շատ կ' վնասէ և, գուցէ, կարծում էր թէ հեշտ է կրկին բռնել թռչուններին: Ճշմարիտ, հայրիկ, ինձ համար միեւնոցն է, այստեղ և՛ աքա թէ չէ:

— Ասիր, Յովհաննէս, ասաց հայրը, եթէ ես այս անգործին իւր վատ արարմունքիների համար միշտ ներեմ, նա շուտափ մի անուղղելի երեխայ կ' դառնայ: Այլ ևս ոչ մի խօսք: Զարագործը միշտ պէտք է ստանայ իւր պատիժը:

Ցեկեստինը ամենելին ուշալութիւն չ' դարձնելով Յովհաննէսի խնդրի վերայ՝ մտաւ խրճիթը և կանչեց Գուրերտին: Նա թաքնուել էր վերնատան մէջ և իրան պաշտպանութիւնը մօրն էր յանձնել և մայրը, յիրաւի, իւր սովորութեան համեմատ շուտով դրսի մէջ ընկաւ:

— Գուրերտն ինչի՞ն է հարկաւոր, Հարցը եց նա մարդուն:

— Ես նորան այնպէս սաստիկ պատժել եմ ցանկանում, որպէս ոչ ոքի դեռ ևս չեմ պատժել, պատասխանեց հայրը: Ո՞ւր է նա:

— Նա այնտեղ է, ուր նա պէտք է լինի, ասաց մայրը: Միթէ դու կարծում ես, որ ես հանդարտ կ' նայեմ ծեծելուդ ժամանակ: Ո՛չ դու շատ սխալ վում ես: Առաջ ես կամենում եմ իմանալ թէ խեղճ երեխային ի՞նչում են մեղադրում:

— Ի՞նչում, աղաղակեց հայրը, ի՞նչում: Նա չածկաբար բաց է թողել Յովհաննէսի բոլոր թռչունները և այսպիսով զըկել է եղքօրը իւր աշխատանքի պառւզը քաղլուց: Ահա թէ նա ինչ է արել և աչա թէ, ինչու նա պէտք է պատժուի:

— Այլ քեզ լաւ բան, ասաց մայրը: Դու նու

րան ձեռք չես տալ. նա հէնց իմ հրամանով է դուրս  
արել այն անտանելի թռչուններին: Այո, այո, հէնց  
իմ հրամանով: Նա չեմ կամենում, որ քո Յովհան-  
նէսի բոլոր ուղածները կատարուին և չեմ ցանկա-  
նում, որ նա թափառակտն լինի, ինչպէս այս անի-  
ծուած Նվարդվարդյին, որի շնորհով քո որդին ժա-  
մանակով կ'գտննայ կախաղանի արժանի մարդ, որ  
եթէ պատահի մեզ էլ կ'կողոպտէ և կ'սովորեցնէ ա-  
մեն պղծութիւն իմ բարեհոգի Գուբերնին: Ահա  
թէ ես ինչ էի կամենում և թէ ինչ էի պնդում  
ասած: Այո ես ատում եմ այդ երեխային, որով-  
հետեւ նա ամենայն տեղ և միշտ փակում է իմ  
Գուբերնի ճանապարհը: Բայց նա, քանի ես կին-  
դանի եմ, չպիտի գերազանցէ իմ որդուց:

— Այս, մայրիկ, ես ի՞նչ եմ արել քեզ, ի՞նչ  
եմ արել Գուբերնին, ինչի՞ եք ինձ այդքան ատում,  
բացազանչեց Յովհաննէսը տիրութեամբ: Զէ՞ որ ես  
միշտ սիրել եմ եղբօրս:

— Դու միշտ վաս ես խօսել նորա մասին,  
ծեծել ես, կըմթել ես, և միշտ ու ամեն բանում  
նախանձել ես նորան, աղաղակեց խորթ-մայրը: Մի-  
թէ դու կարծում ես թէ ես չեմ նկատում, որ դու  
միշտ հօրդ գանգատում ես Գուբերնից: Ես շատ ու-  
րախ կ'լինիմ, որ զրոյզ առնի քեզ, զոնէ այն ժա-  
մանակ ես չեմ տեսնիլ քո փարիսական կեղծաւո-  
րութիւնը: Բայց աւելի ինձ ցանկալի է քո տանը

մնալ որովհեակ քեզ կարգ ու կանոն կ'կարողա-  
նամ սովորեցնել երբ որ կամենամ: Օսպիր քեզ Մարթա, այլ ևս ոչ մի խօսք,  
ասաց Յելեստինը, դու առանց էն էլ շատ սուտ խօ-  
սեցիր: Վկայ է ամենակարող Աստուած, որ Յովհ-  
աննէսը միշտ լաւ է խօսել Գուբերնի մասին,  
երբէք նորանից չէ գանգատուել և չէ մեղա-  
դրել նորան ոչ մի բանում: Մի քանի լոսքէ սո-  
րանից առաջ նա եր ներողութիւն ինողը զը, իրան  
այսպէս սաստիկ վշտացնող, եղբօր համար: Ես ուշա-  
գրութիւն չ'գարձրի նորա խնդրի վերայ, բայց այժմ  
կ'կատարեմ նորա ցանկութիւնը, որ Գուբերնը ա-  
մաչի, կարելի՞ ուս ուղղէ նորան, եթէ բոլորովին  
փշացած չէ նա: Եթէ կայ նորա սրտում սիրոյ գէթ  
մի կայծ, թող նա ուրեմն աշխատի եղբօրը մոռաց-  
նել տալու իւր արարմունքը և փոխարինելու նորա  
սէրը իւր սիրով: Եւ դու, կին, ժամանակով, եթէ  
Աստուած տայ, կ'համոզուես որ սիալուել ես Յով-  
հաննէսին կեղծաւոր կարծելով: Ես չեմ կարող  
ստիպէլ քեզ որ սիրես նորան, բայց ինողում եմ  
որ ցոյց չ'տաս նորան ատելութիւնդ:

— Եմ սիրելի և բարի մայր, աղաջում եր նո-  
րան Յովհաննէսը չոքելով նորա առաջ և համբուրե-  
լով նորա ձեռքը: Եթէ դու ինձ փոքր ինչ սիրես,  
ապա իմ թռչունների կորուսաը մինչև անգամ կ'ու-  
րախացնէ ինձ:

Մարթան թէպէս շատ բարկացած էր բայց և

այնպէս սրտաշարժուեց իւր խորթ-որդու խօսքերից,  
որ նայում էր նորա վերայ արտասուքն աշքերին:  
Մայրը թէպէտ զգաց, որ, ինչպէս միշտ, նոյնպէս և  
այժմ սխալուել է, բայց չուզեց Յովհաննէսին ոչ մի  
քաղցր խօսք ասել: Այսպիսի դէպք մարդու շատ  
յաճախ է պատահում, որ թէպէտ նա զգում է, իւր  
գործած անարդարութիւնը, բայց չէ ուզում խոս-  
տովանուել: Ահա նոյնը այստեղ կատարուեց: Նա կա-  
մակորուեցաւ և բարկութեամբ յետ քշեց երեխային:

— Թող ինձ, ասաց նա սենեակից դուրս գնա-  
լով թող, զու խորամանկ օձ ես, բայց քո գեղեցիկ  
խօսքերով ինձ այնպէս շուտ չես խարիլ, ինչպէս  
հօրդ խաբեցիր: Տխուր հառաշանքով վեր կացաւ  
Յովհաննէսը և թափելով դառն արտասուքի կա-  
թիւներ սեղմեց գլուխը ծրառուգօտի կրծքին, որ տխուր  
զգացմունքով լսել էր նոցա խօսակցութիւնը: Նա  
փաղաքշելով երեխային՝ աշխատում էր միիմարել:

— Մի տրամիլ ցածրաձայն ասաց նա Յովհաննէսին:  
Միթարուիր, ժամանակով այս ամենը կ'անցնի:  
Կացննեն օրեր, մարդ այլ ես չի բարկանալ քեզ վերայ:

— Աստուած տայ, որ այդպէս լինի, ասաց  
հայրը, որ տիրութիւնից թէպէտ քաշ էր զցել  
գլուխը, բայց և այնպէս լսել էր ծրառուգօտի համեստ  
խօսքերը: Նորա բարկութիւնը փաղուց անյայտացել  
էր, բայց դորա փոխանակ նորան խորին տրտմութիւն  
էր տիրել:

— Այստեղ արի, Յովհաննէս և տուր ձեռքդ

ինձ, ասաց հայրը, մայրդ այնքան բարկացած չէ,  
ինչպէս երեւում է, ժամանակով նա քեզ կ'սիրէ:  
Եղիր միայն բարի և ձշմարիտ և մի մոռանար, որ  
Աստուած չի թողնիլ ոչ մի մարդու: Վեր առ սու-  
լեզդ և գնանք անտառը գուցէ գտնենք թուշուննե-  
րիցդ միքանիսին: Սրբիր արտասուքդ իմ որդի:  
Թէպէտ քեզ ոչ ոք էլ չսիրէ, ևս ու ծրառուգօտը միշտ  
կ'սիրենք:

— Այդ ուղիղ է, իմ բարեկամ, ևս սիրում  
եմ քեզ աւելի, քան լեզուվ կարող էի արտայայտել,  
հաւատացնում էր ծրառուգօտը Յովհաննէսին: Մի տրխ-  
րիր, տիրութեանը հետեւում է սովորաբար ուրա-  
խութիւն, և ամպերից յետոյ երեւում է փայլուն  
արել: Գնանք անտառը, գուցէ քո փախած թուշուն-  
ներից միքանիսին բռնենք:

Յովհաննէսը սրբեց իւր արտասուքը և չնոր-  
հակալութիւն յայտնեց հօրը և ծրառուգօտին, իրան  
միթարելու համար:

— Ես ամենայն օր կ'ինդիրեմ Աստծուն, որ  
մայրս և եղբայրս սիրեն ինձ, ասաց նա: Գուցէ  
Աստուած լսէ իմ աղօթքը, ևս այն ժամանակ բոլո-  
րովին բախտաւոր կ'լինեմ:

Երեքը միասին դուրս եկան խրճթից և Յով-  
հաննէսը սկսեց ըրս կողմը նայել: Թուշուններից շա-  
տերը անյայտացել էին, բայց նոցանից մի քանիսը  
զեռ ևս նստած էին տելիայի ծիւղերի և մօտակայ  
ծառերի վերայ: Երբ նոքա լսեցին Յովհաննէսի ձայնը

և հրաւերը իսկոյն թռան և նստեցին նորա թեւերի ու ուսերի վերայ: Նոքա հեշտութեամբ բռնուեցան և իրանց կամքով վերադառն իրանց առաջուայ վանդակները, որոնց գոնակները բաց էր արկե Գուբերտի նախանձը:

Գլ. Աթի ՎII.

### Ենթախտութեանդ մէջ կ'ձանաչես եղբօրդ:

Եղյն երեկոյեան իսկ վճռուեց, որ Տրաուգոտը տանի իւր հետ կրկին բռնած տասն և երկու փետրազարդ թռչուններին և ծախէ իրանների հետ ուր և կամենայ: Եղյն իսկ Տրաուգոտը առաջարկեց այս և Յովհաննէսը ուրախութեամբ հաւատաց իւր թռչունները իր սիրելի բարեկամին: Տրաուգոտը միւս առաւտեան, տեսնելով նոյա հմտութիւնը և ձարտարութիւնը զարմացած մնաց:

— Պու պէտք է, քո կեանքդ թռչուտայցութեան նուիրես, որովհեաւ սա է, քո ներքին ձըդտումը, և սա քեզ աւելի մեծ պտուղ կ'բերէ քան փայտահատութիւնը կամ երկրագրւծութիւնը, որոնց հսմար առողջ և ուժեղ մարդիկ են հարկաւոր, իսկ դու առանց էն էլ թոյլ ես: Դու ստեղծուած ես միայն այս գեղեցիկ և սիրուն:

պարապելու: Եւ այս շատ լահ է: Յըբբ մայրս առողջանայ՝ մենք բոլորս ձեզ մօտ կ'գանք այս հովիտը և երկուսս միասին թռչուտայցութեամբ կ'պարապենք: Անձ համար էլ շատ լահ կ'լինի, որովհեաւ այստեղ Փարիզը մօտիկ է և ես միշտ թռչուններն այնուեղ եմ ծախում: Եվարցվաղից մինչև այստեղ բաւականին երկար ճանապարհ է, այն ժամանակ ես ստիպուած չեմ լինիլ չորփչփել այդ արարածութիւնը և կօշիկներիս կաչ գցել տալու փողը գրանումն կ'ֆնալ:

— Տրաուգոտ, բացագանչեց Յովհաննէսը հիացմամբ, եթէ գու, յիրաւի, այդ անէիր, իշնչ ուրախ կ'լինէի ես: Մենք այն ժամանակ միասին կ'գնացինք անտառը, միասին բներ կ'գտնէինք, միասին թռչուններ կ'բռնէինք, միասին կ'սովորեցնէինք նոյա և վերջապէս միասին կ'տանէինք ծախելու:

— Ա՛յ, ինչ լահ կ'լինէր, ասաց Եվարցվաղիցին, և բացի գորանից երկու եղբայրներս մեր ճանապարհորդութեան ժամանակ կ'պարապէին մեր գործովնոքա կ'սովորեցնէին թռչուններին սկզբնական երգերը, իսկ մենք ձմեռը գործի կէսը կ'կատարէինք միայն կ'աւարտէինք թռչնական դաստիարակութիւնը: Ա՛յս, շատ լահ կ'լինէր: Բայց սպասիր, Յովհաննէս, ես երբ տուն գաւնամ՝ կ'խօսեմ մօրս հետ:

Երկու բարեկամները այսպէս ուրախ փոքր ինչ խօսակցեցին, որով Յովհաննէսը այնպէս ուրախացաւ, որ բոլորովին մռացաւ իւր կորուստը: Բայց նորա

վիճակը վատացաւ այն ժամանակ՝ երբ Տրառէգօար  
ոկսեց ճանապարհի պատրաստութիւններ տեսնելը  
Նվարդվաղցին վերցնելով արկղեկը, ձեռնափայտը և  
գլխարկը գնաց Յովհաննէսի հետ հասարակաց սե-  
նեակը իւր հրաժարականը տալու ամենին, բայց ոչ  
ոք չ'կար այնտեղ բացի Յելեստինից։ Մարթան իւր  
որդու հետ անտառն էր գնացել չ'տեսնելու այլ եւ  
ատելի Նվարդվաղցուն։ Երեխ նոքա ամսցել էին  
զգալով որ Տրառէգօար ճանաչեց իրանց և գնահա-  
տեց իրանց արժանաւորութիւնը։

—Գնան բարեաւ, սիրելի Տրառէգօար, ասաց  
Յելեստինը։ Եթէ Աստուած տայ, աշնանը կրկնի կտես-  
նուինք։ Այն ժամանակ օրերը աւելի ուրախ կ'անց-  
կացնենք քան թէ այժմ անցուցինք։ Գնան բարեաւ,  
միայն մի մոռանար մեզ Տրառէգօար խոստանալով  
այս՝ ամուր և բարեկամաբար սեղմեց Յելեստինի  
ձեռքը։

—Աստուած ձեզ հետ, ասաց նա դողդոջիւն  
ձայնով, ողջունեցեք իմ կողմից ձեր կողջը և Գու-  
բերտին։ Թէպէտ նոքա ինձ ատում են, բայց ես ար-  
դէն բոլորը մոռացել եմ։

Տրառէգօար կրկնի սեղմելով Յելեստինի ձեռքը  
ճանապարհ ընկաւ Յովհաննէսի հետ, որ տիրու-  
թեամբ ուղեկցում էր նորան։ Նոքա լուռ առաջ էին  
գնում, որովհետեւ նոցա սրտերը այն աստիճան լի  
էին ախրութեամբ, որ նոքա չէին գտնում այնպիսի  
խօսքեր, որով կարողանային մէկ մէկու յայտնել իւ-

րեանց զգացմանքը բարձրանալով սարի վերայ, ուր  
Ճանապարհը երկու մասն էր բաժանվում գնալով  
դէպի աջ և դէպի ձախ՝ նոքա խզեցին իրանց լռու-  
թիւնը։

—Այստեղ ես պէտք է բաժանուիմ քեզանից,  
թէպէտ շատ ցաւում եմ, ասաց Յովհաննէսը։ Կրկն  
մենակ կ'մնամ և ախուր ամառը կանցնի, որովհետեւ  
չ'կայ մէկը, որին կարողանամ յայտնել սրտիս զգաց-  
մունքը։

—Մի լար, իմ բարեկամ, պատասխանեց Տրա-  
ռէգօար, թէպէտ և քեզ բոլոր մարդիկ թողնէին,  
բայց իմացիր, որ Աստուած երբէք չի թողնիլ։ Նո-  
րա ձեռին են թէ մայրդ և թէ եղայրդ, նա կ'սափ-  
պէ նոցա սիրելու քեզ։

—Ա՛յ, իթէ այդպէս մի բան պատահէր,  
ինչքան լաւ կ'լինէր, ասաց Յովհաննէսը հոգւոց հա-  
նելով։ Բայց ինչպէս կարող եմ յօյս դորա վերայ  
գնել և ի՞նչ կերպով յօյս կարող է կատարուել։

—Դու, չ՛մ որ, զիտես, աւելացրեց Տրառէգօար, որ  
Աստուած ամենայն բան կարող է անել ինպիր  
զու նորան ջերմեռանդութեամբ և կ'տեսնես, որ նա  
միշտ լսում է զէպի ինքն զառցողների ձայնը։ Ասիր  
միշտ մօրդ խօսքերը, սիրիր Գուբերտին, ուշադրու-  
թիւն մի գաւցնիր նորա ինքնահաւանութեան վե-  
րայ, սոցանով միայն կարող ես նոցս մէրը գրաւել։

Յովհաննէսը շարժեց զլուխը. արտասուքի կա-  
թիւներ զլորուեցան նորա աչքերից կանաչ խոտերի

վերայ: Ինձ հաւատալիք, որ այդպիսի բան լինի. ես միշտ սիրել եմ թէ մայրիկին և թէ Դուքերտին, այնու ամենայնիւ նոքա էլի ասում են ինձ:

—Այդ ինչ, Յովհաննես, ի՞նչպէս կարելի է այդպէս յուսահատուել, աւելացրեց Տառուգօտը: Աստուած տմեն մարդու բարիք է կամենում, նա քեզ թէ թողնիլ և կ'այ ժամանակ, երբ դու ուշ րախ ժամերի և լուպէների մէջ կ'լինիս: Քո այժմ մեան վշտերով միայն փորձում է քեզ: Համբերուշ թեամբ և սիրով տար այս փորձերը: Ես համոզուած եմ, որ երբ ես վերադառնամ և մենք միասին ապրենք միշտ ուրախ և բախտաւոր կ'լինինք:

—Տայ Աստուած, ասաց Յովհաննեսը՝ արտասուրն աչքերին ժպտելով: Ես այդ բոլորը կ'անեմ, ինչքան հնարաւոր կ'լինի ինձ և յոյս միայն Աստուծոյ վերայ կ'իմնեմ: Զէ՞ որ նոյ ինձ թշուառ երեխայիս չի թողնիլ:

—Այ, այժմ կարգին ես խօսում, ասաց Տրաուգօտը: Կաց այդ մտքին և դու կ'տեսնես, որ քո վիճակը հնագիտէ կ'լաւանայ: Իսկ այժմ համբուրիր ինձ մերջին անգամ, ես արդէն պէտք է ուղիւրուիմ:

Երկու բարեկամները համբուրեցին միմեանց և հրաժարուեցան: Յովհաննեսը տուն վերադառնաւ: Նա իւր մէջ վճռեց ամեն կարելի միջոցներով աշխատել գրաւելու մօր և եղբօր սերը և այս իսկ

մատգրութիւնը տուեց նորան զօրութիւն՝ համբերութեամբ տանելու եկող փորձանքները:

Յանելով սենեակը նա գտաւ այնտեղ միայն մօրը և եղբօրը, որնք նայեցին նորան թշնամական հայեացքով: Յովհաննեսը կամեցաւ համբուրել մօր ձեռքը, բայց նա հրնաեց նորան և երբ ուզումէր Գուբերտի ձեռքը սեղմել բարեկամաբոր, անպիտանը հետեւեց մօր օրինակին: Նա տրամած մօտեցաւ սեղանին և սկսեց կարգալ Պ. Միլգերից ստացած զիրքը: Բաւական ժամանակ նա նստած կարգումէր ուշագրութեամբ, մինչև մօր պատուիրելը նորան խիստ ձայնով ջուր բերել վայտ ջարգել և զանազան տնային գործեր կատարել: Յովհաննեսը ծալեց զիրքը և մի կողմ զնելով աշխատեց շուտով կատարել մօր պատուերները:

Գործերը վերջացնելուց յետ, նա կրկին փորձեց բարեկամաբար խօսել եղբօր հետ, ուստի նորան առաջարկեց միասին անտառը գնալ որովհետեւ միաքը զըել էր խնդրել եղբօրը նորան սիրելու համար և յուսով էր, որ վերջապէս կ'զարթնեցնի Գուբերտի սրտի մէջ նորա բոլոր մեռած զգացմունքները: Բայց Գուբերտը վճռաբար պատասխանեց, որ ինքը նորա հետ այլ ևս չէ կամենում ոչ մի գործ ունենալ: Յովհաննեսին շատ ցաւալի էր տեսնել եղբօր այսպիսի թշնամական վարմունքը, բայց նա ցոյց չ'տուեց նորան իւր տհաճութիւնը, այլ կամաց

դուրս եկաւ սենետից և միտքը դրեց երկրորդել իւր  
փորձը:

Չնայելով Յովհաննէսի մշտական անային աշ-  
խատանքով օգնելուն իւր մօրը, չնայելով, որ նա  
ամենայն կերպ աշխատում էր կատարել նորա ցան-  
կութիւնը առաջ, քան թէ նոքա արտայայտած  
կլինէն բառերով, չնայելով նորա ցոյց տուած բա-  
րեկամութիւնը Գուբերախն, նորան էլի չէր յաջո-  
ղում զրառել նոցա սէրը:

Այսպէս անցնում էին օրեր, շաբաթներ, բայց  
ոչ մայրը և ոչ եղբայրը չէին խօսում նորա հետ  
բարեկամաբար: Վերջապէս նա կորցրեց ցանկու-  
թիւնը կատարելու բոլոր յոյսը, այնու ամենայնիւ  
նա չփոխեց իւր գիտաւորութիւնը և երբէք չէր  
գանգատում ոչ հօրը և ոչ ուսուցչն: Նո ամենայն  
օր հանդարտ և ճիշտ կատարում էր իւր պարտա-  
ւորութիւնները, բռնել էր բաւականաշափ թոշուն-  
ել, սովորեցնում էր նոցա և աշխատում էր որ ոչ  
պի առիթ չտայ իրանից անբաւական լինելու: Նո-  
րա երեսը չէր յայտնում այն տիրութիւնը, որ նո-  
րա սրտի մէջ էր ծածկուած, եթէ նորա գունա-  
թափ այտերը ու մթնած աչքերը ցոյց չտային:  
Բայց ոչ նորա վերայ ուշադրութիւն չէր դառնու-  
մ, մինչեւ անգամ Յելեստինը և Պ. Միլդերը վե-  
րաբերում էին այն՝ երեխայի թոյլ և հիւանդու  
կազմուածքին: Ի հարկէ, եթէ նոքա աեսնէին Յովհ-  
հաննէսի յաճախ լաց լինելը մենակ ժամանակ, երբ

ամենքը կարծում էին թէ նա թոշունների հետ է  
պարապում, եթէ նոքա գիտենային, թէ ի՞նչպէս նա  
ամենայն գիշեր թաց է անում իւր բարձը դառն  
արտասուքի կաթիլներով՝ նոքա շուտով կ'փոխէին  
իւրեանց կարծիքը: Բայց Յովհաննէսը ամենքից ծած-  
կում էր իւր վիշար, որովհետեւ միայն Աստուած կա-  
րող էր օգնել նորան:

Աստուածոյ օգնութիւնը, յիրաւի, աւելի մօտ  
էր, քան թէ նա կարծում էր. բայց դժբախտաբար  
ծանր փորձերից յետոյ:

Մի անգամ, երեկոյեան, Յելեստինը իւր օրա-  
կան աշխատանքից յետ դառնալով՝ զանգատվում էր  
իւր անսովոր յօգնածութեան և ուժի նուազման  
մասին: Նա վերաբերում էր այս իւր ծանր աշխա-  
տանքին. և որովհետեւ նորա վլուխը սաստիկ ցա-  
ւում էր, ուստի սովորականից աւելի շատ պառկեց  
քնելու, յուսալով որ միքանի ժամկից յետոյ հան-  
գիստ քնի մէջ կ'վերապառնան իւր ոյժերը: Բայց  
նա շատ սխալուեց, որովհետեւ նոյն իսկ գիշերը նո-  
րա հիւանդութիւնը աւելի սաստկացաւ, երեսը այր-  
վում էր տաքութիւնից, նորա վերայ սաստիկ տենդ  
եկաւ և նա սկսեց արդէն խօսել քնի մէջ: Յովհան-  
նէսը նստելով հիւանդ հօր անկողին մօտ՝ վախեցաւ  
և զարթեցրեց մօրը, իսկ ինքը չ'գտնելով մօտիկ  
բժիշկ՝ դառձաւ դէպի իւր ուսուցիչը, նորանից օգ-  
նութիւն խնդրելու:

¶. Միլդերը տեսնելով իւր աշակելոտի երկիւղը՝  
շտապեց Յելեստինի մօտ, բայց տեսնելով նորան,  
խկոյն հասկացաւ, որ իւր փոքր հասկացողութիւնը  
բժշկանութեան վերաբերութեամբ, չէ կարող օգ-  
տակար լինել հիւանդին:

— Յովհաննէս, ասաց նա, ինչպէս երևում է,  
հօրդ հիւանդութիւնը վտանգաւոր է, պէտք է շու-  
տով մարդ ուղարկել քաղաք բժիշկ կանչելու, ինչ-  
քան շուտ գայ նա, այնքան լաւ է: Նայիր ինչպէս  
նորա ձեռները վառվում են տաքսութիւնից և ինչ-  
պէս արիւնը վրդովուած է: Ես այստեղ չեմ համար-  
ձակիում ուինչ անել, որովհետեւ վախենում եմ, որ  
չլինի թէ արածովս նորա հիւանդութիւնը աւելի  
սասակացնեմ:

Մարթան տեսնելով ¶. Միլդերի դէմքի տխուր  
արայայտութիւնը՝ վախեցաւ և սկսեց լաց լինել:

— Ա, Աստուած իմ, ով կ' գնայ զիշերը քա-  
ղաք իմ՝ թշուառ կնոջս խօսքով, բժիշկ կանչելու,  
մանաւանդ որ քաղաքը հեռու է:

— Ես կ' գնամ, մայրիկ, ասաց Յովհաննէսը ար-  
տասուքը սրբելով, թէպէտ ես չեմ եղել քաղաքում,  
բայց յաճախ տեսել եմ սարի վերայից նորա աշտա-  
րակները: Աստուած կ' օգնի ինձ և ցոյց կ' տայ ձա-  
նապարհը: Լուսնեակը պայծառ փայլում է. դուրսը  
այնպէս լոյս է, որ կարծես ցերեկ է:

Իւր մարդուց՝ գերգաստանի միակ կերակրողեց,  
զըկուելու ահը փափկացրեց Մարթայի սիրտը. նա

առանջին անգամ քաղցր հայեացքով նայեց Յով-  
հաննէսի վերայ և ասաց. Դու, յիրաւի, կամենում  
ես գնալ Յովհաննէս, ես շատ ուրախ կ' լինէի:  
— Ոիրելի՛ մայրիկ, ես պատրաստ եմ գնալու  
ամենայն տեղ, ուր զու կ' հրամայես, թէև նա աշ-  
խարհի ծայրը լինէր: Ես բոլը ուժով կ' վագեմ, որ  
ինչքան կարելի է շուտ վերադառնամ բժշկի հետ:  
Երկիւղը ինձ թևեր կ' տայ:

¶. Միլդերը մի քանի պատուելներ տուեց ձա-  
նապարհի վերաբերութեամբ: Յովհաննէսը շուտով  
ձանապարհ ընկաւ: Քաղաքում Աստուած առաջնոր-  
դեց նորան, նա այնուեղ մի մարդասէր բժիշկ գտաւ,  
որ պատրաստ էր հիւանել նորան: Բժիշկը խկոյն  
պատուիրեց լծել կառքը և վերցնելով իւր հետ ե-  
րեխային՝ շտապով օգնութեան էր գնում նորա հօրը:  
ձանապարհին նա միսիթարում էր խեղճ Յովհան-  
նէսին, և խոստանում ամենայն կերպով աշխատել  
նորա հօր առողջութեան համար:

Երբ նոքա հիւանդի իրմիթը հասան, արել  
սարերի յետեկց նոր էր բարձրանում: Բժիշկը խ-  
կոյն Յելեստինին գեղ տուեց, որ ամենայն ժամանակ  
իւր մօտ ունէր և նկատեց ուրախութեամբ, որ նո-  
րա տաքութիւնը նուազում է:

— Թէպէտ այս հիւանդութիւնը վտանգաւոր  
է, ասաց նա Մարթային, այնու ամենայնիւ ես յու-  
տով եմ, որ քո մարդը քիչ ժամանակից յետ կ' ա-  
ռողջանայ: Եթէ չեմ սխալվում տենդ է նորա հի-

ւասնդութիւնը, որ այժմ ամենայն տեղ տարածուածէ: Եթէ, նորա հետ պատուէրներիս համաձայն վարուէք, Աստուծոյ օգնութեամբ, կ'լուանայ շուտով:

Մարթան խոսացաւ կատարել հեշտութեամբ Նորա տուած բոլոր պատուէրները և բժիշկը գնաց աւելով, որ հետեւալ օրը կրկին կ'գայ: Յովհաննէտսին իւր հետ քաղաք տարաւ հօր համար ուրիշ գեղեց ևս տալու, իսկ նա այնպէս շուշ եկաւ, որ դեռ մութը չեր բնկել: Դեղը լաւ ներդրծութիւն արաւ Ֆելստինի մերայ. Նա հանգիստ քնուամ էր, բայց երբեմն երբեմն նորա քունը խանգարվում էր տեսդային ցնորդներով, ուստի Յովհաննէտս մի քանի ժամ էր հեռանում հօրից, իւր վասարակած ուժերը կրկին վերականգնելու:

Հօր հիւանդութիւնը մի քանի շարաթ շարունակուեց և ընտանիքն ընկաւ վերջին աստիճան ազքատութեան մէջ: Բայց որովհետեւ ոչոք այլ ևս ոչինչ չեր աշխատում, Մարթայի բոլոր պահած փողերը միստեցան և հօր հիւանդութեան հետ միացաւ աղքատութիւնը:

Այս ժամանակ միայն Մարթան սկսեց գնահատակել Յովհաննէտի արժանաւորութիւնը: Խնչքան նա հոգս էր քաշում իւր հիւանդ հօր համար, այնքան էլ հոգս ունէր կեանքի ամենաանհրաժեշտ պիտոյքների հայթհայթման համար: Այն զիշերներից յետոյ՝ որ նա անցնում էր անքուն հօր անկողնի մօտ, առաւտուեան գնում էր ուրիշների մօտ բանե-

լու և չեր դադարում աշխատելուց, թէպէտ չառ անգամ նա բանելու ժամանակ կնքվաբառմ էր և կացինր ձեռից վայր ընկնում: Աշխատած փողերը նա երեկոյեան բերում էր մօրը և փոքր ինչ հանգըանալուց յետ կրկին դալիս էր հօր մօտ, որին, մինչև Յովհաննէտի վալը, մայրն էր հսկում:

Բայց այս ամենասեղ ժամանակ Յութերալ անհօգ լեռների ու անտառների մէջ էր թափառում և ամեննէին չեր կամենում մօրը լսել որ նորան պատուիրում էր գնալ աշխատելու Յովհաննէտի հետ: Մարթան ակամայ համեմատում էր իւր իսկական որդու վարքը խորթարդու վարքի հետ, ուստի և փոքր առ փոքր իւր ատելութիւնը, գեղի Յովհաննէտը, նուազեցնում էր: Մարթան այնուհետեւ խօսում էր նորա հետ ժամելով և վաղաքշելով, մանաւանդ այն ժամանակ, երբ նա անխօնջ աշխատում էր թէթեացնել իւրեանց նիւթական վատ դրութիւնը: Յովհաննէտը նկատում էր մօր վարմունքի փոփոխութիւնը, Աստծուն շնորհակալութիւն էր անում և աշխատում էր ոյթելը ամեն օր հայթաթելու կեանքի անհրաժեշտ պիտոյքները: Պայց խեղճ երեխային այս անընդհատ աշխատանքները մատչ կ պատճառաւին, եթէ Պ. Միլդերը ովհնութիւն չ'հանեմ: Այս ամենաբարի մարդը, շնորհուած որ գիտէր Ֆելենարինի հիւանդութեան արագ փոփոխիկ լինելը, այնու ամենայնին չեր դադարում այնելերու նորան և միշտ կապուրում էր միմիթարիչ

խօսքերով իւր աշակերտին, որ այս ժամանակ իսկ ռկնեց քաղել իւր աշխատանքի պատւղը, որով նա գլուհել էր իւր ուսուցչին:

Պ. Միլդերի խօսքերը այն աստիճան հանգըտացնում էին նորա սիրտը ու զօրացնում հոգին, որ նա արդէն յօյսը հաստատ Աստուծոյ վերայ զրած էր նայում իւր ապագային. պ. Միլդերը չէր բաւականանում միայն միմիթարելով նոցա, այլ իւր կարողութեան չափ օգնում էր այս թշուառ ընտանիքին երբ նոցա աղքատութիւնը համում էր վերին աստիճանի: Մեր Յովհաննէսի օրական աշխատանքը չէր բաւականանում մինչև անգամ կեանքի ամենաանհրաժեշտ պիտոյքները ձեռք բերելու համար և պէտք էր սպասել որ նա այս ծանր աշխատանքից շուտով կ'հիւանդանայ: Բայց Պ. Միլդերը ման էր գալիս տնից տուն, պատմում էր ամենայն տեղ Մարթայի վատ դրութիւնը, գտնում էր Յովհաննէսի համար բարերարներ և խնդրում նոցանից օգնութիւն այս անբախտների համար, որ վաղուց զըրկուել էին իւրեանց կերակրողից: Յիրաւի, նորախօսքերը իզուր չ'անցան, այնպէս որ չ'կար գիւղում ոչ մի մարդ, որ օգնութիւն չ'հասնէր Յելեսահինի անբախտ ընտանիքին, որը փող էր բերում, որը՝ հաց, որը՝ ալիւր, որը՝ ձու, որը՝ իւղ, որը՝ ընդեղէն և Պ. Միլդերը գեռ ևս մի քանի գիւղացիների էր ասել, երբ արդէն Յելեսահի տունը լի էր բոլոր կենական պիտոյքներով: Դրացիներից շատերը Յովհան-

նէսին պատուիրում էին գնալ ամեն օր կերակուր ուտելու և բոլորը ուրախանում էին տեսնելով լի զգացմունքով յայտնած շնորհակալութիւնը:

Այս միջոցում Յովհաննէսը իւր սրտի մէջ զգում էր երբեմն տրտմութիւն և երբեմն ուրախութիւն. տրտմութիւն՝ իւր հօր հիւանդութեան երկար տեելուն համար և ուրախութիւն՝ զրացնելի և իւր ուսաւցչի սիրոյ և օգնութեան համար: Բայց նա աւելի ուրախանում էր տեմնելով իւր խրթմօր ատելութեան նուազումը: Ամեն երեկոյ՝ քնելու ժամանակ, նա շնորհակալ էր լինում Աստծուց, այն բոլորի համար, որ հօր հիւանդութեան ժամանակ պատահել էր իրան և խոստանում էր սուրբ վարչով և աստուծապաշտութեամբ շարունակ ծառայելու Աստծուծոյ կամքին: Նա աղաջում էր հօր առողջութեան համար, որից յետ միշտ հոգեկան հանգստութիւն էր զգում և կազդուրվում նոր ուժերով հետևեալ օրուայ աշխատանքի համար:

Այսպէս անցնում էին օրերը, մինչև Յելեսահինի առողջանալու բոտէի համնելը: Բժշկի, Պ. Միլդերի, Մարթայի և Յովհաննէսի աշխատանքով հեռացաւ նորանից հիւանդութեան զօրութիւնը և երբ մի առաւօտ Յելեսահինը բացեց իւր արդէն պարզած աչքերը ճանաչեց իւր սիրելի որդի Յովհաննէսին, որ թիկն տուած հստել էր հօր անկողնի մօտ:

— Իմ սիրելի Յովհաննէս, ասաց նա ցածր ու դողդոջուն ձայնով, վաղո՞ւց է, որ ես հիւանդ եմ:

Աւրախական աղաղակով Յովհաննէսը ստի կամգնէց հօր ձայնի վերայ, որ գունաթափ, նուազած, բայց բոլորովին աղատ տենդից պտոկած էր անկողնուռմ:

Հայրիկ, սիրելի հայրիկ, դու առողջացնիք, բացականչեց նա չոքելով հօր մօս և թափելով ուրախական արտասուք: Յետոյ նա բռնեց հօր լրարած ձեռները համրուրեց և շնորհակալ եղաւ Աստուծուց իւր ամենասիրելի հօր առողջութեան համար:

— Ա ՛ ն, հայրիկ, ասաց նա, ի՞նչպէս կ'ուրախանայ մայրիկը լսելով քո ցանկալի առողջութեան լուրը:

— Միթէ հիւանդութիւնս այդքան վտանգուո՞ր էր, հարցրեց հայրը: Ուղեղ է, թէպէտ զլուխս ինձ ծանր է թուռում, բայց չ'կարծեմ որ վերջին բռպէս այդքան մօտ եղած լինի:

— Եթէ Աստուծած չ'օգնէր, կարելի է դու երբէք չ'առողջանայիր, ասաց Յովհաննէսը: Բայց մի բռպէտ սպասիր, հայրիկ, ես գնամ իմ մայրիկին և Գուրեբախն կանչելու, որ նոքա էլ ինձ հետ ուրախանան:

Յովհաննէսը արագութեամբ վազեց և մի բռպէից յետոյ վերադառցաւ մօր և Գուրեբախի հետ, որոնք նոյնպէտ ուրախական արտասուքով շնորհաւորեցին առողջացած հօրը:

Այստեղ սկսուեց նորա հիւանդութեան պատմութիւնը և Յելեստինը շատ զարմացաւ լսելով իւր

վերջին լուպէի այն քանի մօտ եղած լինելը: Նա չնորդակալ եղաւ Աստուծուց իւր առողջութեան համար և սրտանց ուրախացաւ տեսնելով Մարթայի լու վարուելը Յովհաննէսի հետ: Աէս օրին նա կրկին նքնեց: Նոյն օրուայ երեկոյին եկան բժիշկը և Պալլդերը տեղեկանալու նորա առողջութեան մասին: Բժիշկը տեսնելով հիւանդին ասաց, որ այլ ևս աշալի ոչինչ չ'կայ, այս խօսքերը նոր ուրախութիւն պատճառեցին ամենին:

— Իմ գործո այսակող վերջացած է, ասաց նա, եթէ այս ցաւը, ոչ պին չ'փոխուի. այնու ամենայնիւ մի քանի օրից յետոյ ես կրկին կ'զամ:

Այս տաելով նա դուրս գնաց և թողեց այս ուրախ և բախտաւոր մարդկանց մենակ:

Յովհաննէսը անրացաղբելի բաղդաւորութեան զգացմունքով լի այն զիշեր պատկեց քնիլու: Նա սրտանց շնորհակալ եղաւ Աստուծուց իւր հօր ազատուելու համար: Նա այլ ևս չեր զգում ոչ մի նախազգացութիւն, թէ նոր փորձեր են սպասում նուրան սպազայում:

Եկը յաղթում է ամենայն բանի:

Յելեստինի առողջանալու յոյսը այս անրախղնասնիքին պատճառեց անընդհատ ուրախութիւնը:

Նորա ուժերը հետպշեաէ վերագաւնում էին և նա  
արդէն կարողանում էր կնոջ և որպու օգնութեամբ  
ու անից գուրս գալ: Հիացմունքով շնչում էր նու մա-  
քուր օղը, զուարձանում էր՝ նայելով կապոյա եր-  
կրնքին, փայլող արեին. զուարձանում էր կանաչ  
անտառի տեսքով և թռչունների երգերով, որոնք  
լսելի էին ծառերի բոլոր ճիւղերից:

«Եղն ժամանակ եկաւ բժիշկը: Յովհաննէսը  
ուրախ ուրախ նորան զիմաւորելու գնաց և բերեց  
հօր մօտ, որ շնորհակալութեան ժպիտով ձգեց իւր  
ձեռքը դէպի նա:

—Աստուած վարձատրի ձեզ, ձեր բարեգոր-  
ծութեան համար, ասաց Յելեսաինը արասուքն  
աչքերին: Ես խեղչ եմ, և միայն կարող եմ խնդրել  
Աստուն, որ բախտաւորեցնի ձեզ:

—Ոչ ոչ իմ բարեկամ, ասաց բժիշկը ընդ-  
հանելով խօսքը: Ես սրտանց ուրախ եմ, որ յաջո-  
ղութեամբ սրտակեց իմ աշխատանքը: Նորանից պէտք  
է շնորհակալ լինել և ոչ ինձանից: Բայց ո՞ւր է Մար-  
թան, ես նորան չեմ աեմնում:

—Մայրիկը գնաց փոքր ինչ քնելու, ասաց  
Յովհաննէսը: Նորա պլուխը ցաւում էր, բայց, ինչ-  
պէս ինքն ասաց, շուտով կ'անցնի:

Բժիշկը փոքր ինչ մատածելուց յետոյ՝ ասաց՝  
տայ Աստուած, որ այգակէս շուտ անցնի: Տենքը ասա-  
լափոխիկ է և ինձ հարկաւոր է աեմնել նորան: Հա-  
պա, Յովհաննէս, գնանք նորա մօտ:

Երեխան կատարեց նորա խօսքը: Բժիշկը նա-  
յելով Մարթայի վերայ, իսկոյն իմացաւ, որ Յելես-  
աինի անդունքը նորան է փոխուել: Կուբերտի վերայ  
նոյնպէս, որ միշտ մօր հետ էր, երևեցաւ նոյն նշան-  
ները, ուստի բժիշկը զբեց նոցա համար այն գեղերը,  
որոնք նելքործել էին Յելեսաինի վերայ: Մինչև գի-  
շերուայ համնելը տենդը արդէն բռնեց մօրն ու որ-  
դուն և Յելեսաինի խրձիթը դարձաւ այժմ կատա-  
րեալ հիւանդանոց: Այս ընտանիքի չորս անդամնե-  
րից միայն մինն էր առողջ և այն՝ դադրած և վա-  
տոյժ անցած օրերի ծանր աշխատանքներից:

Այժմ մանաւանդ սկսուեցաւ ամենադժուար  
ժամանակը մեր Յովհաննէսի համար, որովհետեւ նա  
պէտք է նայեր երկու հիւանդներին և մի առողջա-  
ցողին, բայց չկար ոչ ոք, որ օգնէր նորան այս ծանր  
պարտականութիւնը կատարելու մէջ: Պ. Միլդերը  
այս բանը հաճութեամբ կանէր. բայց նա պարտա-  
ւոր էր ուսուցանել երեխաների, ուստի կարողանում  
էր գալ միայն մի բոպէ այցելութեան: Միւսները  
չէին այցելում ամեննեին, վախենալով՝ որ չէնի թէ  
հիւանդութիւնը իրանց փոխուի և Յովհաննէսը որը-  
տանց ուրախանում էր, երբ միքանիսը ամենահա-  
մարձակներից մանելով տան մօտի փոքրիկ պար-  
տէզը՝ թողնում էին այնաեղ մի որ և է կերակուր  
կամ կազդաւող խմիչք: Նոցանից նա շատ քիչ էր  
ուտում, այլ տալիս էր դեռ նոր նոր առողջացող  
հօրը, որ շատ ախորժակով էր ուտում: Խեղճ Յով-

Հաննէսը միքանի շաբաթ շաբունակ չեր գտնում՝  
հանգստանալու գէթ մի ժամ։ Նա երբէք չեր կա-  
րողանում կարգին քնել, որ ու գիշեր երկու հիւանդա-  
ների մօա էր լինում և նոյա համար հոգում էր  
այնպէս, ինչպէս իւր հօր համար։ Աթէ երկուսն էլ  
հանգիստ քնում էին՝ ինքն ևս գլուխը բազկին զնե-  
լով քնում էր, մինչեւ որ հիւանդներից մէկը շար-  
ժուէր։ Ամենափոքր ձայնից նա խսկոյն ոտի էր կանգ-  
նում և ի հարկէ այսպիսի քունը երբէք կազու-  
րիչ չեր կարող լինիլ։

Մարմնական ուժերի թուլանալու հետև միա-  
ցաւ և անընդհատ հոգու հիւանդ մօրը և եղքօրը  
պահպանելու մասին։ Նորա միտն անգամ չեր գալիս,  
թէ Գուրելար առաջ իրան միշտ նեղացրել է և թէ  
մայրը իրան երբէք չէ սիրել։ Նա միայն մաածում  
էր, թէ ինչպէս թեթեացնի նեղութիւնը։

Այսպիսի շարչարանքների մէջ անցան միքանի  
շաբաթներ և բժիշկը, որ այցելում էր նոցա զրէթէ,  
ամենայն օր ասաց, որ հետեւեալ գիշեր վերջապէս  
կ համար նոցա հիւանդութեան վերջը։

Արեն արգէն վաղուց մայր էր մտել։ Վասոյժ  
հայրը, որ շատ քիչ էր կարողանում օգնել Յովհան-  
նէսին, քնած էր սենեակում, Յովհաննէսն էլ գտան-  
վում էր իւր սովորական աեղում—հիւանդների մօա։

Մայրը երազի մէջ խօսում էր, իսկ Գուրելար  
հեկիկում էր ու գտնապառում զլիսի ցաւի մասին։ Թէ  
իրան հանդիսա չի թողնում և շարչարում է։ Յով-

հաննէսը առևնայն միջոց գործ էր գնում նոյա հան-  
գստացնելու համար։ Նա սառոց էր գնում նոցա-  
գլխներին, ճշառթեամբ կատարում էր բժշկի բոլոր  
պատուիները և շատ ուրախանում էր։ Երբ մօր  
երբեմական ժպիտները փոխարինում էին իւր ծանր  
աշխատանացը։ Ոինչեւ կես գիշեր շարունակուեցաւ  
հիւանդների անհանդատութիւնը, ապա փոքր առ  
փոքր հանգստացան նոքա, առաջ մայրը, յետոյ  
Գուրելար և թուում էր թէ յիրաւի, քնան նոքա։  
Այնուհետեւ նոցա քունը հանգիստ էր և ոչ խան-  
գարուած վայրենի ցնորբներով։ Յովհաննէսը ուրա-  
խութեամբ նկատելով այս չեր համարձակում շար-  
ժուել և գուշակում էր հիւանդների առողջութեան  
մօա լինելը նոցա գէմքի ամենափոքր փոփիխութիւ-  
նից։ Մայրը սկսեց հանգիստ և կանոնաւոր շունչ  
քաշել։ Նորա վարդագոյն գէմքը գունաթափուել էր  
և անդից ալեկոծուող արխանը սկսել էր խազաղա-  
նալ։ Գուրելան էլ երբեմն երբեմն կողքէ կողք էր  
զառնում անկողնի մէջ և երբեմն ծանր հառաջում,  
այնուամենայնիւ նորա զրութիւնն ևս բաւականին  
լուացաւ, այնպէս որ Յովհաննէսը կարող էր յու-  
սուլ թէ նա կ արտղանաց։

Յովհաննէսը, որ բոլորովին գունաթափուել էր  
և լրաբացել նատեց եղքօր անկողնի մօա, թէքուեց  
գէպի նա և ասաց նորան մի քանի միսիթարական  
խօսքեր։ Թէպէս հիւանդը չեր հասկանում նոցա  
միաքը, այնու ամինայնիւ նոքա ազգում էին նորա

վերայ: Ժամանակ առ ժամանակ նա բաց էր անում աչքերը, կարծես զարմանքով, նայում էր Յովհանն նէսի վերայ, յետոյ փակում էր և մի քանի անհասա կանալի խօսքեր ասելուց յետոյ հանդիստ քնում:

Պորին լուսթիւն էր թագաւորում սենեաւ կում: Վատոյժ Յովհաննէսը ծանր հառաջանքով վլուսը թեքեց եղբօր բարձի վերայ: Երեկոյեան ճրագը լուսաւորում էր նորա երեսը, որի վերայ նկատելի էին անքուն գիշեների և չափազանց աշխատանքի հետքերը: Յովհաննէսը աննկարադրելի արտայայտութիւնը զրօշմուած էր նորա գծագրութեան և զունաթափ ճակատի վերայ, բայց շըրթունքների վերայ նկատվում էր մի ուրախական ժաիս, որովհետեւ հիւանդների քաղցր քունը զարթեցնում էր նորա մէջ նոցա առողջութեան մօտիկ լինելու յցար: Նա ականջ էր զնում մօր և Գուբերտի շնչառութեանը, բռնում էր նոցա ձեռները և շոշափում էր շնչերակները, որոնք փոքր առ փոքր սկսել էին կանոնաւորուել: Յովհաննէսի աչքերը պարզվում էին, մի ուրախայի ժայիտ նկատվում էր նորա շրթունքների վերայ, երբ նա գտնում էր շատ նշաններ, որոնք ցոյց էին տալիս նոցա առողջութեան մօտիկութիւնը:

—Ա՛ս, ասում էր նա հառաջելով, եթէ Աստուած ասյ, որ մայրս և եղբայրս առողջանան՝ ես բոլորովին բախտաւոր ելինիմ: Նոքա պէտք է, որ այժմ համոզուած լինին, թէ ես իրանց ի սրտէ

բում եմ և, շատ կարելի է, ինձ հետ լաւ վարուին: Ես կօրհնէի իմ աշխատութեան ժամերը, որ ես անցրել եմ նոցա անկողինների մօտ, եթէ, յիրաւի, այսպէս պատահէր. և ես կ'զգայի ամենամեծ ուշրախութիւն, եթէ իմ աշխատանքներով կարողանայի սէր զարթեցնել նոցա սրտի մէջ գէպի ինձ:

—Երկնաւոր հայր, աղօթում էր նա չքելով Գուբերտի անկողնի մօտ, աղաջում եմ, առողջացրու մօրս և եղբօրս: Քո ձեռքին է կեանքը և մահը: Տուր առողջութիւն նոցա, որոնց ես ամենից շատ եմ սիրում, թող օգտուին նոքա քո բարեգործութեամբ ուղարկիր ինձ նոցա սէրը և արա ինձ բարի և ծշմարիտ մարդ, որ միշտ արժանի լինիմ նոցա սիրուն:

Յովհաննէսը ընկղմած խոր զգացմանց մէջ շնկատեց, որ այն ժամանակ իսկ, երբ ինքը ծնկների վերայ ընկաւ, մայրը նստեց անկողնի մէջ և սկսեց նայել նորա վերայ իւր պարզ աչքերով: Նա կամենում էր բան ասել, բայց տեսնելով Յովհաննէսին, որ աղօթում էր իւր և եղբօր համար՝ լոեց և սաստիկ սրտաշարժուեց: Արտասուքի կաթիլներ թափուեցան նորա աչքերից, տարսածեց նա իւր ձեռները և ասաց խորին զգացմամբ.

—Յովհաննէս, Աստուած լսեց քո աղօթքը, նա կակղացրեց իմ սիրտը և ես այժմ զգում եմ սէր գէպի քեզ, գէպի իմ սիրելի և բարի որդին:

Յովհաննէսը իսկոյն ոտի կանգնեց և տեսնելով

ձեռնատարութեաւ արտաստուղ մօրլը փաթաթուեց  
նորան:

— Մայրիկ, սիրելի մայրիկ, մի՞թէ ուղիղ ես  
ասում, մի՞թէ յիրաւի զու ինձ սիրում ես, մի՞թէ  
քո ձեռներն ինձ փոյփայում, մի՞թէ, քո շրթուքը-  
ներն են ինձ քաղցր խօսքեր ասում, այս ինձ հա-  
մար բաղդաւորութիւն է և շատ մեծ:

Նա լոց եղաւ, Մարթան նոյնպէս արտասիւմ  
էր Յովհաննէսին իւր կրծքին սեղմելով:

— Եւր, իմ սիրելի, բարի որդիսկ; Ասուաւած  
առ ժամանակ փակեց իմ աշքերը, որ ծանաշեմ քո  
սիրար ասաց նա հանգարաւութեամբ: Դու աղօ-  
թում էր նոյցա համեր, որովք քեզ միշտ նեղաց-  
րել են և դորանով իսկ ստիպեցիր ինձ զգալու իմ  
անարդարութիւնը քո վերաբերութեամբ, ես չեմ  
գտնում այնպիսի խօսք, որով զղջալս կարողանամ  
յայսնել:

Մի ասիլ այդ, սիրելի մայրիկ, ինսլուսմ էր  
Յովհաննէսը բարձրացնելով իւր, ուրախութիւնից  
փայլող, աչքերը: Մի ասիլ այդ մի այնպիսի բովե-  
ում, երբ դու ինձ այսպէս բաղդաւորեցիր ութէ,  
դու ինձ փոքր ինչ սիրես, հաւատացիր, որ կվար-  
ձատիս ինձ առաջուայ բովը զրկանքների համար:

Մայրը թէպէտ լոեց, բայց նորա աշքերը խօ-  
սում էին և Յովհաննէսը հասկոնեւմ էր այս համբ  
լեզուն: Բաղդաւոր Յովհաննէսի շրթուքների վերայ  
մի նկատելի ժապիս էր խաղում, նորա աչքերը փայ-

լում էին և արտաստնեւմ էր առևնամեծ ուրախու-  
թեան բառեր:

— Եւ մի այսպիսի բարի սիրա, ես այսքան եր-  
կար ժամանակ, չէի կարողանում գնահատել մտա-  
ծում էր մայրը, Յովհաննէսին կրկին սեղմելով իւր  
կրծքին: Ի՞նչպէս էր եղել, որ ես մինչ այս աստի-  
ճան կոյր էի մնացել:

Յովհաննէսը մի առանձին բաւականութեամբ  
պատասխանում էր մօր բոլոր փաղաքշական հարցե-  
րին: Նա զգաց իւր արտօւմ, որ միայն այս բոպէն  
կարող է փոխարինել իւր բոլոր աշխատանքներին:  
Պօսակցութիւնը մօր և որդու մեջ երկար շորունա-  
կեց և Յովհաննէսը պատմեց Մարթային այն բոլորը,  
ինչ որ պատահել էր նորա հիւանդութեան սկզբից:  
Թէպէտ նա իւր մասին շատ քիչ էր խօսում, բայց  
մայրը համկացաւ, որ իւր և Գուրեբատի կեանքը նո-  
րան են պարտական և Մարթայի այս համապանքը  
քիչ չ'օգնեց այն սիրոյ աճելուն, որ ինքն արդէն  
զգացյել էր գետ ՚ի Յովհաննէսը: Մայրը հանգիստ  
պառկած Գուրեբատին էր նայեւմ և երբ Յովհաննէսը  
ասաց նորան բժշկի իրան յայնած յոյը Գուրեբ-  
ատի շուտավ առողջանալու մասին՝ նա չնորհակարու-  
թիւն յայտնեց նորան իւր քնքոյց հայեացքով:

— Գուրեբատի հիւանդութեան վերջը արդէն  
հասել է, նա երբ արթնանայ բոլորովին առողջ կ'լի-  
նիսաւագ Յովհաննէսը հատուտապէս:

Եւր խօսքերը մեծութիւն պատճառե-

ցին Մարթային, նորա ուրախութիւնը կրկնապատկուեցաւ մանաւանդ այն ժամանակ, երբ իմացաւթէ Յելեստինը օրէ ցօր առելի կազդուրպում է և շուտով բոլըրպին առողջ կ'լինի:

Առաւօտը մօր աչքերը սկսան կրկն կալել յոգնածութիւնից Յովհաննէսը նկատելով այս, իսկոյն ճրագի առաջ թուղթ դրեց, նորա ձառագայթները արգելելու համար, որոնք ծակծկում էին Մարթայի աչքերը և ցանկանալով նորան հանգիստ քուն կամաց նստեց Գուբերափի անկողնի մօտ:

Շուտով մօր կանոնաւոր չնշառութենից իմացաւ Յովհաննէսը, որ նա քնից, այդ ժամանակ միայն նա իւր գլուխը դնելով Գուբերտի բարձի ծայրին՝ վճռեց փոքր ինչ քնիլ Սկզբում նորա ալեկոծուած արիւնը չթողեց նորան քնելու, բայց վերջապէս նորա յոգնած մարմինը — յաղթեց հսկող մուացը և մի քաղցր ու կազդուրիչ քուն ըմբռնեց նորան:

#### ԳԼՈՒԽ IV.

Հնորհակալ եղէք Աստծուց, որ նա ազատեց ձեզ ամենայն տանջանիքներից:

Յովհաննէսի բոլոր աշխատանքի նպատակը (մօր սէրը) վերջապէս կատարվեցաւ և նորան շուտով

Հետեւեց Գուբերտի բարեկամութիւնը, երբ Մարթան պատմեց թէ ի՞նչպէս Յովհաննէսը հոգս էր քաշում նորա համար և թէ ինքը սրտանց սիրում է Յովհաննէսին: Բայց ամենից շատ ներգործեց Գուբերտի վերայ այն խառութիւնը, որ մայրը զործ է զնում նորան իւր վատ սովորութիւններից հեռացնելու: Որովհետեւ ոչ մի չարութիւն, մանաւանդ Յովհաննէսին նեղացնելու վերաբերութեամբ, չէր ներփում, ուստի նա ինքն իրան սկսաւ մտածել իւր եղբօր արժանաւորութիւնների վերայ և գնահատել նորա բարութիւնը, մանաւանդ, երբ հասկացաւ թէ Յովհաննէսը ամենեին պարտական չէ համբերելու իւր արած չարութիւններին: Նա սկսեց աւելի և աւելի սերտ կապուել Յովհաննէսի հիտ և սա, վերջապէս, սրտանց շնորհակալ եղաւ Աստծուց, իւր բոլոր ցանկութիւնները կատարուած տեսնելով:

Որանով մենք կարող էինք վերջացնել մեր պատմութիւնը, որովհետեւ մեր գլխաւոր նպատակն էր՝ ցոյց տալ թէ Ճմարիտ և անկեղծ սէրը երբեք անյաղթելի արգելքներ չեն գտնիլ և թէ ոչ նախանձը, ոչ ատելութիւնը և ոչ չարութիւնը կարող են նորան հակառակել: Յովհաննէսը անդադար աշխատում էր գրաւել մօր և եղբօր սէրը և նա կարողացաւ՝ որովհետեւ նա այնպէս էր սիրում նոցա, որ իւր անձը կ զրհէր նոցա համար:

Եթէ դուք, սիրելի մանուկներ, զրկուած էք կամ բարեկամի, կամ քրոջ, կամ խորթ-մօր, կամ

ուսուցչի, կամ ընկերակցի, կամ մինչև անգամ ծառօթի սէրից, մի յուսահատուիք, այլ ընդհակառակը, աշխատեցէք կրկին ձեռք բերել այն: Եթէ դուք էք մեղաւոր՝ ճանաշեցէք մեղքերդ ամենի առաջ և աղօթեցէք Աստծուն, որ ձեզ ոյժ տար ուղղուելու. իսկ եթէ դուք չեք մեղաւորը, հպարտութեամբ մի դարձնէք երեսներդ մոլորուածից, այլ աշխատեցէք խելքի բերել նորան և նայեցէք կորուսած սիրոյ վերայ, ինչպէս մի կորուսած գանձի, որին զանելու արհամար պէտք է ամեն ազնիւ միջոցներ գործ դնել: Ահա այս հանգամանքներում եթէ ձեր սէրը անկեղծ և ճշմարիտ կ'լինի աշխատանքներդ էլ, անպատճառ, կ'պատկուին մի ցանկալի յաջողութեամբ:

Բայց մեր միմեանցից բաժանուելուց առաջ, սիրելի մանուկներ, ևս կ'պատմեմ ձեզ մեր բարեկամների յետագայ վիճակը, որոնք, շատ կարելի է, արդէն գրաւել են ձեր սէրը:

Դժբաղգարսոր մենք առաջն անգամ ոչինչ միսիթարական բան պատմել չենք կարող նոցա վեճակի մասին: Ուղեղ է, առողջացան Ցեկստինը, Մարթան և Գուբերտը, բայց նոցա հիւանդութեան հետեւանքները եկար ժամանակ ծանրացրին նոցա վիճակը: Ցեկստինը ամրող ամառը չափազանց թոյլ էր և չեր կարող կրկին իւր սովորական ծանր և քրտնաթոր աշխատանքը սկսել և նորանով պահել ընտանիքը, մինչև անգամ աշնանը հազեւ հազ կարողանում էր կացինը գետնից վերցնել, ուր մնաց

նորանով ծառեր կտրիլու: Բժիշկը, մինչև անգամ, ասել էր, թէ, շատ կարելի է, որ մինչև Ցեկստինի գործի կանգնելը անցնի. մի ամրող ասարի և այս հանգամանքն էր, որ ամենին ընկղմել էր ծանր հոգաբրի մէջ: Նոքա կրկին զգացին կեանքի անհրաժեշտ պիտոյքների պակասութիւն, որովհետեւ կարեկից հարեանները առհասարակ պատկանում էին աղքատների կարգին. Նոքա էլ հազիւ կարողանում իրանց ընտանիքը պահելու: Պիլդերն էր միակ մարդը, որ երբեմն օգնում էր Ցեկստինին, բայց նա ևս հարուստ չէր և նորա բերածները բաւական չեին Ցեկստինին ծանր հոգսերից ազատելու: Միայն մեր Յովհաննէսն էր, որ յոյսը չէր կտրել: Նա կրկին սկսեց նոր եռանդով պարապել թռչնուայցութեամբ, որի մէջ շատ օգնում էր իրան Չութակածութիւնը: Գուբերտն ևս օգնում էր նորան այժմ, մինչև անգամ Ցեկստինը, որ թոյլ լինելուց չէր կարող ոչինչ ուրիշ գործով պարապել օգնում էր իւր սիրելի որդուն:

— Հայրիկ, ասաց Յովհաննէսը մի անգամ, երբ նոքա բոլորը նստած էին անտառի մօա գտանուող կանաչ մարգագետնի վերայ, հայրիկ, յօյսդ մի կտրիլ երբ իմ Տրաուզոտը վերագառնայ՝ մեր թշուառութիւնը կ'վերջանայ և մենք կ'ստանանք այնքան փող, որ այս տարի բոլորովին ապահովուած կ'լինինք: Քէպէտ Ցեկստինին անհաւատալի թուեց այս և Մարթան նոյնպէս շարժեց պլախը, բայց ամենքն ևս

Ձախ Յելեստինի տան մէջ թագաւորում էր, մինչև  
անգամ, անհրաժեշտ պիտոյքների պակասութիւն:  
Ողորմութիւն խնդրել Յելեստինը չէր կամենում և  
չէր թողնիլ ոչ կողջը և ոչ որդոցը. օգնութեան  
յօյս չունէր ոչ մի տեղից, խեղճ ընտանիքին մնում  
էր միայն Աստուծոյ վերայ յոյս դնել: Յովհաննէսը  
աւելի յաճախ ախ էր քաշում իւր Տրաուգոտի հա-  
մար, իսկ Յելեստինը և Մարթան սուրբ գլուխ էին  
միիթարվում իւրեանց նեղ զրութեան մէջ:

— Մենք այժմ նման ենք ագռաւի ձագերին,  
ասում էր երբեմն մայրը, մենք չենք ցանում և չենք  
հնձում, մենք ոչ ներբնատուն ունինք և ոչ շաեմա-  
րան, բայց որովհետեւ Աստուած կերակրումէ թրո-  
շուններին կ'կերակրի և մեզ. նա չի թողնիլ թշուառ-  
ներիս, որովհետեւ ինքը փրկիչը ասաց, որ մենք շատ  
անգամ լաւ ենք թուշուններից:

Եւ, յիրաւի, Աստուած միշտ օգնում էր, երբ  
նոցա թշուառութիւնը հասնում էր ամենավերին  
աստիճանի: Երբեմն Պ. Միլիկերն էր բերում մի որևէ է-  
րան, երբեմն դրացիներից մինը կամ գիւղի քահա-  
նան, մինչեւ անգամ մարդասէր րժիշտը. որ առող-  
ջացրեց հիւանդներին ուղարկում էր նոցա համար  
մի կազդուրիչ կերակուր: Այնու ամենայնիւ այս ա-  
մենը բաւականացուցիչ էին, ուստի Յելեստինը հա-  
մոզուեցաւ, որ պէտք է ձեռնարկել մի վճռական  
գործի. և այն զգացմունքը, թէ ինքը կերակրվում

անհամբերութեամբ սպասում էին Տրաուգոտի գա-  
լըստեամբ: Նոքա բաւականանում էին ամենահար-  
կաւոր պիտոյքներով միայն և չէին գանգատվում,  
երբ Կախաճաշին կամ Ճաշին ոչինչ չէին ունենում  
ուտելու բացի մի կտոր չոր և սև հացից: Հացը  
միայն նոցա շատ քիչ էր պակասում, որովհետեւ Յովհ-  
հաննէսը աշխատում էր հարկանների մօտ այնքան  
վարձով միայն, որքանով կարող էր գնել այդ մի կտոր  
սև հացը: Եւ երբ պատահում էր որ, մինչև ան-  
գամ, մի կտոր հաց էլ չէին ունենում՝ բաւականա-  
նում էին նոքա կովի և այծերի կաթով և շնորհա-  
կալութեան աղօթքով պառկում էին քնելու:

— Ես շատ ցաւում եմ նորա համար, ասում  
էր երբեմն Յովհաննէսը, որ դուք զըկուած էք կազ-  
դուրիչ ըմպելիքներից: Եթէ ինձ չհաջողի ամենայն  
օր ճարել գեթ ապուր, դժուար թէ դուք ուժի  
գաք: Տայ Աստուած որ Տրաուգոտը շուտ վերա-  
դառնայ:

Այս էր լինում միշտ Յովհաննէսի խօսակցու-  
թեանց վերջին խօսքը, բայց նա աւելի յաճախ էր  
մտածում Տրաուգոտի մասին:

Այսպէս անցաւ ամառը և սկսուեցան այն օ-  
րերը, երբ Յովհաննէսը աւելի քիչ կարող էր աշ-  
խատել: Հունձի ժամանակ նա կարող էր գործ կա-  
տարել կամ պէտք գալ, բայց կասելու և ուրիշ  
ծանր գործեր կատարելու համար նա չունիր ոյժ  
ու զօրութիւն. և այս էր պատճառը, որ շատ յա-

է : ուրիշների բարեգործութիւններով՝ նորան շատ  
ծանր էր և իւր պատուին դիպչող:

Ահա այս օրերն էին, որ մի երեկոյ մեր ընտա-  
նիքի բոլոր անդամները նստել էին անտառում մի  
տերևախիտ տիշխայի (ծառ) տակ: Այս ծառի տա-  
կով անցնում էր մի փոքրիկ ճանապարհ, որտեղեց  
այն ժամանակ ոչ չէր անցնում և որի վերայ մեր  
բարեկամները շատ քիչ էին ուշք դարձնում: Արդէն  
վաղուց եկել էր աշունքը: Անտառը հանել էր իւր  
ամառային կանաչ զգեստը և ընդունել ոսկեգոյնը,  
տերեները թափում էին ծառերից. թռչունների  
ուրախ երգերը արդէն լսելի չէին, չկային թռչուն-  
ներ բացի ծառակակուտից, որի աղաղակը երեմն  
երեմն լսվում էր անտառի խորքից: Բնութեան  
լութեանը համապատասխանում էր և այս ընտա-  
նիքին տիրող լռութիւնը: Յելեստինը տիրած թէքն  
էր ընկել, Մարթան, նստած նորա մօտ, քաշ էր զցել  
պուխը և նայում էր գետին. Գուրերտն ևս յա-  
ճախ ախ քաշելով նայում էր դատարկ ամանին և  
մինչև անգամ Յովհաննէսը, որ սովորաբար ամենից  
ամելի ուրախ էր և աւելի յոյս ունէր տպագայի վե-  
րայ չէր կարողանում այսօր պահպանել իւր առա-  
ջուայ հաստատութիւնը:

Երեխոյք, ասաց վերջապէս Յելեստինը, մեզ  
այլ ոչինչ չե մնում, բայց եթէ անել մի դժուար  
քայլ որ գոնէ առ ժամանակ վերջացնէ մեր թշուառ-  
ութիւնը: Մենք երբէք այսպէս թշուառ և այն-

պէս անօդնական չենք եղել ինչպէս այժմ և եթէ  
այս շարունակուի մենք քաղցից կ'մեռնենք: Ողոր-  
մութիւն խնդրել մենք չենք կամենում: Պ. Միլդերն  
այլ ևս չէ կարող մեզ օգնել, մեր դրացիներն էլ մեզ  
նման թշուառ են—ահա այս պատճառով մենք պէտք  
է վճռենք անել այն ինչ որ ինձ շատ դժուար է  
յայտնել:

Բոլորն ևս այնպիսի ուշագրութեամբ էին լսում  
Յելեստինի խօսքերը, որ չ'լսեցին այն թեթև ձայնը,  
որ մօտենալով նոցա ընդհատուեց տիլիայի յետեւը:

Յելեստին, հարցրեց Մարթան ցածրաձայն, ոի-  
րելի Յելեստին, ի՞նչ է քո դիտաւորութիւնը, ասա,  
համարձակ, թէպէտ և ասելը քեզ ծանր լինէր. չէ  
որ հարկաւոր է մի բան անել այս սպանացող կո-  
րուստից ազատուելու:

Ա-ի, Մարթա, այս ինձ շատ դժուար է  
ասել և միանգամայն ծանր, շարունակեց հայրը, ես  
այժմ բաց'ի կովը ծախելուց ուրիշ միջոց չգիտեմ  
թշուառութիւնից ազատուելու:

— Ո՛չ, Աստուած իմ, բացագանցեց Մարթան,  
ծախել այդ հեզ անսատնը, որ այսքան երկար ժա-  
մանակ կերակրել է մեզ իւր կաթնով. և դու, Յելես-  
տին, յիրաւի, ուզում ես ծախել:

Հայրը տիրութեամբ շարժեց գլուխը. պի՞նչ  
պէտք է անել հարցրեց նա, կարելի է նորան 17  
կամ 18 տալեր տան, որովհետեւ նոս կաթու է և  
այս գումարով կ'անցկացնենք ձմեռը մի կերպով:

— Իսկ Զմեռուայ անցնելոց յետոյ, սիրելի հայրիկ, ի՞նչ պիտի անենք, հարցրեց Գուբերտը:

— Ե՛հ, այն ժամանակ կ'մասձենք: Եթէ Աստուած մեզ մինչև այն օրը կեանք տայ և պահէ նորանից յետոյ ել չի թողնիլ, նորա վերայ պէտք է մեր յոյսը դնենք, երբ միւս բոլոր յոյներս խառում են մեզ:

— Հայրիկ, ասաց Յովհաննէսը, եթէ կարող ես միքանի օր համբերել համբերիր, խնդրում եմ, որովհետեւ այս միջոցում, շատ կարելի է, վերադառնայ Տրաուգոտը: Նա կովի գնից աւելի փող կ'բերի մեզ համար: Զէ՞ որ նա խոստացաւ վերադառնալ:

Հայրը կրկին շարժեց գլուխը, իսկ մայրը ասաց՝ իմ սիրելի Յովհաննէս, եթէ Տրաուգոտը գալ կամենար, նա մինչև այժմ արդէն եկած կ'լինէր: Ես չեմ ուզում Տրաուգոտի պատուին դիպչել բայց ես կարծում եմ, որ, երեի, նա քեզ հետ կատակ է արել կամ դատարկախօսութիւն:

— Ու ոչ, սիրելի մայրիկ, դու Տրաուգոտի պատուին դիպչում ես, աւելացրեց Յովհաննէսը տաքացած: Նա այնպիսի հաւատարիմ և բարի մարդէ, որպիսին ամբողջ աշխարհում չես գտնիլ. նա այնպիսի պատուական երիտասարդ է, որ իւր կեանքում ոչ ոքի չէ խաբել, եթէ դու նորան ինձ պէս ճանաչէր, շատ կարելի է, դու նորան աւելի գնահատէիր: Եթէ նա չվերադառնայ ես գլուխս կ'կտրեմ:

Տիկիայի յետել կրկին մի բան շարժուեց, երբ

Յովհաննէսը այսպէս տաքացած պաշտպանում էր իւրներկայ բարեկամին, բայց ոչ ոք ուշադրութիւն չ'դարձրեց սորա վերայ:

— Այսուհետեւ, ասաց Ցելեստինը, Տրաուգոտը յիրաւի, պատուական երիտասարդ է, նա կ'վերադառնայ, եթէ Ճանապարհին մի որ և է բան արգելք չ'լինէր նորան: Այս կարող է պատահել և շատ հաւանական է, որովհետեւ ես չեմ կասկածում նորաբարեկամութեան և սիրոյ մասին դէպ'ի մեր Յովհաննէսը: Ցաւալի է, Մարթա, որ դու չ'զիտես թէ երկու բարեկամները ինչպէս էին սիրում միմեանց: Ոչ, նա չէր խարիլ մեր Յովհաննէսին և ի՞նչ նպատակով պիտի խարէր:

Դի հարկ է, աւելացրեց Մարթան քաղցրութեամբ, ոչ ոք ինձանից աւելի չի ցանկանում աւելի մօտիկ ծանօթանալ նորա հետ, որովհետեւ ես նորան, ինչպէս և մեր սիրելի Յովհաննէսին, սաստիկ անարգել եմ:

— Այդ մի ասիլ սիրելի մայրիկ, ասաց Յովհաննէսը, չէ՞ որ դու ինձ հազար անգամ աւելի ես վարձատրել դորա փոխանակ: Այս բոպէից, երբ դու ինձ սիրեցիր և երբ իմ բարի Գուբերտը սրտով կապուեցաւ ինձ հետ՝ ես ինձ այնքան բաղդաւոր եմ զգաւմ, որ խօսքով ասել չեմ կարող:

Հայրը միքանի բոպէ, կարծես, մոռացած իւր թշուառութիւնը քմծիծաղ դէմքով նայում էր կնոջը, որ այժմ արդէն սրտանց սիրում էր իւր

խորթ—որդուն, բայց յետոյ փոքր ինչ մտածեց և հարցրեց. ասացէք, տղերք: Ի՞նչ անենք, կովի ծախելը միքանի օր յետաձգենք, թէ հետո այս լոպէիս ծախենք:

— Ոիրելի՛ հայրիկ, սպասենք էլի միքանի օր, ասաց Յովհաննէսը: Այս ժամանակամիջոցում անպատճառ կ'վերադառնայ Տրառոգօտը, որի հետ կ'վերջանայ ևմեր թշուառութիւնը:

— Եթէ Յովհաննէսի ասածը ուղիղ լինէր, ասաց մայրը ժպտելով, եթէ որ Տրառոգօտը Յովհաննէսի թռչունների համար ստունար բաւականին փող, մենք այլ ևս ոչնչով չէինք պարապիլ, եթէ ոչ թռչորսութեամբ և թռչուասոյցութեամբ:

Ի հարկ է, սիրելի մայրիկ, բացագանչեց Յովհաննէսը ուրախութեամբ: Էս այդ փաղուց արդէն վճռել եմ և եթէ դուք ինձ օգնէք՝ գործը շատ լաւ կ'երթաց: Երբ ես և Տրառոգօտը տանենք ծախելու մեր թռչունները՝ դուք, մանաւանդ Գուրենտը, կարող եք գնալ թռչունների բռներ գտնելու և կերակրելու տանը մնացածներին: Իսկ ձմեռը կ'պարապիմ թռչուասոյցութեամբ և միւս տարի կրկին կ'տանեմ ծախելու, այսպէս կ'շարունակուի իմ արհեստը և կարելի է որ.... բայց ոչ, մեզ այդպիսի բաղդաւորութիւն չէ սպասում:

— Ի՞նչ բաղդաւորութիւն, հարցրեց հայրը,

— Կարելի է Տրառոգօտը իւր ընտանիքի հետ տեղափոխուի, մեզ մօտ, այն ժամանակ մենք միա-

սին կ'ապրենք և մի ընտանիք կազմելով կ'օգնենք միմեանց: Ա՝ իս, ինչպէս ուրախ կ'լինէի: Այն ժամանակ մեր առետուրը աւելի կ'ընդարձակուի և չըխկան տալերներ կ'թափուին երկնքից:

Տիլիայի յետել կրկին մի բան շարժուեց և յանկարծ, ինչպէս երկնքից, մի փայլուն ոսկի տաւելը ընկաւ Մարթայի գոգնոցի վերայ:

— Հա, հա, հա, այ, արդէն տալերները թափվում են երկնքից, բացագանչեց Գուրենտը ծիծաղելով:

Յելեսախնը զարմանքից շարժեց գլուխը. Իսկ Յովհաննէսը ուրախացած ոսկի կանգնեց և փաթաթուեց Տրառոգօտին, որ ուրախութեամբ և հրճուանքով գուրս եկաւ Տիլիայի ետեից:

— Իմ սիրելի, իմ բարի Յովհաննէս, բացագանչեց Տրառոգօտը, իմ սրտակից, իմ գեղեցիկ, ահա էլի ես եկայ:

Նա իւր բարեկամին սեղմեց քնքչութեամբ իւր կրծքին: Նոքա այնպէս ամուր փաթաթուեցան միմեանց, որ Ցելեստինին թռւեց թէ նոքա այլ ևս չեն բաժանուիլ: Ցելեստինը, Մարթան և Գուրենտը զարմացած նայում էին երկու երիտասարդների վնասյ, որոնք այնպէս սնկեղծ սիրում էին միմեանց:

— Ի՞նչպէս ուրախ եմ քեզ կրկին տեսնելուա համար, դու առողջ և ուրախ ես երեւում, բացագանչեց Տրառոգօտը ու զղելով իւր հայեացքը Յով-

հաննէսին, դու գեռ ևս ինձ սիրում ես, իմ բարեկամ, ինձ դեռ չե՞ն մոռացել:

— Մի օր չեր անցնիլ, որ քո Յովհաննէսը չ' յիշէր քեզ, հէսց այժմ էլ քո մասին էինք խօսում, պատասխանեց Յովհաննէսը:

— Ես այդ բոլորը լսեցի, իմ բարեկամ, բոլորը, աւելացրեց Տրաուգոտը ժպտելով: Ես լսեցի թէ ինչպէս դու պաշտպանում էիր բարեկամիդ: Ես այն բոպէին այնքան ուրախացայ, որ քիչ մնաց թէ աղաղակէի: Այժմ, Յովհաննէս, մենք պէտք է դառնանք դէպի հայրիկդ, մայրիկդ և դէպի Գուրեթրաոր, աւելացրեց նա, եթէ ոչ նոքա կ'բարկանան:

— Ո՛չ ո՛չ նոքա չեն բարկանալ, պատասխանեց Յովհաննէսը, նոքա երկուսի էլ շատ են սիրում:

— Գիտեմ, գիտեմ, ասաց Տրաուգոտը Մարթային և միւսներին բարեկելով:

— Բարե ձեզ, ասաց նա իւր սովորական ձեռվ և իւրաքանչեւրին ձեռք տուեց, ես շատ ուրախ եմ որ ձեզ առողջ եմ տեսնում:

— Մենք նոյնպէս շատ ուրախ ենք, Տրաուգոտ, ասաց Յելեստինը ամուր սեղմելով Եվարցվալդու ձեռքը, մենք վաղուց է անհանգիստ էինք ուշանալուդ համար:

Մարթան մինչեւ անգամ ձեռք տուեց ճշմարտախօս Նվարցվալդուն և ասաց միքանի քաղցր

խօսք: Միայն Գուրեթրաը չեր համարձակվում առաջ գալ այլ ամօթից կարմրած մի կողմ էր քաշուել: Տրաուգոտը շատ լաւ գիտէր թէ ինչո՞ւ է նա ամաչում: որովհետեւ նա միտն էր բերում այն փատութիւնը, որ ինքը արելէր Յովհաննէսին: Բայց Տրաուգոտը չ'բարկացաւ, նա ծառի յետել կանգնած ժամանակ տեսել էր, որ այս բոլորը ներուած և մոռացուած են: Սորա համար նա ժպտելով մօտեցաւ երեխային, բարձրացրեց և համբուրելով ասաց: Ինչո՞ւ ես այդպէս կարմրել և ամաչում: դու, երեխ, միտդ ես բերում անցեալ գարունը և քո բաց թռղած թռչունները: Հանգստացիր և մի՛ լար, չէ՞ որ բոլորը ներուած և մոռացուած են, այնու ամենայնիւ ես մի քաակ ոսկի եմ բերել Յովհաննէսի համար: Հապա նայիր:

Տրաուգոտը ձեռքը գրապանը տարաւ և հանեց մի բաւականին մեծ կաշեայ քաակ լիքը փողով: Տեսնում ես, ասաց նա ծիծաղելով, այս բոլորը կարմը բալաջներն և զեղձանիկներն են, որ ըրիկան ոսկի են գարձել: Դու չես հաւատալ, Յովհաննէս, թէ ինչ բան պատահեց թռչուններին: Բայց առաջ առաջ արձաթեայ թռչունները, յետոյ կ'պատմեմ թէ այս արձաթեայ թռչունները, յետոյ կ'պատմեմ թէ ինչպէս ծախեցի քո թռչունները: Բաց, հապա գրուպանդ:

— Մայրիկին տուր, Տրաուգոտ, ասաց Յովհաննէսը, այդ բոլորը նորան և հայրիկին է պատկանում:

ինչպէս կամենաս, իմ բարեկամ, մեծ ուրախութեամբ: Մօրաքօյր, (Մարթային) բռնիր գովնոցդ, այս արծաթեայ թռչուններից մինը, կարծեմ, այդտեղ թռաւ, արդէն միւ մներն էլ կամենում են թռչել:

Մարթան բռնեց գովնոցը և ըրխկան տալերները, ինչպէս անձրև, թափուեցան բացուած քսակից:

— Եօթանասուն արծաթեայ տալեր, ուրախութեամբ բացագանցեց Տրաուգոտը:

— Տէր Սատուած, և զու այս բոլորը Յովհաննէսի թռչուններով ես Ճարել, Հարցրեց Մարթան, որի աչքից ուրախական արտասուքի կաթիլներ էին թափում:

— Բոլորը, այս բոլորը քո թռչուններով, ասաց Տրաուգոտը, դառնալով դէպի իւր բարեկամը:

Յովհաննէսը կրկին փաթմաթռեց նորան, Գուրերտը Համբուրեց նորա ձեռները, Մարթան արտասուախան ժպանց, իսկ Յելեատինը վերցնելով զըւխարկը զլիսից չռքեց և ակսեց աղօթել: Երբ միւնները այս տեսան՝ հետեւեցին նորա օրինակին և կրկնեցին Յելեատինի դողդոչուն ձայնով արտասանած խոսքերը:

— Ամենակարող Ապուած, արտանց գոհ ենք քեղանից մեզ ցցց տուած ողորմութեանդ Համար՝ Դու ընտրեցիր մի անձանօթ մարդ, իրը միջոց միսիթարելու մեր դառնացած սրտերը և ուղարկեցիր քո առաքեալը հետու երկրներից, ողորմութիւնդ տարածելու մեզ վերայ: Եւ այն ինչ որ մեզ բոլորիս

ատելի էր, քո ամենակարող կամքի համաձայն, եղաւ մեր փրկութեան միջոցը: Գոհ ենք քեզանից, Տէր, այժմ և միշտ:

Բոլորն ևս սասափիկ սրտաշարժուած էին, ուստի բաւական ժամանակ լուռ մնացին, իսկ յետոյ կրկին սկսուեցաւ նորանց ուրախութիւնը: Բոլորն ևս նոյնպէս ուրախ էին, որ կարծես երբէք այդպիսի ուրախութիւն չէր պատահէլ իրանց, որւգիշետե Աստուած տեսանելի կերպով օգնութիւն հասաւ իրանց այն ժամանակ, երբ նոքա ազատութեան ոչ մի միջոց չունէին:

— Ես, մանաւանդ, ուրախ եմ նորա համար, ասաց վերջապէս Յովհաննէսը, որ այժմ կարող եմ վատոյժ ծնողներիս և Գուրերտի Համար կազդուրիչ կերակութիւնը ձեռք բերել: Սա ինձ ամենամեծ ուրախութիւն է:

— Իմ սիրելի, իմ ազնիւ, իմ բարի Յովհաննէս, քեզ ենք սրարտական այս մեծ բաղդաւորութիւնը, քեզ՝ որ միշտ մեզանից անարգուած էիր: Քո փոքրիկ սիրելիները, որոնցով գու այնքան ուրախանում էիր և որի Համար մենք մինչեւ անգամ նախանձում էինք, աղատեցին այժմ մեզ այս սարսափելի թշուառութիւնից և քո Հաւատարիմ բարեկամը, որին մենք այնպէս անարգեցինք, փոխանսկեց մեր անարգանքը բարեգործութեամբ: Ի՞նչ կերպով կամ Ե՞րբ արդիօք կարող ենք նորա փոխարէնը Հակոցանել:

Յովհաննէսը փաթաթուեց մօրը և համբուրելով նորա շրթունքները չթողեց շարունակելու:

Ոչ մայրիկ, սիրելի մայրիկ, մի ասիլ այդ, թէ չես կամենում ինձ տրտմեցնել բացազանեց Յովհաննէսը: Աստուծոյ գործն է այս ամենը, նորանից պէտք է շնորհակալ լինել և մոռանալ միւս բոլորը:

—Միայն քո ճշմարիտ սկրը չպէտք է մոռանալ, իմ որդիս, ասաց մայրը ցածրաձայն, որ բացի Յովհաննէսից ոչ ոք չիմանայ, իսկ վերջինը շնորհակալութիւն յայտնեց նորան իւր քաղցր հայեաց քով:

—Այժմ, Տրառուզու, խնդրենք, պատմիր, թէ ի՞նչ կերպով ճարեցիր այսքան փող ասաց Ցելեստինը, ես դեռ ևս չեմ կարողանում հասկանալ:

—Այդ ոչի՞նչ այդ հեշտ է պատմել: Ես լաւ գիտէի, որ Յովհաննէսի թռչունները ամենալաւերն են և թէ նորանց պէտք է ծախել Փարիզում, որովհետեւ այնտեղ լաւ գին են, տալիս: Կրր Փարիզ հասայ և սկսայ մանգալ տնից տուն՝ փողոցում պատահեցի մի սիրուն, մորուսաւոր մարդու. Նա ինձ հարցրեց գերմաններէն թէ ի՞նչ կայ արկղումդ: Ես պատասխանեցի: Նա իսկոյն կանգնեց և ես ցոյց տուի թռչուններիս հմտութիւնը: Պարոնը շատ ուրախացաւ և ասաց որ հետեւեմ իրան: Ճանապարհին ամենքը նորան խորը զլուկս էին տալիս, թէ աստիճանաւորները և թէ քաղաքացիք, ուստի ես կարծեցի թէ սա պէտք է կամ նախարար լինի կամ

մի այլ նորա նման պաշտօնատար, վերջապէս մենք կայսերական պալատը հասանք. Ներս մտանք և անցնելով բազմաթիւ մինը միւսից գեղեցիկ սենեակներով վերջապէս հասանք մի ամենագեղեցիկ սենեակ, ուր մի բարձրահասակ տիկին էր նստած իւր որդու հետ, որ խաղում էր այնտեղ: Ես երեխային ցոյց տուի բոլոր թռչուններս և գուք կարող էք երեակայել թէ ի՞նչքան ուրախացաւ նա: Գեղեցիկ տիկինը մօտեցաւ մեզ, իսկ պարոնը ժպտեց: Ամենքից շուտ, Յովհաննէս, երեխան քո թռչուններին հաւասնեց. ես այս առաջուց գիտէի և շատ ուրախացայ:

—Կամենում ես, որ սոքա քունը լինին, հարցրեց պարոնը երեխային:

—Այո, այո, հայրիկ, բացազանչեց երեխան և փաթաթուեց հօրը:

—Այս բոլորն ի՞նչ արժէն, հարցրեց պարոնը: Այս մարդը, երեխ, շատ հարուսա է, մտածեցի ես սա կարող է ինձ լաւ վարձատրել, ուստի ասացի թէ քո թռչունները, Յովհաննէս, արժեն 70 տալեր իսկ իմ թռչունները, որոնցից արդէն լաւերը ծախել էի, արժեն 30 տալեր: Պարոնը իսկոյն տուեց ինձ հարիւր տալեր: Ես շնորհակալութիւն յայտնեցի եւ դուրս եկայ: Ես այնքան ուրախ էի, որ փողոցը գույք գալուս պէս, սկսեցի խելագարի նման վեր թռչիլ:

—Բայց ո՞վ էր այդ բարի պարոնը, հարցրեց Յովհաննէսը հետաքրքրութեամբ:

—Հապա իմացիր, հարցրեց Տրառուզու ժըդ-

տեղով, բայց աւելի լաւ է ես ասեմ; դու երբէք չե՞  
կարող իմանալ: Սա կայսրն էր և ինքը ֆրանսիաց։  
ուստի կայսրը յետոյ գիտէք ինչ նա ամենայն  
տարի պէտք է երգիչներ գնէ ինձանից։

— Կայսրը, բացազանչեցին ամենքը զարմանա-  
լով և դու, Տրաուզոս, խօսեցիր կայսեր հետ։

— Այս, առաջ նվարդվաղցին և նա ինձ հետ  
շատ լաւ վարուեց։

Ամենքը վարմացան Յովհաննէսին նայելով, որին  
կարծեա մի գերբնաբնակ բան պատահեց։

— Եփող տարի կայսն ինձ հետ էլ կ'խօսի, ու-  
րախութեամբ բացազանչեց Յովհաննէսը, չէ՞ որ ես  
էլ Փարիզ պիտի գնամ, եթէ Տրաուզոտը տանի։

— Այդպէս է, այդպէս, բայց նախ քան այդ  
մենք մի կարծ ճանապարհորդութիւն անենք, առաջ  
հայրը ժպտելով նոյեցէք, տղերք, արդէն արեւը  
մայր է մաել, որը մթնում և տրտմումէ հետզետէ,  
առելի լաւ է առւն գնանք և այնտեղ խօսենք: Բո-  
լորն ևս վեր կացան և տուն վերադառն, ուր  
գտնան Պ. Միլդերին։ Նոքա պատմեցին նորան իւ-  
րեանց բաղբաւորութիւնը, որի վերայ նա ևս չու-  
փազանց ուրախացաւ։ Մինչև կէս գիշեր շարունա-  
կուեցաւ նոցա խօսակցութիւնը Ամենքի սրանը լի-  
էին գոհութեամբ ամենարարձեալց։ Յելեսինի  
թշուառութիւնը վերջացաւ։ Ամենքի համաձայնու-  
թեամբ վճռուեց, որ Յովհաննէսը այնուհետեւ թըռու-  
նուսուցութեամբ պարապիր Պ. Միլդերն ևս հաւա-

նոց այս վճռին, իսկ Յարթան ամենենին չ'հակա-  
ռափեց։

— Եցրէք այժմ տունը թռչուններով և վան-  
դակներով և ես ուրախութեամբ կ'համաձայնեմ, ե-  
թէ մարդիկ այս փոքր թռչունների համար տալիս  
են այսքան փող. յիմարութիւն կ'լինի իմ կողմց,  
եթէ ես հակառակեմ։

Գուբերնուր նոյնպէս համաձայնեց օդնելու, իսկ  
Յելեսինինը յանձն առաւ ամենայն օր կերակրելու  
թռչուններին։

Այսպէս ամենայն բան կարգի ընկաւ. Յով-  
հաննէսի ցանկութիւնն էր մնացել անկատար—նա  
ուզում էր, որ Տրաուզոտը իւր խոսաման համաձայն  
իւր ընտանիքով տեղափոխուի իւրեանց հովիտը,  
ուստի առաւատը խօսք բացեց առա մասին։

— Այժմ ի՞նչ ես ուզում անել, Տրաուզոտ,  
առաջ Յովհաննէսը, որ կ'զառ քո ընտանիքով մեն-  
չետ ապրելու և միասին պարապելու թռչունուոյ-  
ցութեամբ, չ՞։

Տրաուզոտը փոքր ինչ մոտածեց և զլուխը շար-  
ժելով ասաց. ես շատ ուրախ կ'լինէին, բայց չէ՞ որ  
չէ կարելի։

— Ինչո՞ւ, հարցրին բոլը միաձայն։

Արովհետեւ, առաջ ծշմարտախօս նվարդվաղցին,  
Յովհաննէսը ամելի ընդունակ է թռչունուցութեան  
մէջ, նորան վեաս կ'լինի եթէ ինձ հետ ըսկեր գառ-  
նայ, իսկ ես չեմ ուզում որ նա վեասուի։

— Ինչպէս, հարցրեց Յովհաննէսը ժպառլով  
ևս ումնից սովորեցայ այս ամենը, ով էր իմ ուսուցիչը, եթէ ոչ դու: Եթէ ես ընդունակ եմ թռչուսոցութեան մէջ, դու փորձուած ես վաճառելու մէջ, ուրեմն մենք շատ կ'աշխատենք, եթէ մեր ջանքը միացնենք միմեանց հետ:

— Այդ ուղիղ է, ասաց Տրառուգօտը, այդ եւ չէի մտածում: Ուրեմն վճռուած է: Մինչև ձմռան գալը, մենք արդէն ձեզ մօտ կ'լինինք և ես կ'բերեմ հետ այն թռչուններին, որ եղայրներս իմ բացահայտթեան ժամանակ բռնել են:

Բոլորն էլ այս բանի վերայ շափազանց ուրախացան, բայց ամեքից աւելի մեր Յովհաննէսը, որ մտածում էր այն օրուայ ուրախութեան մասին, երբ ինքը այնուհետև անբաժան կ'լինի Տրառուգօտից:

Այստեղ ահա կ'կնքենք մենք պատմութիւնը մեր թռչնորսների մասին և միայն կ'ասենք որ Տրառուգօտը կատարեց իւր խօսքը և ձմեռուայ գալուց առաջ տեղափոխուեց իւր ընտանիքով այս հովիտը, բերելով իւր հետ բոլոր իրեղնները: Նա Ցելեստինի խրճիթի մօտ գնեց մի այլ խրճիթ, ուր և տեղափոխուեց: Նրկու ընտանիքը շուտով բարեկամացան և միասին սկսեցին ապրել թռչուններ սովորեցնելով, որոնց գարնանը Տրառուգօտը և Յովհաննէսը տարան ծախելու Փարիզ և այլ քաղաքներ: Յովհաննէսը, իւր այս ճանապարհորդութիւնից առաջ, շինեց մի ամենալաւ վանդակ: և դնելով նորա մէջ ամենալո-

աիր դեղձանիիկ տարաւ մերձակայ քաղաքում բնակուող մարդասէր բժշկին, որ ազատել էր իւր ընտանիքը մահից: Բժիշկը ուրախութեամբ ընդունեց այն՝ 'ի նշան չնորհակալութեան Յովհաննէսի կողմից, որին նա արդէն Ճանաչէլ էր նորա ծնողաց հիւանդութեան ժամանակ և սրտանց սիրել էր:

Տրառուգօտը Նպեցլին և Յովհաննէս Վագները այլ ես չ'բաժանուեցան միմեանցից, այլ աւելի սերտ կապերով կապուեցան միմեանց հետ, երբ Յովհաննէսը ամուսնացաւ Տրառուգօտի քրոջ հետ: Նոցագործը շատ ծաղկեց, նոքա աշխատեցին շատ փող, թէպէտ միշտ բաժանում էին միմեանց մէջ: Մինչև այժմ նոքա ապրում են Ֆրիդինսրոդէ գիւղում և եթէ քեզ, սիրելի մանուկ, կ'պատահի այստեղ երթալ, ուշադրութիւն դարձրու այն գեղեցիկ տան վերայ, որ շինած է բարձր բլըի զլինին և որի պատուհաններից երեւում է ամբողջ հովիար: Տրառուգօտը և Յովհաննէսը շինեցին այս տունը իւրեանց փողով: Եւ եթէ դուք հարցնէք նոցա մասին, բոլոր ընակիչները կ'պատմեն ձեզ նոցա արդիւնաւոր կեանքի բոլոր դէպքերը:

Աշխատեցէք որ կարելի լինի ձեր մասին ևս միևնոյնը պատմել:



## ՑՈՒՑԱԿԻ

Այս գլուխի յարգելի ստորագրուողների անուանց:

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

	Օրինակ
1. Մինաս քահանայ Տէր-Գետրոսեան.....	2
2. Յարութիւն Ամրջանեանց.....	1
3. Վրժանէ քահանայ Տէր-Գէորգեանց.....	1
4. Մակար Տէր-Մարգսեանց.....	2
5. Պետրոս Տէր-Գետրոսեանց.....	1
6. Պօլկովսիկ Հովհաննէս Տիգրանեանց.....	5
7. Օր. Աշխէն Բաղվիրանեանց.....	1
8. Սարիբէզ Տէր-Մելքիսեդէկեանց.....	1
9. Մելքիսեդէկ քահանայ Մանուկեանց.....	1
10. Մարտիրոս քահանայ Տէր-Պօղոսեան.....	1
11. Նազարէթ Նուլսանտեանց.....	1
12. Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանց.....	2
13. Գրիգոր Քեօսաբոզյեանց.....	1
14. Հածիրար Իսպիրեանց.....	1
15. Ատովմ Աբոյեանց.....	1
16. Յակովը Տէր-Պօղոսեանց.....	1
17. Գրիգոր Զոլախեանց.....	1
18. Արսէն Բաղդասարիեանց.....	1
19. Մկրտիչ Մանուսածեանց.....	1
20. Նազարէթ Փէշտըմալձեանց.....	1

21.	Օր.	Արաքսէ Պահլաւունի.....	1
22.	Յարութիւն մահտեսի Աւագեանց.....	1	
23.	Մահտեսի Սիմէօն Բարսամեանց.....	1	
24.	Աղնուական Արշակ Տիգրանեանց.....	2	
25.	Արամ Մատակեանց.....	3	
26.	Երուանդ Հասան-Զալալեանց.....	1	
27.	Մկրտիչ Բաբաջեանց.....	1	
28.	Մայիօր Թադէոս Տիգրանեանց.....	2	
29.	Սիմէօն Թումանեանց.....	1	
30.	Գուրելինսկի սեկրետար Աղաբէդ Տիգրանեանց	2	
31.	Երեսփ. Ն. Կոստանեանց.....	2	
32.	Աղաբէկ Յովհանջանեանց.....	2	
33.	Մկրտիչ Կոստանեանց.....	4	
34.	Աղաբէկ Ամիրեանց.....	1	
35.	Աղէքսանդր Սիմէօնեանց.....	2	
36.	Աղէքսանդր Միհիթարեանց.....	1	
37.	Մկրտիչ Խաչակեանց.....	1	
38.	Վարոս Գեօնջեանց.....	2	
39.	Գրիգոր Պապեան.....	3	
40.	Հայրապետ Ղուկասեանց.....	3	
41.	Աղաբէդ Արշակունի.....	2	
42.	Ա. Խանջատեանց.....	2	
43.	Յովհաննէս Արգարեանց.....	2	
44.	Գէորգ Մանուկեան Սանոյիանց.....	1	
45.	Միքայել Միրզայիանց.....	1	
46.	Յովհաննէս Սահրատեանց.....	2	
47.	Աբխոզոմ Յովհաննիսեան.....	4	

48.	Եղբարք Արաբաջեանց.....	3
49.	Մկրտիչ Տէր-Դաւթեան.....	3
50.	Սարգիս Առաքելեանց.....	1
51.	Խաչատուր Խաչակեանց.....	1
52.	Վաղարշակ Սահրատեանց.....	1
53.	Յարութիւն Սահրատեանց.....	3
54.	Մտեփաննոս Չոլախեանց.....	1
55.	Միքայել Ռափայէլեանց.....	1
56.	Նիկողայոս Կարապետեանց.....	2
57.	Օր. Պասապեանց.....	1
58.	Սիմէօն Խոյիցեանց.....	1
59.	Արշակ Սառաջեանց.....	1
60.	Վաղարշակ Յակովլեանց.....	1
61.	Խաչատուր Սիրեկանեանց.....	1
62.	Պետրոս Հայկազունի.....	1
63.	Սողոմոն Աղամեանցին (Նուէր Հայկազունուց)	1
64.	Աղէքսանդրապօլու Հայոց երկսեռ Դպրոցներին Նուէր Հայկազունուց.....	4
65.	Բագրատ Հայկազունի.....	1
67.	Աղէքս. Սահականուշեան օրիորդական դպրոցին Նուէր Պասապեանցից.....	2
68.	Յովհաննէս Լալայեանց.....	3
69.	Արշակ Տէր-Պաղարեան.....	2
70.	Աղէքսանդր Քուփալեանց.....	1
71.	Օր. Սովիս Սանոյեանց.....	1
72.	Կոստանդին Մելիք-Ադամեանց.....	1
73.	Ռուբեն Մելիք-Ադամեանց.....	2

74.	Ամիկողայոս Տիգրանեանց	1
75.	Սէթ Բարայեանց	3
76.	Գէորգ Աղէքսանդրեանց	1
77.	Յովհաննէս Խոջայեան	1
78.	Աղաբէդ Մահտեսի Բաղտասարեանց	1
79.	Երուանդ Նալպատեանց	1
80.	Կոստանդին Բաղրամեանց	1
81.	Տիգրան Թումանեանց	1
82.	Արաէն Յովհաննիսեանց	1
83.	Նիկողայոս Ռափայէլեանց	1
84.	Յարութիւն Փիփոյեանց	1
85.	Մատթէոս Բաղրամեանց	1
86.	Կարապետ Տէլ-Գաւթեանց	1
87.	Մի Հայ	1
88.	Յովհաննէս Յակովեան Վարդանեանց	1
89.	Վաղարշակ Պալասանեանց	1
90.	Աղէքսանդր Դրամբեան	2
91.	Կարապետ Տէլ-Գաւթեանց	1
92.	Յովհաննէս Խաչատուրեանց	1
93.	Ստեփաննոս Դիլանեանց	2
94.	Յովհաննէս Սիմեօնեանց	1
95.	Յարութիւն Տէլ-Մարգսեանց	1
96.	Գէորգ Աղսախալեանց	1
97.	Մնացական Բուտումեանց	1
98.	Գրիգոր Աղսախալեանց	1

99.	Թադէոս աւագ Քահանայ Բուղաղեանց	5
100.	Խորէն Քահանայ Միրզաբէգեանց	1
101.	Եղիսաբէթ Գրիգորեանց	1
102.	Խանում Տէլ-Յովհաննիսեանց	1
103.	Կարապետ Լալայեանց	3
104.	Սերգէյ Վարշամեանց	1
105.	Գրիգոր Այվազեանց	3
106.	Աւագ Գրիգորեանց	1
107.	Միքայէլ Տէլ-Յովհաննիսեանց	1
108.	Յովհաննէս Բաբախանեանց	1

ԶԱՐԱԹՈՒԱԾ

109.	Յովհան Աւագ Քահանայ Ատովմեանց	1
110.	Վարդան Յարութիւնեանց	1
111.	Մարիամ Արտեմեան Յարութիւնեանց	1
112.	Նիկոլայ Տերէ-Կազարյան	1
113.	Աշակերտ Յ-դ Գասատան Զաքաթալու ու- սումնարսնի Ստեփիան Նիկանեանց	1
114.	Թուման Եաղուբեանց	1
115.	Բիշվարթ Զուլեջանեանց	1
116.	Կարապետ Նանումեանց	1
117.	Մամուէլ Ղունեանց	1

ՇՈՒԱՎԵՐ

118.	Աստուածատուր Նալբանդեանց	1
119.	Սարգիս Մեհրաբեանց	1

120.	Մկրտիչ Մխիթարեանց	1
121.	Յարութիւն Բաղմանեանց	1
122.	Վարդան Տէր-Պօղոսեանց	1
123.	Սիմէօն Պառաւեանց	1
124.	Յակով Տէր-Պօղոսեանց	1
125.	Միքայէլ Յարութիւնեանց	1
126.	Ի. Ի.	1


Տ Փ Խ Ւ Ա

127.	Պապոյ Սաֆարեանց	1
128.	Մդիւանեանց	1
129.	Պօղոս Քաթանեանց	3
130.	Աղէքսանդր Լազարեանց	1
131.	Ա. Ա.	1
132.	Աղէքսանդր Խուղավերդեանց	1
133.	Աղէքսանդր Խսավերդեանց	1
134.	Յարութիւն Գէորգեան Ղեռնդեանց	1
135.	Սարգիս Ղազարեանց	1
136.	Սիմէօն Սիմէօնեանց	1
137.	Գէորգ Շահմիկերդեանց	1
138.	Աղէքսանդր Քահանայ Վարդանեանց	1
139.	Սարգիս Տէր-Սարգսեանց	1
140.	Յովհաննէս Տէր-Միրաքեանց	1
141.	Գալուստ Մարտիրոսեանց	1
142.	Ներսէս Բաղդասարեանց	1
143.	Աւետիս Աղա-Միրզաեանց	1

144.	Արշակ Մելիքեանց	1
145.	Անդրէաս Խանդամիրեանց	1
146.	Յարութիւն Բէկլարեանց	1
147.	Ի. Զինգարեանց	1
148.	Ա. Ամիրխանեանց	1
149.	Մինաս Մարգարեանց	1
150.	Միքատ Խըզբաշեանց	1
151.	Յովհաննէս Խուղազեանց	1
152.	Կարապետ Շախ-Նազարեանց	1
153.	Գեղամ Տէր-Պետրոսեանց	1
154.	Մի Հայ	3
155.	Տ. Ե. Թ.	3
156.	Յարութիւն Առաքելեանց	1
157.	Մ. Մելիքեանց	3
158.	Մնացական Սարգսեանց	1
159.	Ա. Գօղալեանց	1
160.	Գրիգոր Շահումեանց	1
161.	Սարգիս Տէր-Գրիգորեանց	1
162.	Գրիգոր Հախնազարեանց	1
163.	Արտաշէս Մատինեանց	2

Ծանօթ. Որովհետեւ միքանի տեղերից ստորագրութեան ցուցակները չուղարկեցին մեզ իրան ժամանակին, այդ պատճառաւ չտպուեց յարգելի ստորագրուողների անունները:

11  
22  
33  
44  
55  
66  
77  
88  
99  
100  
111  
122  
133  
144  
155  
166  
177  
188  
199  
200  
211  
222  
233  
244  
255  
266  
277  
288  
299  
300  
311  
322  
333  
344  
355  
366  
377  
388  
399  
400  
411  
422  
433  
444  
455  
466  
477  
488  
499  
500  
511  
522  
533  
544  
555  
566  
577  
588  
599  
600  
611  
622  
633  
644  
655  
666  
677  
688  
699  
700  
711  
722  
733  
744  
755  
766  
777  
788  
799  
800  
811  
822  
833  
844  
855  
866  
877  
888  
899  
900  
911  
922  
933  
944  
955  
966  
977  
988  
999  
1000



Գինն է 40 ԿՈՊԵԿ

Դախուռում է Թիֆլիսում Պ. Զաք. Գրիգորեանցի  
գրավաճառանոցում:

Գումարով առնողներին զեջումն կլինի:

570

00038251

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004683

